

281(3)

U-43

281 (3)

✓

Ս-43. ՕՂ, ԶՈՒՄՆ

Գ Ի Բ Բ Ե Ղ Օ Թ Ի Ց

Դ պէտս առանձին աղօթողի:

ԽՕՍԻ ԸՆԴ ԵՍՏՈՒԾՈՅ:

3000

Արտահանեալ ՚ի գրոց խոստովանող սրբոց
Հարցն մերոց Եստուածաբանից:

Աշխարհընդհանրեմք Դաւիթ Առաքելեան Սերեբ-
բանեանց. Դարսիւսիւմալ յեօնն իսկոն. ըոր առաջ
Եւթեմոս, Օսրիւսեալ եօնն պարկեւոր:

17 Մարտի 1842

1085

Մ

Դ ՄՈՍԿՈՎ:

Դ Տպահարան Նիսիւսի Տէրաւարանի Երևանի:

1842

1079

УСЛѢДІЕ П. Е.
1952 №.

1758

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено
было въ Ценсурный Комитетъ узаконенное чис-
ло экземпляровъ. Москва. Марта 20 дня 1842 года.

Ценсоръ И. Снегиревъ.

6216

Յ Ե Ռ Ե Զ Ե Բ Ե Ն:

—


» Հաւատ առանց գործոց մեռեալ « ասի
'ի սուրբ զիրս: Որ հաւատոցաք յԱստուած՝ պարտիմք և զպատուիրանն պահպանել, Որովհետև զինուորեալ եմք ընդ դրոշակաւ Քրիստոսի՝ ոչ պարտեմք դաշնադիր լինել ընդ սատանայի: » Աղօթիւք պահօք և տրօք ողորմութիւն՝ փրկիմք 'ի մահուանէ, 'ի նեղութիւն, 'ի պէսպէս փորձութիւն, և 'ի մեղաց « ասէ սք զիր. ըստ որում մարդ եմք մեղանչական: Մի իցէ որ ոչ մեղիցէ, եթէ դարձցուք 'ի մեղաց՝ ըստ այնմ » զմեղս ատեցի և անարգեցի « զղջացեալ սրտիւ աղօթեսցուք առ տէր հաւատով, զոյ յոյս զի ընդունելի լիցին աղօթք մեր: Ապա եթէ որպէս բնական սովորուք միշտ աղօթեսցուք՝ և միշտ մեղանչեսցուք, խոստովա-

նեսցուք առաջի քահանայի՛ և կրկին ըն-
 նոյն մեղս գործեսցուք, ոչինչ ներգործեն
 աղօթք մեր, զի տկարացեալ եմք ՚ի հա-
 ւատոց, զանձինս մեր խաբեմք, ըստ այնմ՝
 »Թէ տեսանէի ՚ի սրտի իմում զմեղս՝ մի՞
 թէ լուիցեր ինձ տէր. « և նմանեսցուք
 այնմ որ ընու և կրկին հեղու, մինն կար-
 կատէ՛ և միւսն սլատառէ: Ուրեմն պարտ
 եմք կալ յաղօթս՝ մաքուր մտօք՝ սուրբ
 սրտիւ և զղջացեալ ՚ի մեղաց, զի մատու-
 ցի յիշատակ աղօթիցն մերոց՝ առաջի ա-
 մենակալին: Յայնժամ յուսացեալ ՚ի
 գթութի տեառն ընդ մարգարէին Պաւ-
 թի երգեսցուք, »լուաւ տէր ձայնի լա-
 լոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց, և
 տէր զինդրուածս իմ ընկալաւ: « Աղա-
 չեմ զհարս և զեղբարս աղօթասէրս մի՛
 զմեղսապարտիս զայս դուզնաբեայ աշխա-
 տանս ընդունել անպտուղ, այլ՝ քաղել
 աստի զլուսն օգտի հոգւոյ: Պիւքս այս
 աղօթից կոչի զղջումն, աղօթք առանձին՝
 խօսք ընդ Աստուծոյ, վասն այն՝ զի ամե-

նայն 'ի սմա բովանդակեալ աղօթք հա-
յին 'ի զղջացող անձն, որպէս պատկերօքն
խակ տեսանի և բառքն զոր 'ի բազում
տեղիս փոխեալ եմք՝ 'ի յողնականէ յե-
ղակի՝ վասն միոյ և եթ անձին՝ խոստո-
վանաբար խօսելոյ ընդ Աստուծոյ:

Աւ զորս 'ի սաղմոնարանի դաւթ ի Կր,
աղօթք՝ միայն հանեալ բաժանեցաք 'ի
վեցեակ հատուածս, և զայլս որք ենն
խրատաբանութի՝ անձաբանութի Մար-
գարէութի՝ և պատմութի, զայնոսիկ 'ի
կարգս աղօթից դնել զանց արարաք թէ-
պէտ դոն ոճանք որք միամտութեամբ՝ 'ի
տեղի աղօթից և ապաշխարութե, ծայրէ
'ի ծայր ընթեռնուն: Աւ 'ի վերայ եօթն
աւուրց շաբաթու. եօթն կանոնս դա-
սաւորեցաք, ըստ պատշաճի աւուրց հան-
դերձ աղօթիւք սրբոյ: Ատ սահմանադ-
րութե քրիստոսական եկեղեցեաց, կիւ-
րակին՝ յարութե: ԲՂԹ. Հրեշտակաց: ԳՂԹ.
Յովհաննու կարապետին: ԴՂԹ. Աստուա-
ծածնայ. ԵՂԹ. առաքելոյ. ուրբթ. խաչի.

շքիթ. ամենայն սրբոց: Միջնորդ և բա-
 րեխօս ունելով զսուրբան առ 'ի հաշտեցու-
 ցանել ընդ Մատուծոյ զամենայն աղօթողսն
 առ նա ջերմեռանդ սրտիւ: Հուսկ ուրեմն
 միջնորդութիւն յիշատակեալ վերձնիւղե-
 ւոյ գլուխս աղօթից իւրեանց առ բա-
 րեգութն Մատուած՝ մաղթեմ զի նա,
 լսօղն աղօթից և կատարիչն խնդրուածաց՝
 մարդասիրեալ ներումն և թողութիւն
 շնորհեսցէ և ինձ անարժան դաւթի ա-
 ռաքելին Սերեբրակեանց:



Դի յաղօթելդ՝ զմտաւ ած.

զի ունիս դու՝ ներկայ զԱստուած:

Միամիտ լեր՝ իբր աղաւնի.

զբաղմունս և զհոգս՝ թող աշխարհի:

Պատեա զանձնրդ՝ մինչդեռ ժամ դոյ.

Դի չար գործոց՝ ըզ նա հանգն:

Օղջացիր և՛ արտասուօք լաց.

Դի կապանաց՝ զհոգիդ քո բաց:

Առաւօտուց՝ վաղ արթնացիր.

զայս աղօթից՝ գիրքս ընթերցիր:

Օի սիրտ սուրբ և՛ հոգի խոնարհ.

առնէ զԱստուած միշտ հաշտարար:

Իիւծեալ հոգւոյդ՝ Աացն՝ զաստուած.

բժիշկ արթուն՝ քոյոց վիրաց:

Խոստովան լեր՝ քահանայի.

զի ըզմեղս՝ քո նա քաւի:

Դի մեղս ինչ՝ եթէ անկցիս.

փութա ջանիւ՝ զի զերծիցիս:

Մեղայ գոչեա՛ զի ապրեսցիս.

զի մի գուցէ՛ անզեղջ մեռցիս:

Թող զյանցանս՝ պարտաւորին.

դի թողասցին՝ պարտիք քոյին:

Օ, կամս արարչին՝ կատարեսցես.

գործովք նմին՝ հաճոյասցես:

Սէն հայցեմ՝ ես անարժանս.

որ մեղօքս իմ՝ եմ յանարգանս:

Մյց արասցէ՝ մեղուցելոցս.

արձակեսցէ՝ ՚ի կապելոցս:



Եւ արասցէս զսոյն ընթերցողայն ՚ի սիրտս յըստակս՝ բժշկուածի՛ն հողուց, և մաքրուածի՛ն յանցանաց. թողուածի՛ն սլարտուց, և արձակուրդ մեղաց կասրանաց: Եղիցի՛ բղխումն արտասոււայ՝ սուլաւ վարժեւոցն, և սլարգեւեալ տայի ՚ի ձեռն սորին սպաշաւ ըղձից: Շնորհեսցի՛ տէր և ինձ ընդ նոսին՝ առ ՚ի քէն՝ զղջումն կամաց. և նոցա իմովս ձայնիւ շունչս բարեհամբոյրս. նուիրեսցի՛ վասն իմ՝ այսու մատենիւ սլաղատանք նոցին. և բանիւս այսու հեծուածի՛ք նոցին՝ ընդ իմ խնկեսցին: Նարեկ. գլուխ 3. համար 4:

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 12 horizontal lines, but the characters are too light and blurry to be transcribed accurately. The paper shows signs of age, including several brownish stains and a circular mark at the top center.



Հ Բ Ա Փ Ա Ր Ո Ւ Մ Ն:

Հրաժարիմ 'ի սատանայէ, և յամենայն
խաբէութիւն նորա, 'ի պատրանաց նորա, 'ի
խորհրդոց նորա, 'ի գնացից նորա, 'ի չար
կամաց նորա, 'ի չար հրեշտակաց նորա,
'ի չար պաշտօնէից նորա, 'ի չար կամարա-
րաց նորա, և յամենայն չար զօրութիւն նո-
րա, հրաժարելով հրաժարիմ:

Գ Ա Ի Ա Ն Ո Ւ Մ Ն:

Խոստովանիմ և հաւատամ ամենակատար
սրտիւ զՀայրդ Աստուած՝ անեղ, անծին և
անսկիզբն. այլ և ծնող որդւոյ՝ և բղխող
հոգւոյ սրբոյ: Հաւատամ զբանն Աստուած՝
անեղ ծնեալ և սկսեալ 'ի հօրէ նախ քան
զյաւիտեանս: Հաւատամ զսուրբ Հոգին
անեղ անժամանակ բղխեալ 'ի հօրէ. էակից
հօր՝ և փառակից որդւոյ: Հաւատամ զԵր-

րորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն. ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից: Հաւատամ յեկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց, հաղորդութիւն սրբոց: Հաւատամ զբանդ Աստուած՝ որ վասն այցելութեան մարդկան ՚ի ջեր յերկնից յերկիր, յարգանդ սրբոյ կուսին մարիամայ՝ և անտի առեալ մարմին ծնար մարդ յաշխարհ, և եղեր Աստուածդ կատարեալ և մարդ կատարեալ:

Հաւատամ և զամենայն տնօրէնութիւնդ որ լուսաւորչակրօն ընդհանրական և առաքելական կաթողիկէ սուրբ եկեղեցին դաւանի: Հաւատամ և զհատուցումն գործոց՝ արդարոցն կեանք՝ և մեղաւորացն տանջանք յաւիտենական:

ՕՂԶՈՒՄՆ:

Խոստովանիմ առաջի քո Տէր իմ՝ և Աստուած իմ, զմեղս զորս ես գործեալեմ: Խորհրդով բանիւ և գործով՝ կամաւ և ակամայ՝ գիտութիւն և անգիտութիւն. Մեղայ ստեղծողիդ իմոյ ներեա ինձ:

Մեղայ զօրութիւն հոգւոյս, խորամանկութեամբ, անզգամութիւն, յանդգնութիւն, և երկջնոտութիւն, շուայլութիւն և ժլատութիւն, զեղխութիւն անիրաւութիւն, չարահաւանութիւն, յուսահատութիւն և թերամտութիւն, Մեղայ քեզ տէր ներ” :

Մեղայ չար խորհրդով մտացս նենգութիւն, ատելութիւն, խեթիւ մախանօք, յաչաղանօք թուլութիւն պոռնկական խորհրդով՝ ՚ի գիշերի և ՚ի տունջեան. երազական գիճութիւն, և անըջական գարշ աղտեղութիւն, Մեղայ քեզ տէր ներ” :

Մեղայ ցանկութիւն մարմնոյս՝ հեշտութիւն պղերգութիւն յօրանչմամբ քնոյ, շարժութիւն մարմնոյս, և զազրագործութիւն ՚ի պէսպէս ախտս, հեշտալրութիւն լսելեացս, արատութիւն աչացս, ցանկութիւն սրտիս, իգութեամբ ռնգացս, պագշտութիւն բերանոյս, անժուժկալութիւն, շուայտութիւն և արբեցութիւն, Մեղայ քեզ տէր ներ” :

Մեղայ չարաբանութիւն լեզուիս՝ ստախօսութիւն, սուտ երդմամբ, երդմնազանցութիւն, ուղտադրութիւն, հակառակութիւն, վիճաբանութիւն, բանսարկութեամբ, շոգմագութիւն,

քսու զատարկաբանութիւնս և ծաղու, զրախօսութիւնս, հերձախօսութիւնս և անիծաբանութիւնս, տրտնջելով, դժգոհելով, բանբասելով, և հայհոյելով, Մեղայ քեզ տէր ներ" :

Մեղայ գողութեամբ ձեռացս՝ ազահելով, զրիւնելով, հարկանելով, սպանանելով և ընդ գարշս ածելով. Մեղայ քեզ տէր ներ" :

Մեղայ ամենայն յօղուածովք շինուածոյս, և ամենայն անդամօք մարմնոյս, եօթնեակ զգայարանօքս, և մահացու մեղօքս. հպարտութիւն և մասամբ նորին՝ նախանձու՝ և բարկութիւն : Արկրամոլութիւն և մասամբք նորին՝ ծուլութիւն՝ ազահութիւն և բղջախոհութիւն, Մեղայ քեզ տէր ներ" :

Այլ և մեղայ ամենայն պատուիրանաց քոց՝ յանձն առնելեացն և հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականս կատարեցի, և ոչ ՚ի հրաժարելեացն հեռացայ : Օ, օրէնս առի, և յօրինացն հեղգացայ. ՚ի կարգս քրիստոնէութեն հրաւիրեցայ, և գործովս անարժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ կորացայ, և ՚ի բարեաց գործոց ինձէն հեռացայ : Վայ ինձ. Վայ ինձ. Վայ ինձ : Օ, ո՞րն ասացից՝ կամ զո՞րն խոստովան եղէց, զի ան-

Թիւ են յանցանք իմ. անասելի՛ են անօրէնութիւնք իմ. և անբժշկելի՛ են վէրքք իմ
Սեղայ քեզ տէր ներ” :

Տիրամայր Սուրբ կոյս զքեզ ունիմ միջնորդ, հաշտութե՛ն և բարեխօս առ միածին որդին քո, զի արձակեսցէ զիս ՚ի կապից մեղաց իմոց աղաչեմ զքեզ ողորմեայ ինձ :

Ք Ա Ր Ա Օ :

Խնդրեսցուք հաւատով ՚ի հօրէ վասն քաւուե՛ մեղաց և թողուե՛ յանցանաց. փրկելոյ զմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութեց՝ իջանելոյ ՚ի վերայ մեր ողորմուե՛ն և գթութե՛ տեսան Մատուծոյ ամենակալին կեցուցէ և ողորմեսցի :

Ա Ղ Օ Թ Ք :

Հայր գթութեանց, և Մատուած ամենայն մխիթարութեց՝ որ մխիթարես զմեզ յամենայն նեղութե՛ մերում. լո՛ւր և այժմ՝ ձայնի պաղատանաց ծառայիս քոյ, ընդունելով զաղաչանս իմ. անցո՛ յինէն զցասումն պատու-

Հասի յանցանայ իմոց բարերարութի քով :
 'Ներեան և լուր ինձ . քաւեան և թող զմեզս
 իմ . արժանաւորեան գոհութի փառաւորել
 զքեզ ընդ որդւոյ, և ընդ սրբոյ հոգւոյդ
 այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
 ամէն :

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի
 անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին
 կամք քո որպէս յերկինս և յերկրի : Օ Հաց
 մեր հանապազորդ տուր մեզ այսօր . և թող
 մեզ զպարտիս մեր . որպէս և մեք թողումք
 մերոց պարտապանաց . և մի տանիր զմեզ 'ի
 փորձութի . այլ փրկեան զմեզ 'ի չարէ : Օ ի
 քո է արքայութի, և զօրութի, և փառք
 յաւիտեանս . ամէն :



ԱՂՕԹԻՅ ԵՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄՈՒ:

Գոհանամ զքէն տէր իմ և Աստուած իմ,
և օրհնեմ և փառաւորեմ զսուրբ անուն
քո, որ պահեցեր զանարժան և զմեղաւոր
ծառայս քո, 'ի գիշերիս յայսմիկ յամենից
վտանկից և 'ի փորձութեց. և հասուցեր
խաղաղութի 'ի ժամ առաւօտուս, և արժա-
նացուցեր տեսանել զլոյս ողորմութե քոյ:

Եւ այժմ աղաչեմ զքեզ տէր իմ և Աս-
տուած իմ. պահեա՛ զիս և 'ի տունջեանս
յայսմիկ նոյն ամենազօր աջովդ. և փրկեա
յամենից վնասաբեր պատահմանց. 'ի յերևե-
լի և յաներևոյթ թշնամեաց, և յամենայն
մեղսառիթ խորհրդոց՝ բանից և գործոց: Եւ
զգնացս իմ ուղիղ արա. զի մի տիրեսցեն
ինձ ամենայն մեղք:

Առաջնորդեա ինձ 'ի խորհուրդս բարիս՝
'ի բանս ճշմարիտս, և 'ի գործս անմեղածինս
և օգտակարս:


'Ի ու լեր վերակացու և առաջնորդ սխա-
լական ծառայիս քոյ յամենայն գնացս իմ.
և փրկեա 'ի գայթակղութէ դիւին 'ի հասա-
րակ աւուրս. և զգործս ձեռաց իմոյ ուղիղ

A
1085

621 1758

621 9179


3082



արա և յաջողեա ինձ: Ալ դու պատրաստեա
 զպիտոյս հոգւոյ և մարմնոյ իմոյ: Ալ հասն
 խաղաղութիւն՝ առանց մեղաց և փորձանաց՝ ի
 ժամ երեկոյին: Օ, ի և յայնմ ժամու փա-
 ռաւորեցից զսուրբ Արրորդութիւն՝ որում
 միշտ վայելէ փառք յաւիտեանս. յամէն:







Տէր մի դարձուցաներ զերեսս քո յիննն.
 Տէր բարերար աղաչեմ ըզքեզ օգնական
 իմ լեր տէր մի անարդեր զիս և մի թողուր
 զիս Աստուած փրկիչ իմ:



Կ Ի Ի Ր Ա Կ Է :

Առջեւ աստուծոյ Եւրոպայի լինելու շէնքի վերջին զորքի մասին խոսելու արարեալ զհասարակութիւնն յայտնելու :

Ի սկիզբն իսկ իսկապէս զարեւելի երկրաց անգամ :

Օրհնեալ ես հայր Սուրբ Աստուած ճշմարիտ. Օրհնեալ ես որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. Օրհնեալ ես հոգիս Աք Աստուած ճշմարիտ : Օրհնեալ ես Ամենասուրբ Արրորդութիւն և մի Աստուածութիւն. Արարիչ և նախախնամող ամենայն արարածոց երևելեաց և աներևութից՝ քաւիչ և ներող ամենայն մեղաւորաց՝ փրկիչ և կեցուցիչ ամենայն նեղելոց և վտանգաւորաց՝ որք կարդան առ քեզ : Յոր և ես ամենաթշուառ ծառայս քո՝ հաւատամ, խոստովանիմ և երկիրպազանեմ : Յորմէ և յուսամ յնդունել զթողութիւն մեղաց իմոց. և զփրկութիւն հոգւոյ և մարմնոյ իմոյ : Աւարդ՝ անկեալ առաջի ամենասրբոյ երրորդութեդ և միոյ Աստուծոյ :

տուածութեդ, աղաչեմ զքեզ մեծաւ հա-
ռաչմամբ անոխակալ տէր իմ. տուր ինձ
համարձակութի, մատչիլ առ աղբիւրդ կե-
նաց. և գտանել ՚ի քէն զողորմութի: Մի
բարկանար ինձ վասն բազում մեղաց իմոց,
և մի յիշեր զանթիւ չարիսն իմ որ առ քեզ.
մի մտաներ ՚ի դատաստան ընդ ամենամեղ
ծառայիս. որ ահա ես ինձէն գիտելով զյա-
մենայնի յանցաւոր գոլն իմ, գիտելով և
զանյիշաչարութի Աստուծոյդ իմոյ՝ դիմեմ
առ քեզ: Աւրեմն՝ հայեաց ողորմութի՛ն ՚ի
ծառայս քո, և ասա քաղցրութի՛ն, զինչ կա-
միս զի արարից քեզ: Իսկ եթէ արդարութի՛ն
՚ի դատ մտեալ քննել կամիցիս մի ըստ միո-
ջէ զանօրէնութիս իմ, ես որպէս կարեմ
կեալ առաջի քոյ, և կամ որպէս կարեմ
արդարացուցանել զիս: Քանզի՛ դու ստեղ-
ծողդ իմ գիտես զամենասխալ բնութի իմ,
և վկայեցեր իսկ ամենաճշմարիտ բերանովդ
թէ չար է արարք մարդոյ, և ընդաբոյս է
չարութի. և թէ՛ միտք մարդոյ հաստատեալ
են ՚ի խնամս չարին: Աւ ես գիտեմ, և
վկայեմ ճշմարտուեդ. զի անօրէնութի յղա-
ցոյ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ. ըստ
բանի դաւթի ծառային քո: Արդ՝ անօրէ-

նութք յղացեալն 'ի բնէ անտի՝ և 'ի մեղս
 ծնեալն, որպէս կարէ արդարանալ առաջի
 քոյ: Եւ որպէս կարէ կեալ՝ եթէ դու ողոր-
 մութք քով ոչ օգնեսցես: Որպէս և դա-
 ւիթ ասէր, եթէ ոչ տեառն օգնեալ էր ինձ,
 բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս: Եւ յոր-
 ժամ սխալէի և անկանիլ կամէի, ողորմութի
 նորա օգնէր ինձ: Ահա, այս ողորմութիւնդ է՝
 որ տայ մեղաւորաց յոյս. և համարձակեցու-
 ցանէ մատչիլ առ քեզ: Այս ողորմութի
 է՝ որ բանայ զլեզուս համբացելոց մեղօք՝
 'ի կարդալ առ քեզ և գտանել 'ի քէն ըզ-
 հնար փրկութե: Այս ողորմութի է՝ որ
 դարձուցանէ զբարկութի քո 'ի քաղցրութի:
 Արդ՝ տէր իմ արդար և ողորմած. և ես
 անօրինեալ ծառայս քո յայս յողորմութիս
 քո ապաւինեալ՝ մատչիմ առ քեզ. և այսու
 ողորմութք իբրու վահանաւ ամբախակեմ
 զիս յահէ արդարութեդ. և իբր փախստա-
 կան անկանիմ առաջի աթոռոյ ողորմածիդ
 Աստուծոյ. և խնդրեմ, զի մի արդարութեդ
 մատնեսցես զիս, այլ ողորմութեդ յանձն
 արարեալ սլատսսարեսցես զիս. և մի ըստ
 արդարութեդ դարձուցանիցես զերեսս քո
 յինէն, այլ ըստ ողորմութեդ՝ 'ի մեղաց ի-

մոց դարձուցես զերեսս քո 'ի յոչ տեսա-
 նել զնոսա. և ասացես յորդորական և
 գթալիր բարբառով թէ՛ զինչ կամիս զի
 արարից քեզ: Եւ ես խոնարհեցուցեալ
 զգլուխս իմ, ասեմ թէ՛ լուիցես զաղաչանս
 ծառայիս քո. և քաղցրութիւն կատարեսցես
 զինդրուածս իմ որ ահա մատուցանեմ
 քեզ: Օյի և ես ողորմելիս ողորմեալ 'ի
 յողորմած Մատուծոյդ իմմէ փառաւորեցից
 զՆայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժմ
 և միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Եւ արդ՛ ես յետնեալս և անարգագոյնս.
 ամենաթշուառս և յամենայնի յանցաւորս.
 միշտ սխալականս և ամօթալիս՝ որ չեմ իսկ
 արժանի հայիլ յերկինս և տեսանել զլոյս
 զգալի արեգականն կամիմ համարձակիլ և
 ներկայանալ առաջի ամենատես աչաց ստեղ-
 ծողիդ իմոյ Մատուծոյ որ ես ամենագէտ և
 ծածկատես, և զանգործս մարդկան տեսա-
 նես: Իայց զայս գիտեմ և հաւատամ՝ զի
 դու ես երկայնամիտ Մատուած՝ ողորմած
 և ներող. և ոչ կամիս զմահ մեղաւորին,

այլ զգարձ և զկեալն: Ասան որոյ՝ փրղձ-
կեալ սրտիւ՝ կորագլուխ անձամբ և արտա-
սուածոր աջօք՝ անկեալ յերկիր, բաղխեմ
զդուռն ամենառատ ողորմութեանդ քոյ
կալնլով զեղջերաց դորին. և վստահանամ
յանսուտ հրամանս քոյ թէ՛ խնդրեցէք և
առնուցուք, հայցեցէք և գտջիք. բաղխե-
ցէք և բացցի ձեզ: Ահա՛ խնդրեմ հառա-
ջանօք՝ բաղխեմ կողկողալով. և հայցեմ ՚ի
քէն մարդասէր Աստուած. լուր զաղաքանս
ծառայիս քոյ՝ զոր վերառաքեմ առ քեզ
նախապէս՝ վասն իմոյ թշուառականի ան-
ձինս: Այն ինձ, վայն ինձ, և վայ իմոյ անօ-
րինեալ անձինս. զի ոչ գիտեմ թէ՛ ո՞ր ե-
րեսօք համարձակեցայց առ քեզ՝ ո՞վ Աս-
տուած իմ, զոր միշտ բարկացուցեալ եմ
մեղօք, և արդէն ՚ի նոյն բարկութեդ ներ-
քոյ կամ: Օխնչ ասացից. և կամ սրպէս
խնդրեցից ՚ի քէն զթողութի՛ մեղաց իմոց.
որ ահա՛ ևս կամ ՚ի նոյն մեղս ընկղմեալ:
Քանզի գիտեմ հաւաստեալ, որ արժանի
եմ այնմ սարսափելոյ ձայնիդ թէ՛ յորժամ
համբառնայցես առիս զձեռն քոյ ես դարձու-
ցից զերեսս իմ ՚ի քէն. և թէ յաճախի-
ցես յաղօթս, ոչ լուայց: Աիղծք են ինձ

նուէրք քո յագեալ եմ քեւ. վասն զի՝ ձեռք
 քո լիք են արեամբ: Յիրաւի՝ վասն իմապի-
 սեաց անօրինելոց ասացեր զայս՝ ՚ի ձեռնեսա-
 յեայ և ես խոստովանիմ տէր՝ զի արժանի
 եմ՝ ոչ միայն զի դարձուցես յինէն զերեսս
 քո, և ոչ լուիցես ինձ, այլև՝ թէ՛ ՚ի դժո-
 խըս իջուցանիցես կենդանւոյն, արժանի եմ:
 Քանզի՝ ես ինձէն գիտեմ, զի մեղաւոր եմ
 յամենայնի և արժանի դատապարտութե՛:
 Քանզի՝ ոչ միայն ձեռք իմ են լի արեամբ,
 այսինքն՝ յափշտակութիւն և զրկողութիւն, և
 այլովքն որք ՚ի ձեռս վերաբերին, այլ՝ բո-
 լոր անձամբս լի եմ անօրէնութիւն և ամենայն
 մեղօք: Ուստի՝ ոչ է բժշկութի մարմնոյ
 իմոյ. և ոչ գոյ խաղաղութի՛ ոսկերաց իմոց.
 և յոտից մինչև ցգլուխս չիք առողջութիւն:
 Վասն զի անօրէնութիւնք իմ բարձրացան
 քան զգլուխ իմ, և որպէս զբեռն ծանր՝
 ծանրացան ՚ի վերայ իմ. որք ահա հանդեր-
 ձեալն են ՚ի դժոխս և ՚ի հուրն յախտենա-
 կան ընկղմել զիս՝ եթէ դու ոչ օգնիցես ինձ:
 Գիտեմ, գիտեմ, ո՛վ Ա՛ստուած իմ. զի
 դու մենասուրբ ես՝ և զմեղս ատես՝ և ՚ի
 մեղաւորաց գարշիս՝ վասն այսորիկ զաղօթս
 նոցա ոչ լսես. այլ դարձուցանես զերեսս

քո՛ որպէս և ասես: Որպէս և երանելին
 դաւիթ ասէր. Թէ տեսանէի ՚ի սրտի իմում
 զմեզս, մի թէ լուիցէր ինձ տէր: Այլ ըզ-
 մեզս ատեցի և անարգեցի. և զօրէնս տեսան
 սիրեցի: Ասան այսորիկ լուաւ ինձ տէր. և
 հայեցաւ ՚ի ձայն խնդրուածաց իմոց: Սա-
 կայն՝ ուլ անոխակալ Աստուած. ներօղ և
 գթած՝ երկայնամիտ և անյիշաչար: Գիտեմ
 և զայս. և ՚ի սուրբ դրոց քոց լուեալ եմ,
 որ ՚ի բարկութեղ, և զողորմութի՛ն յիշես.
 և ՚ի կեանս յայս՝ զողորմութի՛դ ածես ՚ի գործ
 յաճախապէս. որպէս յայտնի է առ նինուէա-
 ցիսն. առ իսրայէլ. և առ յայլս բազումս:
 Աւ նոյն սուրբ գրեանքն քո՛ ՚ի յիշելն ըզ-
 քեզ, բազմիցս՝ ողորմած և գթած անուամբ
 փառաւորեն զքեզ. որպէս և դաւիթ ասէ.
 դու տէր՝ գթած ես և ողորմած՝ երկայնա-
 միտ և բազում ողորմ առ ամենեսեան՝ որք
 կարդան առ քեզ: Ապաքէն՝ յայտնի է ուլ
 Աստուած իմ՝ զի ըստ այնմ որ արդար ես,
 բարկանաս մեղաւորաց. և ըստ այնմ որ ո-
 ղորմած ես, ո՛չ իսկոյն մատնես ՚ի կորուստ,
 այլ երկայնամտելով ներես, և դարձին սպա-
 սես: Որպէս վկայէ դաւիթ՝ ո՛չ իսպառ բար-
 կանայ մեզ տէր. և ո՛չ յաւիտեան պահէ ռիս:

Եւ դու իսկ ասացեր օրհնեալ բերանովդ թէ՛ մի՞ թէ կամեւրով կամիմ՝ զմահ մեղաւորին. ո՛չ: Եւ յլ զդարձ եւ զկեալն: Եւ թէ՛ մեղաւորն յորում պահու յոգոց հանիցէ, կեցցէ:

Եւ հա՛ յոյս աներկբայելի. տեղի ասպատանի՛ և յարկ ապաւինի ամենայն մեղաւորաց: Օրհնեալ է քո ողորմութի՛դ. գովեալ է քո գթութի՛դ. և բարեբանեալ քո մարդասիրութի՛դ ո՛վ Եւստուած մեր: Ա՛յսն զի՛ ՚ի բարկութե՛դ՝ զողորմութի՛ ՚ի գործ ածես. ՚ի դատելի՛դ՝ զհնարս զերծման ցուցանես. ՚ի պատժելի՛դ՝ զճանապարհ ազատութե՛ ուսուցանես:

Եւ թէ՛ այսպէս, ասկա զի՛նչ փոյթ երկարապէս ճառել այժմ՝ զորքանութէ՛ մեղաց իմոց և կամ բանալ առաջի քոյ մի ըստ միոջէ՛ որ զանգործս մարդկան տեսանես. և ՚ի գիրս քոյ զամենեսեան գրեալ ունիս: Եւ մանաւանդ՝ ես մեղաւորս ինքնին ահա՛ խոստովանեցայ զմեղաւոր գոլս իմ ամենայնիւ. որոյ աղագաւ ՚ի ներքոյ բարկութե՛ քոյ կամ և եմ պարտական դատասարտութե՛:

Եւ յժմ՝ ո՛վ ողորմած Եւստուած իմ. ըզգործս ձեռացդ, զպատկերս արարչիդ՝ և զգնեցեալս վերստին արեամբդ՝ թողո՛ւս իս-

պառ ՚ի կորնչիլ: Քաւ լիցի ողորմած աստու-
ծոյդ իմոյ, որ զամենեցունց զկեալն կամիս:

Ուրեմն՝ աղաչեմ զքեզ մարդասէր Աստուած, ողորմած Աստուած, աղաչեմ, և զերեսս ՚ի գետին եդեալ՝ արտասուօք թանամ զհող պատուանդանի ոտիցդ՝ և խընդրեմ հառաչանօք. զի ՚ի մատչիլն իմ առ աղբիւրդ ողորմութեան, մի բարկութեամբ խրատեր. և մի սրտմտութիւն յանդիմաներ. և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ամենապարտաւոր ծառայիս՝ որ յամենայնի ափիբերան և անպատասխանի եմ առաջի քոյ: Այլ հայեն յիս քաղցրութիւն. և լուր զաղաչանս իմ՝ զոր անմաքուր բերանովս քեզ մատուցանեմ: Մեղայ յերկինս և առաջի քոյ որպէս զանառակ որդին: Ա՛լ ընդ առաջ սիրով՝ գրկեա գթութիւն՝ և համբուրես ողորմութիւն: Թող ինձ զամենայն յանցանս իմ, զորս դու լաւապէս գիտես քան զիս. և ասան օրհնեալ բերանովդ թէ՛ թողեալ լիցին քեզ մեղք քո:

Ի ու ասացեր մարդասէր Աստուած թէ՛ ասան զանօրէնութիւն քո զի արդարասցիս: Ահա՛ ասացի և ասեմ. մեղայ և անօրինեացայ միշտ առաջի քոյ. մեղայ քեզ տէր՝ և

առաջի քոյ արարի զչարս Ուրեմն՝ արդարացո՞ զիս ով ճշմարտաբանդ Մատուած:

Դու ասացեր մարդասէր Մատուած թէ մեղաւորն եթէ դարձցի առիս, ես գթացայց ՚ի նա և ՚ի ծով ընկղմեցից զնձ մեղս նորա: Ուրեմն՝ կացո զբանս անլուծանելի հրամանաց քոց ով գթած Մատուած. գթա ՚ի մեղաւոր ծառայս քո՝ որառ քեզ եմ դիմեալ և ընկղմեա ՚ի խորս անհուն ողորմուէ քոյ զնձ մեղս իմ:

Դու ասացեր մարդասէր Մատուած ես եմ որ ջնջեմ իբրև զմէզ զմեղս քո՝ և զանօրէնութիւնս քո ոչ ևս յիշեցից: Ուրեմն հաւաստեա առիս զբանքս ով անսուտդ Մատուած. ջնջեա զնձ մեղս իմ և անհետ արա հատ և չորացո իսպառ զարմատ մեղաց իմոց՝ զի մի ևս երևեսցի յիս, և բարկացուցանիցէ զքեզ:

Դու ասացեր մարդասէր Մատուած. եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիթ, իբրև զձիւն սպիտակ արարից. կատարեա առիս զբան քո ով կարօղ Մատուած. զսեացեալս մեղօք՝ սպիտակացո և սք արա յնձ ազատեղութեանց:

Պու ասացեր տէր իմ և Մատուած իմ Յիսուս Քրիստոս՝ ՚ի ժամանակս փրկագործութեան քոյ թէ՛ ոչ եկի կորուսանել, այլ կեցուցանել և թէ՛ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս: Արդարացո զբանս քո տէր իմ. կեցո զմեռեալս մեղօք՝ և մի թողուր կորնչիլ՝ զոր պատուական արեամբդ գնեցեր կոչեա և զամենամեղաւորս ՚ի կապանաց մեղաց՝ և ՚ի բանտէ դժոխային գործոց առ քեզ սիրով՝ որպէս զսիրելին քո զազարոս և կենդանացո: Աւ ուրախացո զհոգի և զմարմին իմ շնորհօք՝ որպէս զքորսն նորա:

Պու ասացեր Տէր իմ Յիսուս թէ՛ եկայք առիս ան աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ: Իրաւացո զբանս քո առիս տէր իմ: Ահա ես աշխատեալս ՚ի պէսպէս մեղս՝ և ծանրաբեռնեալս անօրէնութեամբ դիմեալ եմ առ քեզ. ուրեմն բարձ զծանրութիւն մեղաց իմոց, և թեթեացո զտառապեալս ոյլ հանգիստդ աշխատելոց և քաւիչդ մեղաւորաց:

Այլ տէր իմ Յիսուս Քրիստոս՝ գառնդ ան և բարձօղ մեղաց աշխարհի. դու վասն այսորիկ կրեցեր զայնքան սարսուելի չարչա-

րանսն. և հեղլով զպատուական և զտնգին արիւնդ պատարագեցար՝ի խաչին. զի փրկեսցես զմեզ ՚ի դժոխոց, ՚ի յաւիտենական մահուանէ և կեցուցես:

Արդ՝ զնոյն սոսկալի չարչարանսդ և զպատուական արիւնդ միջնորդ արկանեմ առ քեզ, և աղաչեմ զի և ես մի եմ ՚ի փրկելոցդ և կեցուցելոցդ: Արա՛ զի մի ևս մեռանիցիմ ՚ի մեղս և կորիցեմ յաւիտենականապէս. և սք արեանդ քո հեղումն ՚ի զուր լինիցի վասն իմ: Ուրեմն՝ ՚ի պատուական արիւնդ քո խնայեա ով տէր իմ. Թող ինձ զամ մեղս իմ՝ զորս մինչև ցայժմ գործեալ եմ յիմարութեամբ իմով: Աւայսուհետև զսիրտ սուրբ և զհոգի ուղիղ նորոգեա յիս. զիմի՛ ևս մեղիցեմ:

Տուր ինձ զերկիւղ քո սուրբ. և բևեռեա ՚ի նա զհոգի, զմիտ և զմարմին իմ: Որպէս զի՛ միշտ երկնչիցիմ ես ՚ի սպառնալեաց և ՚ի դատաստանաց քոց. և խորշիցիմ և հեռանայցեմ ՚ի մեղաց և յամենայն թիւր գնացից. և զգուշանայցեմ միշտ ՚ի յօրէնս և ՚ի պատուիրանս քոյ և ՚ի մտի ունիցիմ հանապազ զսոսկալի օր մահուն իմոյ և զհազգին դատաստան քոյ:

Սուրբ պահեա տէր իմ, զհոգի, զմիտ, զխղճմտանս և զամենայն զգայարանս մարմնոյ իմոյ՝ յամենից յանհաճոյից քոց. ՚ի չար մտածմանց, յաղտեղի խորհրդոց. յարատ հայեցուածոց. ՚ի մեղսառիթ լըրոց. ՚ի դատարկ և յանպատշաճ խօսակցութեանց, յարտուղի ընթացից, և յամենայն մեղսածին շարժմանց :

Ազաչեմ զքեզ տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս. փրկեա զիս և պահպանեա յամենից թշնամեաց և յորոգայթից նոցին և ՚ի բնաւից փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց և մանաւանդ ՚ի ներկայական վշտացս և փորձանացս : (ԹԻ՛՛՛՛ ռ՝նէ՛՛ շէ՛՛՛՛ ի՛՛՛, յէ՛՛՛՛ Ե՛՛՛՛՛ յ՛՛՛՛՛՛՛) :


Ա՛՛՛՛՛ ի՛՛՛՛՛ ընդիս հանապազ ՚ի յօգնել. և յընկերել ինձ փութա ամենայնում ժամու. ՚ի տուէ և ՚ի գիշերի. ՚ի տան և ՚ի ճանապարհի. ՚ի նստիլ, ՚ի ննջել և ՚ի յառնել. ՚ի գործել և ՚ի հանգչել. որպէս զի մի երբէք սասանեցայց : Ա՛՛՛՛՛ ասն զի ՚ի քեզ անկայես յարգանդէ մօր իմոյ դու ես յոյս իմ և ապաւէն ՚ի մանկութենէ իմմէ. դու ես յոյս իմ ՚ի ծերութեան իմոյ. և դու ես յոյս իմ և

ասլաւէն 'ի մահուան իմոյ՝ և 'ի միւսանգամ
գալստեանն քոյ դու ես, և ոչ այլ ոք :

Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիս-
տոս. ահա հոգւովս, մտօքս, մարմնովս և ամ
պարագայիւքս, զիս յանձնեմ 'ի քո անհուն
ողորմութիւնդ. և խնդրեմ, զի մի զրկիցես
զիս 'ի շնորհաց քոց. մի մերժիցես 'ի խնա-
մոց քոց. և մի թողուցուս զիս 'ի կամս ան-
ձին իմոյ գնալ. այլ 'ի շնորհս քո պահես-
ցես. 'ի խնամս քո կառավարեսցես. և 'ի
կամս քո առաջնորդեսցես ինձ : Արպէս քո
օրհնեալ կամացդ հաճոյէ, այնպէս առաջ-
նորդեսցես ինձ առնել և շարժիլ որքան եմ
'ի կեանս այս :


Իսկ՝ և վճարիլ կենաց իմոց, աղաչեմ
զքեզ տէր իմ. քոյ անարատ ծնողիդ միջնոր-
դութեամբ. սթյն յօհաննու կարապետին.
սրթյն ստեփաննոսի նախավկային. և սրբոց
քոց առաքելոց. և սթցն՝ թադէոսի և բար-
դուղիմէոսի և սթյն գրիգորի լուսաւոր-
չացն մերոց. և համայնից սթց քոց երկնա-
ւորաց և երկրաւորաց աղօթիւքն և բարե-
խօսութեամբն. քո սթ նշանացն, սթյ Խաչի
քոյ կենսատուի. սթյ կողմառիս Վեղարդեանդ

քոյ. սքց սոսկալեաց բևեռաց և Փշեղէն
 պսակլին քոյ. և այլոց սրբոց գործեացն քոց
 չարչարանաց շնորհօք և միջնորդութեամբն
 տուր ինձ՝ արթուն մտօք յուղիղ դիտա-
 ւորութեամբ, ճշմարիտ հաւատով, աներկբայ
 յուսով, առաքինական գործով, ստոյգ խոս-
 տովանութեամբ, ջերմագին զղջմամբ, սքյ
 և կենարարի Ս՝արմնոյ և Մ՝րեան քոյ հա,
 ղորդութեամբ գալ առ քեզ և արժանանալ
 քումդ ամենացանկալի տեսութեան. և ընդ
 սքց երջանկաց և սիրելեաց քոց փառաւո-
 րել զքեզ ընդ հօր և ընդ սքյ Հօգւոյդ,
 յաւիտեանս յաւիտենից. ամէն:





Ազորմեա դու ստեղծեր մի կորուսաներ:



ԵՐԿՈՒՇ ԱՅԵԹԻ:

Դ ՍՐԲՈՅՆ ԿԵՐՍԻՍԻՆ ԴՆՈՐՀԱ-
ԼԻՈՅ ԱՍՆՑԵԱԼ:

Ողբերգո-Թե-ն անձն շղթայեւոյ, և Բողոք Է-րա-
*անլե-րոյ զԵ՛ջ Երոսոսան-Բաւ :

Աշխարհ ամենայն, առիս նայեցեալ. ախտա-
կից լերուք :

Բանամ զշրթունս. բարբառիմ լեզուաւս.
բողոքեմ զանձնէս : Տէր ողորմեա. Տէր
ողորմեա. Տէր ողորմեա.

Պող եղէ մեղաց. գտող կորստեան. գուք
ինձ փորեցի :

Պաւեցի զանձն իմ. դաւաճանեցի. դարան
գործեցի : Տէր ողորմեա ևն :

Երբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և
ստուեր մահու :

Օխարդ պատմեցից՝ զթիւ մեղաց իմոց. զի
բազում են յոյժ : Տէր ողորմեա ևն :

Լչրկինք և երկիր. եկայք ողբացէք. եղկելի
անձն իմ :

Րնտրեցի զչարն. ընկալայ կամաւ. զհոյլս
մեղաց : Տէր ողորմեա :

Թաթաւիմ տղմով. թաւալիմ 'ի մեղս. թո-
թաւիլ չկարեմ :

Սանտ ախտիւ լցեալ. ժահահոտ եղէ. ժա-
մանակս թաշումս : Տէր ողորմեա :

Իբաց մեկնեցայ. 'ի սք խորհրդոց. 'ի բարեաց
գործոց :

Լաւ վարկաւ անձն իմ. լուսոյն հեռանալ.
լինիլ ընդ խաւար : Տէր ողորմեա :

Խորհուրդք չարին. խաբեն զհոգիս. խորասոյզ
առնեն :

Օածկեն անդնդոց. ծիծաղին գլորմամբս. ծա-
նակ զիս առնեն : Տէր ողորմեա :

Կամաւ կորացայ. կարկամեալ անձամբս.
կանգնիլ ոչ կարեմ :

Հուր մեղաց կիզող. հրդեհեաց որ յիս.
հոգևոր բարիս : Տէր ողորմեա :

Չաղկեցայ մեղօք. ձաղեցին ատսողք. ձանձ
բացաւ հոգիս :

Ղեղի դառնութեան. զողեալ 'ի սիրտ իմ,
ղամբար իմ շիջաւ : Տէր ողորմեա :

Ճաշակմամբ մեղաց. ճաշեցի զմահ. ճիստ
աղքատացայ.

Մեռեալ եմ հոգևովս. մոլորեալ մտքս.
միայն կամ մարմնովս: Տէր ողորմեա:

Յորոգայթ մահու. յորսողին անկայ. յաղթե-
ցայ յախոսից:

Նետից թշնամւոյն. նշաւակ եղէ. նոր միշտ
խոցոտիմ: Տէր ողորմեա:

Շուրջ պատեալ զինև շունք բազում
եղեն. շաղախին արեամբս:

Որս եղէ չարին. ուռկանաւ մեղաց. որսացաւ
անձն իմ: Տէր ողորմեա:

Չարաչար վշտօք. չարչարի անձն իմ. չու-
նիմ դադարումն:

Պարտապան դտայ. պարտուց յանցանաց.
պատրեալս ՚ի մեղաց: Տէր ողորմեա:

Զանամ. զղջանալ. ջերանիմ դարձեալ.
ջեռնում հրով մեղաց:

Ռաբբի կոչեցայ. ռակայ անուանիմ. ռամկա-
կան վարուքս: Տէր ողորմեա:

Սիրով ցանկութեան. սաստիկ բարկութեան.
սիրտ իմ խոցեալէ:

Վիրօք յանցանաց. վշտանայ հոգիս. վարա-
նեալ շրջիմ: Տէր ողորմեա:

Տիրեցին ինձ չարք. տարագիր հանին. տիրական գրգացս:

Բաբունւոյն բարւոյ. բախճական ձայնին. բոտինս ոչ լուայ: Տէր ողորմեա:

Յանկուծիւն չարեաց. ցանկալի դիմօք. ցաւեցոյց զաչս իմ:

Իւրաքանչիւրոց. Վիւսմամբ խուռն ակտից. Վիւծեալէ հոգիս: Տէր ողորմեա:

Փութացիր անձն իմ. փախչիլ ՚ի չարեաց. փափագիլ բարեաց: Քեզ միշտ մերձ ծանիր. քուն մահու եկեալ քննող դատաւոր:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա: Սուրբ Աստուածածնին Բարեխոսութեամբ: Յիշեա Տէր և ողորմեա:

Դրբոյն Գրեգորէ Խորեհացոյն. Բան 8 և Դ 7 և Է Կոմար 3 ողբերգութեան տէն, խորհ ընդ Խճ:

Աւարդ՝ զի՛նչ գործեսցես անձն իմ կորուսեալ, կամ ճւր թաքիցես, կամ զիւարդ ապրեսցես, կամ որպէս ելցես ՚ի մեղաց բանդէ: Քանզի բազում են պարտիքդ, և

անթիւ հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն
 և անլախճան նախատինքն. անողորմ են հրեշ-
 տակքն և անկաշառ դատաւորն. հզօր
 ատեանն և անաչառ բեմն. քստմնելի սպառ-
 նալիքն և անողորմ հատուցմունքն. ա-
 հարկու հրամանն և մերկապարանոց յան-
 դիմանութիւնքն. հրեղէն են գետքն և անան-
 ցանելի են վրտակքն. թանձրամաժ խաւարն
 և արտաքոյ այցելութեան մառախուղն. ապա-
 կանութեան է դուբն և մշտնջենաւոր է
 տաղնապն. ամենսգրաւ տարտարոսն, և ան-
 զերձ սառնամանիքն:

Աւարդ՝ արդարեւ քեզ են գանձեալ
 դառինքս այսոքիկ դժնդակք, և տարժանելի
 օթեանք, անլմբերելեացդ սլատուհասից,
 ո՞վ անարժան անձն իմ մեղաւոր՝ չարա-
 գործ՝ սլոռնիկ՝ բազմաբիծ, և սահման ան-
 դատանի՝ բնաւին անմաքրութեան:

Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժա-
 ոանգեսցես՝ թիւրեալդ ՚ի յուղղութեանց,
 և զառածեալդ ՚ի մաքրութեանց. տարագ-
 րեալդ յարդարութեանց, և ՚ի կարգաց սլար-
 կեշտութեանց. ունայնդ ՚ի լիութեանց՝ հո-
 գեպարգև հարստութեանց. նախանձարկու
 բարերարին, և ամենակալ թագաւորին:

Աւ քանզի կառուցեր քեզ անել արգե-
լան և անխախտ ընդ որոգայթ, խոստովանեալ
քեզէն զանբժշկականդ քովէր, և զանօրինա-
կանդ հարուած, վկայելով զպարտականդ մա-
հո՛ զանբուժելիդ բեկուծիւն. ո՞վ չարդ 'ի
բարեաց, ո՞վ դառնուծիւնդ 'ի քաղցրութեանց
ո՞վ խաւարդ 'ի լուսազարմից. ո՞վ կապտեալդ
'ի սլճնելոց. ո՞վ դսրովեալդ 'ի գովելոց. ո՞վ
ամբարիշտդ 'ի բարեպաշտից. ո՞վ շնչականդ
'ի բանականաց, ո՞վ անմիտդ 'ի մտաւորաց. ո՞վ
անհանճարդ յիմաստնոց. ո՞վ անմաքուրդ ընտ-
րելոց. ո՞վ մահացուդ 'ի կենդանեաց. ո՞վ խո-
հերականդ 'ի սքց. ո՞վ արբշիռդ 'ի պարկեշտից.
ո՞վ կեղծաւորդ յարդարոց. ո՞վ անպիտանդ 'ի
սխտանեաց. ո՞վ անարգդ 'ի փառաւորաց. ո՞վ
նուազդ յառաւելութեանց. ո՞վ գերիդ 'ի
դերագունից. ո՞վ նուաստագոյնդ 'ի վեհից.
ո՞վ աղքատդ յնչեղաց. ո՞վ անարժանդ 'ի
փրկութեանց. ո՞վ տնանկդ 'ի բարձրութեանց,
և հոգեոր հարստութեանց. և հատուածեալդ
յօրհնելոց :

Վ՛սյ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ
բարկացուցի. վ՛սյ որդւոյս կորստեան, որ
զկենդանութեանն ձիր մոռացայ: Վ՛սյ պար-
տապանիս անհամար բիւրուց քանբարաց,

որ ոչ գոյ հատուցանել: Վսյ բեռնակրիս
 ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ
 դառնալ առ հանգստարանն. վսյ վնասակա-
 րիս տերունեան պարտուցն, որ չիք հնար
 յանդիման լինիլ հզօրին: Վսյ եղեգնա-
 խուիւ կիզանողականս նիւթոյ, որ տոչորելոց
 եմ ՚ի գեհեհին. վսյ ինձ առ այս յիշատակ
 զի նետք բարկութեանն ան՝ այրեցելովք են
 գործեալ. վսյ յիմարութեանս, որ ոչ մտա-
 ռեցի զճաճկելոցն յայտնութեան հանդէս:

Վսյ ամբարշտիս, զի միշտ անդադար
 ոստայնս չարեաց կկեցի. վսյ զմարմինս սլա-
 րարողի՝ կերակուր որդանցն անմահից, կտտո-
 ղացն թունաւորաց զիսրդ համբերեցից.
 վսյ ինձ առ արբումն՝ մահուն բաժակի, որ-
 սկէս զյաւիտենականն տուժեցայց. վսյ ինձ
 առ ելս անարժան հոգւոյս՝ յեղկելի մարմ-
 նոյս, իբր դատաւորին ճշմարտի յանդիմանե-
 ցայց. վսյ ինձ առ նուազութեան իւղոյն լաս-
 տերաց, զի անարժարծելի է աղօտանալն.
 վսյ ինձ առ ճեպ տազնապի՝ ահին սլակուց-
 ման, յորժամ առագաստին մուտն փակեացի,
 վսյ ինձ առ ձայնին ահաւորութեան՝ դողա-
 ցուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնա-
 ւոր թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ ոչ
 գիտեմ զձեզ:

Եւսոյք սոս Կոյրն Լսորոսած՝ զուհսս վանանդեցե.
 Կոյրէն Լսորոսած շէնէ 722 էրեոն է:

Ով ազնուագութ՝ և բարեխնամ հայր.
 որ անսկիզբն և անպատճառ գոլով՝ սկիզբն,
 և պատճառ ես ամենայնի. համագոյլիցդ ծննդեամբ,
 և ելողութեամբ. իսկ եղականացս արարչագործութբ.
 աղաչեմ զքեզ՝ զմեզս մանկութեան իմոյ. և զանգիտութեան մի
 յիշեր. այլ յիշեա զիս տէր ըստ ողորմութեան քում.
 քանզի ամեհի բռնութեամբ անբաւելի սլարտեացս յանդունդս խորոց եմ
 ընկլուզեալ. ողորմութեանդ քոյ կարթիւ հան զիս
 աստի ՚ի լոյս փառացդ՝ ուլ ամենահնար Տէր իմ. որ ունիս ՚ի ձեռին քում՝
 զշունչ կենդանութեան մահապարտիս: Օհինչ էի՝
 ուլ ամենագութ հայր իմ զինչ եմ, և զինչ լինելոց
 եմ: Եւ ի ոչինչ. և ՚ի գոյութիւնէութեան ածեր զիս: Ոչինչ
 եմ ևս սակս վայրագասուն բարուցս. տակաւին
 ոչ տաս թոյլ՝ սահպանել զապրտտամբս: Եւ ի
 յաղամայ մեղս յղացեալ. եմ արդէն առօրեայ
 մեղօքս ընկզմեալ. իցէ թէ գեհէնի պատժօքն
 լինելոց եմ դատապարտեալ:

Ապրեցո զիս՝ ով անյիշաչար Տէր իմ, և կեցո ՚ի խորոց ծովու մեղացս, զի դու ես միայն յոյս իմ. և ապաւէն ՚ի մանկութենէ իմմէ մինչև յօրն դատաստանի:

Յաշխար մտի աշխարելի. Աստ ընթանամ տառապելի. Ալն իմ լիցի սարսափելի:

Ահ թշուառացելոյս՝ երբ եղեց ես կամակորս և խեղաթիւրս, կամակար կամակատար քոյդ բարեհաճութեանդ:

Ով ամենազօր աստուած. ստրակամեծար թագաւոր. աղքատասէր տէր. և հայր մշտահարուստ. ես ոստիս սպտրանօքն պանծացեալ՝ գաղջ կենօքս կարծէի թէ մեծատուն էի, և ոչ իւր կարօտէի. ոչ գիտացի թէ աղքատ էի. մերկ. ողորմելի, հեղգ և կոյր: Կարծէի զիս գոլ ինչ. և գտայ ոչինչ. կարծէի զիս գոլ քոյդ պաշտօնեայ. բայց երևեցայ բանսարկուն գործունեայ. նաև անձինս իմում եղէ ես առանձին քուրմ, և պաշտօն հանապազօրդելով որպէս զշուն ՚ի փոխածս և որպէս զխոզ ընդ տիղմ թաւալելէ:

Ղաշակեցի ճաշակս գեղեցիկ բանիդ քոյ ըմպեցի բազմադիմի անձրևս շնորհաց քոյ բայց անտի կործանեալ՝ փոխական շահեկան

արդեանցն՝ փուշս բերի, և տատասկ որով
անպիտանացայ, և յանէծս մերձեցայ և ՚ի
Մշտնջենաւոր հուրն սահմանեցայ:

Արդ յիշեա հայր ամենախնամ, զի ՚ի
հողոյ ըստեղծեր զիս. մի սրտմտութեամբ
քով յանդիմաներ զիս. այլ որպէս ամենա-
հնար բժիշկ զանբուժելի ցաւս իմ բժշկեա
և ըստ անբաւ ողորմութեանդ քում կեցօ
զիս հեղձամղձեալս. և զանկեալս:

Ով յոյս՝ և ապաւէն իմ, որ թողեր բիւ-
րաբանբար սլարտապանին, անառակ որդւոյն,
աւազակին. պոռնիկ կնոջն, և՛ սլետրոսին. թող
և ինձ մարդասիրապէս՝ որպէս անկեւոյն իձեռս
աւազակացն:

Մի անտես առներ զգործս ձեռաց քոց.
լուր զհեծութիւնս իմ. և տուր զողորմու-
թեան քոյ շնորհս:

Մի եղիցի ինձ պաղատիլ՝ և անտես Տնալ.
ինձ ձայնել և քեզ ոչ լսել. աղաչել՝ և
ոչինչ օգտել: Կեցօ զիս հայր ամենագութ
լուր ողորմած. հաշտեց՝ անախտակիր. սրբեա
զիս իվիրացս ամենօրհնեալ հայր. որում
վայելէ օրհնութիւն գոհութեամբ հանդերձ
յերիս յաւիտեանս ամէն:

Հայր համայնից բարեսիրաց. մերկեա յինէն
ըզ քուրձ մեղաց.

Երբայ հըզօր, և երկնաւոր. լուր հեծուէս
վտանգաւոր...

Յողեաց դասուն երանաւէտ. հաղորդ գտայց
և ես յաւէտ.

Բոպէաբար իսպառ լըբայ. զի յառօրեայս
միշտ յօրացայ :



Աւելի աս Երկնայէն Օգնեալորդ-Ե-նոն :

Երդ՝ առ ձեզ է աղաչանքս, ով երկնա-
յինք և անմարմինք, հրեղէք և հոգեղէնք,
արփիափայլք և լուսատեսիլք. միտք մա-
քուրք և անարատք. սուրբք՝ սրբաբանօղք
Աստուծոյ, և անդադար փառաբանիչք ամե-
նասրբոյ Երրորդութեանն : Որք կայք միշտ
առաջի Աթոռոյ փառաց նորա. և սպասա-
ւորք էք անվրիպելի հրամանի նորին : Որք
էք վերակացուք և պահապանք աշխարհի,
և անդադար միջնորդք և բարեխօսք վասն

մարդկան: Արք և ունիք ՚ի յԱստուծոյ կարգեալ ձեզ զյատուկ սրադատանս առ նա վասն մեղաւորաց ասելով թէ՛ ողորմեա դու ստեղծեր, մի կորուսաներ. և զգործս ձեռաց քոց մի անսես առներ:

Եւրդ՝ ուլ երջանիկք և փառաւորեալք, Եթոռք Քերօբէք, Սերօբէք, Տէրութիւնք, Օօրութիւնք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշտակք: Եւ յատուկ սրահապան և վերակացու Հրեշտակ իմոյ անարժան ծառայիս:

Եւ յժմ զձեզ աղաչեմ խոնարհեալ անձամբ և սրատկառեալ դիմօք՝ Վերակացու և սրահապան լերութ մեղաւոր ծառայիս. և օգնեցէք ինձ յամենայն ժամու:

Փրկեցէք զիս ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր թշնամեաց, և յամենից վտանկից և ՚ի փորձութեանց: Եւ մանաւանդ՝ ՚ի ներկայական փորձութեանցս. (Ե՛՛է՛ ունի՛ն):

Օ աղօթս և զսրադատանս մեղաւորիս մատուցէք առ Աստուած, որպէս է սովորութիւն ձեր. և բարեխօսեցէք վասն իմ առնա, ասելով՝ ողորմեա, դու ստեղծեր մի կո-

բուսաներ: Արպէս զի՝ ձերովք խնդրուածովք ներեսցէ սխալանաց խմոց. ջնջեսցէ զձեռագիր յանցանաց խմոց. և դրեսցէ զիս ՚ի դպրութիւն կենաց: Աւ յետ աստեացս, ձերով միջնորդութեամբն կացուցէ զիս յաջակողման դասուն. և կոչեսցէ յիւր յաւիտենական յարքայութիւնն: Օ, ի ընդ ձեզ փառաւորեցից զՀայր և զԱրդի և զսուրբ Հոգին. յաւիտեանս յաւիտենից ամեն:

Թագաւոր Աստուածաբան:

Թագաւոր յաւիտեան: Առ յմեզ Աստուած փրկիչ մեր. և կեցո զմեզ, որ յամի կարողդ ես:

Առ յմեզ Աստուած փրկիչ մեր յոյս ամենայն ծագաց երկրի, և որ ՚ի ծով հեռի:

Ոպատրաստէ զլէրինս զօրութեամբ իւրով. և զգեցեալ է զզօրութիւն. և կեցո ըզմեզ, որ յամի կարողդ ես:

Այլ աղաչանաց մերոց տէր մարդասէր, և
 գթա 'ի մեզ
 Մի զիս անտես առներ. այլ օգնեա ինձ
 մարդասէր:

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց.
 և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն: Այլ
 տուր ինձ ցնծութիւն փրկութեան. և հոգ-
 ւով պետութեան քոյ հաստատեա զիս. այլ
 օգնեա: Մի զիս անտես առներ տէր Աս-
 տուած փրկիչ իմ. այլ շնորհեա ինձ թո-
 շութիւն բազմագութ մարդասէր և կեցո:

Արկինք և երկիր գոհաման զբէն տէր
 արարածք ամենայն քեզ երկիրպագանեն. և
 հրեշտակք 'ի բարձունս աղաղակեն և ասեն
 ողորմեա դու ստեղծեր. մի կորուսաներ:
 Արկինք երկնից ջուրք որ 'ի վերոյ քան
 զերկինս. օրհնեցէք զանուն տեառն. Օհի նա
 ասաց, և եղեն. հրամայեաց և հաստատեցան
 և հրեշտակք 'ի բարձունս: Արկինք և եր-
 կիր հանապազ զքեզ գովեն. թագաւոր փառաց.
 սերովբեք և քերովբեք 'ի խոնարհ ունելով
 զդէմս իւրեանց. և միաձայն բարբառովն
 աղաղակեն և ասեն. սբ՛ սբ՛ սբ՛ տէր զօրու-
 թեանց:

Տարակնի Այլաշխարհեան:

Հայր բազում ողորմ. խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին՝, թող ինձ՝ ըզ մեզս իմ և ողորմեա: Տէր որ գըթացար իկինն քանանացի. գըթա և յիս ՚ի մեղաւորս և ողորմեա. Տէր որ դարձուցեր ըզ մաքսաւորն ՚ի գիտութիւն ճըշմարտութեան՝ դարձո և զիս ըզ մոլորեալս և ողո:

Աստուած բազում ողորմ. խնայեա յարարածս քո Հայր ամենակալ և ողորմեա: Արեգակն արդարութեան ծագեա ՚ի հոգիս մեր ըզ լոյս ճշմարտութեան. և ողորմեա: Տուր մեզ տէր զխաղաղութիւն. և փրկեա ՚ի նեղչաց մերոց հոգիդ ճշմարտուէ. և ողորմեա:

Ինեղութեան իմում օգնեա ինձ տէր իպ երբեմն յովանու և ողորմեա: Պա յանցանաց իմոց մաքրեա զիս տէր. որպէս երբեմն ըզ մաքսաւորն և ող: Ինենգաւոր շրթանց փրկեա զիս տէր և յարենէ ապրեցո և ող:

Օրդման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո Քրիստոս. թող ինձ ըզ մեզս իմ որպէս երբեմն ըզ պոռնրկին. որ միայնդ ես բազմագութ: Անկանիմ առաջի քո Քրիստոս որ հովիւդ ես բանաւոր հօտի՝

խնդրեա և զիս ըզ մուրրեալս. որ միա : Բզ մեզս իմ ցուցից քեզ Քրիստոս որ բը-
 ժիշկդ ես հոգւոց և տէր կենաց. բըժըշկեա
 և զիմ զհիւանդուիս. որ միայն դես բազ :

Ալ ըսանգիմ 'ի բազմութենէ մեղաց իմոց,
 աստըւած խաղաղութեան օգնեա ինձ : Ալ է-
 կոծիմ հողմով անօրէնութեան իմոյ. թագա-
 ւոր խաղ : 'Ի խորս մեղաց ծովու տարաբե-
 րեալ ծփիմ. նաւապետ բարի՛ փրկեա զիս :

Ողորմեա ինձ աստըւած : Իլըսել ըզ
 ձայն փողոյն յահագին աւուրն. յորժամ
 հարկանէ հրեշտակապետն և կոչէ 'ի դա-
 դաստան ող : 'Ի նըստիլ քո յատենի դա-
 տաւոր ահեղ. յորժամ առնես հրախոր-
 ձութեամբ՝ զբըննութիւն որդւոց մարդկան
 ողորմեա ինձ : Աստուածածին անհարսնա-
 ցեալ, սըրբուհի ըզ քեզ աղաչեմք անդա-
 դար ձայնիւ. որ զէակ բանըն հօր 'ի քեզ
 կրեցեր և ծընար անձառապէս. առ նա միշտ
 բարեխօսեա վասն անձանց մերոց : Որ ըզ
 մեռեալն 'ի ճաշակմանէ փայտին յանցանաց
 կենաց փայտիւն կենագործեցեր. սովաւ ըզ
 կեանս մեր պահեա :

ՍԱԳՄՈՒՅ ԶԳՋՄԱՆ ԵՒ ԵՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ :

ԵԼԷՆ՝Է՝ ԵԼԷՆ՝Է՝ :

- 1 Տէր զի բազում եղեն նեղիչք իմ. և բազումք յարեան 'ի վերայ իմ :
- 2 Բազումք ասէին զանձնէ իմէ թէ չիք փրկութիւն սորայ առ աստուած իւր :
- 3 Եւ զո սէր օգնական իմ ես. փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ :
- 4 Չայնիւ իմով ես առ քեզ սէր կարդացից և լուր ինձ իլեռնէ սրբոյ քումէ :
- 5 Ես ննջեցի և 'ի քուն եղէ. զարթեայ՝ և սէր ընդունօղ իմ ես :
- 6 Աչ երկեաց ես 'ի բիւրուց զօրաց նոցա՝ ոյք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս :
- 7 Երի սէր և փրկեա զիս Եստուած իմ. զի դու հարեր զամենեսեան ոյք էին ընդիս թշնամութեամբ 'ի տարապարտուց :
- 8 Տէր Եստուած փրկութեան իմոյ. 'ի տուէ կարդացի՝ և իգիշերի առաջի քոյ :
- 9 Մտցեն աղօթք իմ առաջի քո սէր. խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս իմ :

- 10 Օ՛ի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն 'ի գուր:
- 11 Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի և 'ի մեռեալս ազատ:
- 12 Ես առ քեզ տէր աղաղակեցի. առ աւօտուց աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:
- 13 Ընդէր տէր մերժես զանձն իմ. կամ դարձուցանես զերեսս քո յինէն:
- 14 Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի մանկութենէ իմմէ. 'ի բարձրութենէ խոնարհեցայ և ափշեցայ:
- 15 Յիս հաստատեցաւ բարկութիւն քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս:
- 16 Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ վսն թշուառութեան իմոյ:
- 17 Տէր լուր աղօթից իմոց. ունկնդիր խընդըրուածաց իմոց՝ ճշմարտութեամբ քով:
- 18 Լուր ինձ արդարութիւն քով. և մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քոյ. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:
- 19 Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս իխաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

- 20 Չանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ
խռովեցաւ յիս :
- 21 Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ
յամենայն գործս քո. յարարածս ձեռաց
քոց խորհեցայ. և համբարձի առ քեզ
զձեռս իմ :
- 22 Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր. զի նու-
աղեցաւ յինէն հոգի իմ :
- 23 Մի դարձուցաներ զերեսս քո յինէն.
նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն ՚ի գուբ :
- 24 Ասելի արա ինձ առաւօտուց զողորմու-
թիւնս քո. զի ես իբեզ տէր յուսացայ :
- 25 Յոյց ինձ ճանապարհ՝ յոր գնացից. զի
առքեզ տէր համբարձի զանձն իմ :
- 26 Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց Աստուած.
զի ըզ քեզ ապաւէն ինձ արարի :
- 27 Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես
Աստուած իմ :
- 28 Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ
՚ի յերկիր ուղիղ :
- 29 Վասն անուան քոյ տէր կեցուսցես զիս.
արդարութեամբ քով հանցես ՚ի նեղու-
թենէ զանձն իմ :

- 30 Ողորմութեամբ քով ներեսցես թշնամեաց իմոց և զամենայն նեղչաց անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ:
- 31 'Ի կարդալ իմում լուր ինձ Աստուած ըստ արդարութեան. ինեղութենէ ինձ անդորր արարեր ողորմեաց ինձ. և լուր աղօթից իմոց:
- 32 Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. ետուր ուրախութիւն սրտից մերոյց:
- 33 'Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ ձիթոյ, նոքոք լցուցեր զմեզ:
- 34 Սաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեցից և զարթեաց, զի դու տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:
- 35 Մանից իմոց ունկն գիր տէր. և իմիւս առ զաղաղակ իմ:
- 36 Նայեաց 'ի ձայն աղօթից իմոց. թագաւոր իմ և Աստուած իմ:
- 37 Աս զքեզ աղաչեմ տէր. ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում:
- 38 Մնդ առաւօտս պատրաստ եղէց. յանդիման լինիլ առքեզ:
- 39 Այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից 'ի սուկն քո. և երկիրպագից 'ի աաճար սուրբ քո երկիրդիւ քո:

- 40 Տէր առաջնորդես ինձ յարդարութեան քում. վասն թշնամեաց իմոց. և ուզիղ արա առաջի իմ՝ զճանապարհս քո :
- 41 Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս և մի բարկութեամբ քով խրատեր զիս :
- 42 Ազորմեաց ինձ տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ. զի խռովեցան ոսկերք իմ :
- 43 Անձն իմ յոյժ խռովեցաւ և դու տէր մինչև յերբ :
- 44 Գարձ տէր. և փրկեա զանձն իմ, կեցո զիս տէր ըստ ուղորմութեան քում :
- 45 Եւր տէր ձայնի լալոյ իմոյ. լուր տէր անօթից իմոց. և տէր զխնդրուածս իմ ընկալ :
- 46 Տէր Աստուած իմ՝ ՚ի քեզ յուսացայ. փրկեա զիս յամենայն հալածչաց իմոց. և ապրեցո զիս :
- 47 Գուցէ երբէք յափշտակիցէ որպէս առիւծ զանձն իմ. ոչ ոք իցէ. որ փրկիցէ. և ոչ այն. որ ապրեցուցանիցէ :
- 48 Խոստովան եղեց քեզ տէր ըստ արդարութեան քում. սաղմոս ասացից քեզ բարձրեալ :

- 49 Ասացի 'ի սրտի իմում թէ մոռացաւ զիս
 Աստուած. դարձոյց զերեսս իւր. զի մի
 տեսցէ իսպառ:
- 50 Արի տէր Աստուած իմ. բարձր եղիցի
 ձեռն քո. և մի մոռանար զտնանկս:
- 51 Մինչև յերբ տէր մոռանաս զիս իսպառ
 մինչև յերբ դարձուցանես զերեսս քո
 յինչն:
- 52 Մինչև յերբ դնեմ զխորհուրդս յանձն
 իմ. և ցաւք սրտի իմոյ զաւուրս:
- 53 Մինչև ցերբ բարձրանայ թշնամին 'ի
 վերայ իմ. նայեաց և լուր ինձ տէր Աս-
 տուած իմ:
- 54 Եղոս տուր տէր աչաց իմոց. զի մի եր-
 բեք ննջեցից իմահ:
- 55 Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի
 նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն. թէ ես
 լասանեցայց:
- 56 Աս յողորմութիւնս քո տէր յուսացոյ.
 ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկութեան քում
 օրհնեցից զտէր՝ զբարերարդ իմ:
- 57 Պահեա զիս Աստուած իմ. զի ես 'ի
 քեզ յուսացայ, ասացի տն տէր իմ ես
 դու. և բարիք իմ ինձ 'ի բէն են:

- 58 Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բաժակի իմոյ՝ դու ես. որ անդրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս:
- 59 Ասան այսորիկ ուրախ եղև սիրտ իմ. և ցնծացաւ լեզու իմ. ևս և մարմին իմ բնակեսցի յուսով:
- 60 Յուցցես ինձ զճանապարհս կենաց. լցոյ զիս ուրախութեամբ երեսաց քոց. ՚ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչև իսպառ:
- 61 Առ տէր արդարութեամբ. և նայեայ ՚ի խնդրուածս իմ. ունկնդիր աղօթից իմոց. զի ոչ շրթամբք նենգաւորօք:
- 62 Հաստատեա զշաւիղս իմ իճանապարհի քում. զի մի գայթաղեսցին գնացք իմ:
- 63 Ես առ քեզ տէր կարդացի՝ զի լուար ինձ Աստուած, խոնարհեցո առիս զունկն քո. և լուր բանից իմոց:
- 64 Պահես զիս որպէս բիբ ական ընդ հովանեալ թևոց քոց ծածկեսցես զիս. յերեսաց ամբարը շտացոյք տառապեցուցին զիս:
- 65 Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. յաբեցայց յերևիլ փառաց քոց:
- 66 Սիրեցից զքեզ՝ տէր զօրութիւն իմ. տէր հաստատիչ իմ՝ ապաւէն իմ՝ և փրկիչ իմ:

- 67 Աստուած օգնական իմ. և ես յուսամ
 'ի քեզ՝ ապաւէն իմ. եղջիւր փրկութեան
 իմոյ ընդունող իմ ես :
- 68 Օրհնելով կարդացից առ քեզ. և 'ի
 Թշնամեաց իմոց ապրեցայց :
- 69 Շուրջ եղեն զինև երկունք մահու և
 ուղիք անօրէնութեան խռովեցուցին զիս :
- 70 Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. և ժա-
 մանեցին ինձ որոգայթք մահու :
- 71 Ինեղութեան իմում ես առ քեզ տէր կար-
 դացի. և առ Աստուածդ իմ աղաղակեցի :
- 72 Առ ինձ տէր իտաճար է սրբոյ քումմէ
 ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առա-
 ջի քո մացէ յականջս քո :
- 73 Ի ու լուսաւոր առնես զճրագ իմ տէր
 Աստուած իմ. լոյս արա ինձ 'ի խաւարիւ
- 74 կենդանի է տէր և օրհնեալ է Աստուած
 և բարձր եղիցի Աստուած՝ փրկուէ իմոյ :

Փառք հօր.



Մ = շ Է = ն Կ :

Քրիստոս է իմ Աստուած և փառաւոր
առնեմ զսա. Աստուած հօր իմոյ՝ և բարձր
արարից զսա : Մարդասէր տէր՝ Տարեխօ-
սութեանք սրբբուհւոյ անարատ Մօր քոյ
և կուսի. և վասն խաչի քո պատուականի,
ընկալ զաղաչանս մեր և կեցո զՄեզ :



Ք = ը ո Վ :

Վասն 'ի վերուստ խաղաղութեան. և
փրկուէ անձանց մերոց զոէր աղաչեսցուք :
Տէր ողորմեա :

Վասն լսելի լինելոյ տեառն ան, ձայնի
աղաչանաց մերոց՝ զոէր աղաչեսցուք :

Վասն քաւիչ և ներօղ լինելոյ ան 'ի վե-
րա մեզաց մերոց՝ զոէր աղաչեսցուք :

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս
մեր, զկամաց և զակամայ. զոէր աղաչ...

Վասն զի մի ընդ՝ խոտանսն գտանիցիմք
յաւուրն պատասխանատութեան. զոէր :

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմա-
րիտ և ուղիղ հաւատով 'ի Քրիստոս ննջեցին
զոէր : Այլ ևս միաբան վասն ճշմարիտ և

սուրբ՝ հաւատոյս մերոյ. զտէր. Օ՛ւանձինս
մեր: Ալ զմի մեանս տն՝ անյ ամենակալին
յանձն արասցուք: Ողորմեաց մեզ տէր Աս-
տուած մեր. ըստ մեծի ողորմութեան քում.
ասասցուք ամենեքեան միաբանութիւն տէր
ողորմեա:



Ա շ յ Ե Գ :

Տէր տունջեան և գոյացուցիչ դիշերոյ. որ
արարեր ըզ տիւ ՚ի զբօսանս բարեգործու-
թեան ՚ի փրկութիւն անձանց մերոց. և
զգիշեր ՚ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ
բնութեանս մերոյ. իսկ այժմ՝ զարթուցեալ
բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն ահա-
ւոր և փառաւորեալ անուանդ քում սքյ:
Նկալ և այժմ՝ զաղաչանս մեր. և յաջո-
ղեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր
վարութիւնոյն պաշտօն քո կանխել միշտ.
և նովին կանոնիւս անդադար փառաւորել
զհայր և զորդի և սուրբ հոգիդ. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից:



Խաղաղութիւնի Առնեցոնի:

Օգբեզ, որ յամենայնի զթած և մարդասէր տէրդ ես, աղաչեմք հանապազ. զի զօրացուսցես զմեզ օրըստօրէ. կալ 'ի կարգի կրօնաւորութեան մերում: Թեթևացո տէր զբաղցր լուծ քո. զոր եղեր 'ի վերայ մեր՝ զի կարասցուք կալ 'ի պատուիրանի քում. և զհաճոյսն առնել առաջի քոյ յամենայն ժամ, 'ի տուէ և իգիշերի. հրեշտակային երգակցութեամբ զբեզ օրհնել, զբեզ գովել. գոհութիւնս և փառս մատուցանել ամենազօր տէրութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք. անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ. և յաւիտեանս: Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Հայր մեր որ:





Ընդհանուր թիարք սրբորն յովաննու Կա-
րայետին. և զբիգորի լուսաւորչին մերոյ.
Ներեա քաւա և թող զմեղս իմ:

ՆՐԵՒՇԱՐԱԹԻ:

Բանի պանծալէս հաշրեցոցէլս Ասորոթոյ:

Նորէն: Գլոթ 71: Հմար 2. 4:

Այլ ես անպիտանս յամենայնի, և ո՞ր
քան բան զօրէ՛ պարսաւեալս. որ մինչդեռ
արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ զգաստ ե-
րևիմ՝ թմբրիմ. ՚ի բարեպաշտելս իմում՝
գայթազդիմ. մինչ դեռ աղօթեմս և վրիպիմ.
՚ի յընթանալս իմում՝ և կասիմ, յարդա-
րանալս իմ՝ և մեղանչեմ ՚ի խաղաղանալս
իմում՝ ամբօխիմ. մինչդեռ արշաւեմս՝ առ
՚ի յետոյսն հակամիտեմ. ՚ի չուելն իմում՝
ընդ կրունկն դառնամ:

Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ. ընդ
քաղցրութեն ճաշակ՝ օշինդր խառնեմ. ընդ-
կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանգ-
նելն՝ և կրկին գլորիմ: Օտաղկիմ, և ո՞չ պրտ-
ղաբերիմ. ասեմ, և ո՞չ առնեմ. խոստանամ
և ո՞չ կատարեմ. օւխտեմ և ո՞չ վճարեմ:
Կառկառեմ, և անդրէն ամիբօիեմ. ցուցանեմ,
և ո՞չ ընծայեմ. մերձեցուցանեմ, և ո՞չ մա-
տուցանեմ:

Ի ճարակել խոցուածոյս՝ անդրէն վիրաւորեմ. Ի հաշտեցուցանելն՝ վերստին խոռվեմ. զուր հանդիսանամ, և իրաւամբբ պարտաւորիմ. գրեմ, և իսկոյն եղծանիմ, նաւեմ, և ՚ի գիծն թուլանամ. սկսանիմ, և ՚ի հազիստն ո՛չ ժամանեմ: Աարգիմ, և դարձեալ սասանեմ. լնանիմ, և կրկին հեղում. շարունակիմ աստ, և անդ ՚ի ստորևս հոսիմ. բարդիմ, և անդէն տոչորեմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ:

Օ՛ւայլս խրատեմ, և ես ինքն անխորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք ՚ի ճշմարտութի գիտութե՛ն ոչ հասանեմ: Օ՛ւշիջեալ չարիսն՝ նոյնչափ արծարձեմ. սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ, լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ. և զոյն պատառեմ, խլեմ զեղիճն, և տատասկ տնկեմ: Մնդ ամբառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ ՚ի բոյնն աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. գամ սակաւ մի սպիտակ, և սրանամ դառնամ բնաւին սևացեալ. ասեմ զիս քեզ դաւանել, և սպանողին նուիրիմ. ընդ յանդիման լինելն, և թիկունս դարձուցանեմ:

Մաքրիմ, և այլ մրձոտիմ. լուանիմ, և նովին զազրանամ. կերպարանիմ զղաւթին, և գործք զսաւուղայն կատարեմ. շրթամբք ճրշմարտեմ, և ստեմ երիկամամբք. աջովս մատակատարեմ, և ահեակ կողմամբս աւերմեմ. Ընդ երկրագործութե ցորենոյն՝ որոմն սերմանեմ. ՚ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր իջեալ ես ինքն գտանիմ: Հրեշտականամ յերեսս, և ՚ի խորհուրդս դիւանամ. ՚ի յոտս հաստատիմ, և ՚ի միտս տատանիմ. սուտ ձեւանամ, և իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար, և արդեամբք ամբարշտեմ: Վասիմ ՚ի պարս հեզոց, և ընդ այսս կաքաւեմ. ՚ի մարդկանէ գովիմ, և ՚ի տեսողէդ պարսաւիմ. ՚ի հողածնելոցս երանիմ, և յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ յետին ռամկին, և թագաւորիդ մեծի յաջաց ելանեմ: Օտեանն դատաւորին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. հերքեալ ՚իվե հիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնովս արտաբուստ պճնիմ, և անձամբս երփնիւ ծային ծանաչիմ. հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոցս արտաքս մերժիմ: Այսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար. զոնէրունի պատուէրն լքեալ, թելադրութե օձին հետե-

ւիմ. արիանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ. զծանրութի աւուրն բառնամ, և ՚ի ժամ վարձուն անմասն ելանեմ. ՚ի բացուստ ճոռոմս խօսիմ, և ՚ի սլատասխանատուութեն սլահու սլապանձեալ կարկիմ. ՚ի յելս արևուն հարուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ: ՚Ի յաթոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ. ննջեմ խեթիւ, և աբհաւրօք զարհուրեալ զարթնում: Օ, անդաստանս կամօցս՝ չարաչարս հերկեմ, փոյթ խնամով ՚ի չարիս. միշտ անառակ որդիս. անդարձ տարագրեալս անզըղջական զառածեալս. անմխիթար տըրտմեալս. ինքնագրաւ գերեալս. մահու և ապականութե՛ն ծառայեալս. անողոքելի տանջեալս. անփրկելի մատնեցեալս. անսլատուաստելի հատուածեալս. անարժարժելի շիջուցեալս. անկազդուրելի խորտակեալս. անհանդերձելի կործանեալս:

Մ, յլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր՝ բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս, Մստուծոյ կենդանւոյ միածին որդի, հզօ՛ր, բարձրեալ, անքննին, անձառ, քաւիչ, սահաւոր, սաստեան ՚ի ձմեռն ամբօխեալ ալեաց ոգւոյս ծիանաց. արձանացո՛ զժարաւս

մուլեզին շարժման սրտիս խռովութե՛ն, ընդ-
 ոտնեան 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռն-
 ման՝ զցնդեալ մօացս վայրադութի: Աղիցի
 խաղաղութի՛ն հրամանաւ մեծիդ՝ ամենավա-
 րան բքոյս սասանման. սատակեան խախտնեան
 զբազմագլխեան անդամս ուրուականս գաղտ-
 նեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հինկց:

Վրեցե՛ս աղօթս մտամացոյցս զայս նորըն-
 ծայ տառ ողորմաղերս թախժագին ձայնի ող-
 բերգարկութե՛ն այսր մատենի: Հան՝ 'ի խորոց
 մահուս անդնդոց՝ չքնաղ ապրեցեալ, ընդ
 մարգարէին փրկելոյ. ընկալ զխոստովանութի
 անձնադատ բանիս 'ի հօտ անուշից. շնոր-
 հեան մխիթար դառնութե՛ն վշտաց ուժգին հե-
 ծութե՛ն յուսահատելոյս: Աւ քեզ ընդ հօր
 հողւովդ սրբով փառք պատիւ և իշխանութի՛ն
 յաւիտեանս. ամէն:

Աղօթի աստուծոյն աստուծոյն Աստուծոյն

Ո՛վ ամենայն Սուրբք Աստուծոյ, հաճո-
 յական ծառայք և հարազատ կամարարք նո-
 րին: Անարատ տաճարք, մաքուր բնակա-
 րանք՝ և ամենազուարճ հանգիստք ամենա-

սրբոյ Երրորդութեն: Ի մարմնի անմարմնացեալք, և ի յերկրի հրեշտակացեալք. Ծնեալք ի տոհմէս ադամայ, ի յերկինս կենցաղավարեալք՝ և ընդ հրեշտակսն դասակցեալք: Ի յերկրի հալածեալք՝ նեղեալք և չարչարեալք՝ և ի յերկինս փառաւորեալք՝ պսակեալք՝ և ընդ Քրիստոսի թագաւորեալք: Պարծանք հաւատացելոց՝ և ուրախութիւնք հրեշտակաց: Լուսաւորիչք աշխարհի՝ և զարդք վերին գաւառի: Եպաւէնք և օգնականք երկրաւորացս, զինուորակիցք և պարակիցք երկնային զօրացն: Յոյս և ակնկալութիք մեղաւորաց՝ և համարձակ բարեխօսք առ Եստուած: Սք Յօհաննէս մկրտիչ. սուրբ Ստեփաննոս նախաւկայ. սուրբ Եռաքեալք և Մարգարէք. սուրբ Հայրապետք և Վարդապետք. սուրբ Մարտիրոսք և Ճգնաւորք. սուրբ Վուսանք և Միանձունք, և ամենայն Սուրբք հինք և նորք. որ յայտնիք և որք անյայտք:

Եղաչեմ զձեզ. վասն սիրոյն Քրիստոսի զոր ունիք առ նա. վասն սիրոյ և ազգակցութեան ձերոյ զոր ունիք առ մեզ. վասն սուկալի չարչարանաց ձերոց զորս կրեցիք. և վասն սրատուական արեան ձերոյ զոր հեղիք

վասն անուանն Քրիստոսի՝ և վասն մերոյ փրկուէ. վասն երախտեաց և բարերարուէց ձերոց զորս ունեցայք և ունիք առ մեզ. ու զորմեցարուք տառապեալ ծառայիս ձերոյ. և հասէք յօգնութի տկարութեա իմում:

Քանզի՝ դուք զփորձն առեալ էք, և գիտէք իսկ. զի բնութի մեր սխալական է և դիւրասահ. մարմին մեր դիւրապատրելի է և մեղսասէր և անյագ ցանկացող յամենայն վնասակարս հոգւոյ: Աշխարհս է յամենայնի որոգայթաւոր՝ լի սոսկատեսիլ և թունաւորեալ փաղաքշանօք. ունող բազմատեսակ սպտրանաց և խաբէութեց՝ և տուն ամենակերպ փորձութեանց. և թշնամին միշտ առ ընթեր՝ դրող և յորդորող:

Արդ՝ ո՞վ երանեալք և փառաւորեալք. դուք զայս ամենայն տեսիք և զփորձն առիք. բայց շնորհօքն Աստուծոյ զօրացեալք՝ առ ոտն հարիք զամենեսեան, և յաղթեցիք քաջութիւն. և իշրելով զորոգայթս սոցին՝ ապրեցայք և թռայք յերկինս՝ և առիք զհանգիստն յաւիտենից: Աւրեմն՝ որք զփորձն առիք, կարող էք և մեզ փորձանաւորացս օգնական լինիլ:

Վասն որոյ՝ աղաչեմ զձեզ ո՛վ Սուրբքդ
 Աստուծոյ՝ օգնեցէք ինձ փորձանաւոր և մե-
 զաւոր ծառայիս ձերոյ. փրկեցէք զիս յամե-
 նայն որօգայթից և ՚ի փորձութեանց. ՚ի հո-
 գևոր և ՚ի մարմնաւոր թշնամեաց. և սպ-
 հեցէք զիս յամենից մեղսառիթ պատահ-
 մանց և ՚ի բնաւից հոգեմլաս ընթացից:
 Եւ բարեխօսեցէք առ Աստուած՝ զի ներե-
 ցէ ամենից սխալանաց իմոց. և թողցէ զա-
 մենայն մեղս իմ. և սպհեացէ զիս ըստ հա-
 ճոյից կամաց իւրոց, որքան ՚ի մարմնի եմ:
 Եւ յետ աստի կենացս, արժանացուցէ
 իւրոյ քաղցր և օրհնեալ տեսութեանն:
 Օ՛վ ընդ ձեզ և ես փառաւորեցից զՆայր
 և զՈրդի և զսուրբ Հոգին յաւիտեանս
 յաւիտենից ամէն:

Թագաւոր և Մարտիրոս-Յեան:

Թագաւոր յաւիտեան: Երկայնամիտ ես
 տէր առ ամենեսեան. և դթա տէր ՚ի վերա
 մեր որպէս և յաւազակին փրկիչ. և կեցո:
 Երկայնամիտ բազում ողորմ և ճշմարիտ՝

նայեաց առիս, և ողորմեաց ինձ: Տուր զօրութիւն ծառացի քո կեցո զորդի աղախնոյ քոյ. և արա առիս նշան բարութեան. և գթա տէր 'ի վերա մեր որպէս յաւազակին փրկիչ և կեցո:

Տէր որ գթացար յաւազակն խաչակից լինիլ քեզ. և մաքրեցեր զաղտեղութիւն յանցանաց նորա. յաղբերէ կողի քոյ. գթա և յիս 'ի մեղաւորս, որ ծարաւիս եմ առ քեզ և փափգիմ 'ի գաւիթս քո. որպէս զմի 'ի յեղջերուաց 'ի յաղբերս. Զուրց:

Մարտեաւ ընդիս թշնամին. հանապազ զիս կամի կորուսանել. այլ դու տէր իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո:

Մարտեան ընդիս 'ի տարապարտուց. և փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի: Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ. այլ դու տէր իմ այց արա մոլորեալ ոչխարիս. և կեցո: Ար հովիւդ ես հօտից բանաւոր կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց ապաշխարութեան, և դարձո զմոլորեալս 'ի հօտ քո Քրիստոս. և կեցո:

Մեղաց և աղաչեմ զքեզ. թողութիւն

շնորհեա մեղաց խնոց. քաւիչ իմ լեր քո
գթութեամբդ, որ միայնդ ես փրկիչ. և կեցո:

Մեղայ տէր մեղայ և զանօրէնութիւնս իմ
ես: ինձէն գիտեմ: Աղաչեմ և խնդրեմ 'ի
քէն, թող ինձ տէր թող ինձ. և մի կորուսա-
ներ զիս ըստ անօրէնութեան խնոց. քաւիչ
իմ լեր քո գթութեամբդ որ միայնդ:

Մեղայ քեզ տէր. մեղայ քեզ տէր. մե-
ղայ, և քան զաւագ ծովու բազում են յան-
ցանք իմ. պատրանք աշխարհիս խաբեցին
զիս. և եղէ անպտուղ 'ի կենաց յուսոյդ.
այլ դու անոխակալ և անյիշաչար փրկիչ.
խնայեա 'ի մեղուցեալ ծառայս, և կեցո:



Շաբաթի Այսշաբաթեան:

Օտլ կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարու-
ցանէ: Նաւապետ բարի՛ լեր անձին խնոց
ապաւէն:

Մերձ եմ յընկղմիլ օգնեա ինձ նաւապետ
բարի՛. քանզի ծանրացան 'ի վերայ իմ բե-
ռինք մեղաց: Աստուած յօգնել ինձ փու-

Թայ քանզի խորք չարեաց ընկղմեն զիս
յանդունդս. այլ դու նաւասպետ լեր և ինձ
ձեռնտու: Փրբրկեա ՚ի վըտանգե ըզ նաւա-
բեկս ՚ի յալեաց ծովուս. քանզի կորընչիմ
՚ի մեղաց անօրէնութեան իմոյ:

Աղաչեմ զքեզ տէր սլարգևեա ինձ,
ապաշխարութեամբ լըւանալ զմեղս իմ և
ողորմեա: Օգարտասուս իմ և զհառաչանըս
սըրտի իմոյ. մարդասիրութեամբըդ քո ըն-
կալ տէր և ող: Մերձեսցին խնդրուածք
իմ առաջի քո տէր. բարերարութեամբըդ
քով խնայեա յիս և ող:

Աղաչեմ ըզ քեզ հայր երկնաւոր. մի
դարձուցաներ զերեսս քո յինեն. զի նե-
ղեալ եմ ես վաղվաղակի լուր ինձ տէր:
Մոլորեալ անձն իմ անօրենութեամբ. մի
կորուսաներ զիս տէր նտանօրենութեան
իմոյ. որ խնդրողդ ես մոլորեալ ոչխարիս:
Օանրացեալ մեղօք ընկըղմի անձն իմ.
ընկալ զիս որպես երբեմն ըզ պետրոս. որ
ծփիմս ալեկոծեալ յանցանօք:

Մեղայ տէր բազում ողորմ Մատուած
մեղայ ողորմեա:

Մեղայ տէր և անկանիմ առաջի քոյ. մե-
ղայ ողորմ:

Մեղայ տէր խոստովանիմ ըզ յանցանս
իմ. մեղայ ողո:

Մեղայ քեզ տէր քաւեայ զիս: Մե-
ղաք անօրինեցաք ամենեքեան ոչ պահե-
ցաք ըզ պատուիրանըս քո. մեղայ: Դար-
ձիր տէր ՚ի բարկութենէ քումմէ. անցո
՚ի մենջ ըզ ցասումըն քո. մեղա: Ըզ
քեզ աղաչեմըք հանապազ սուրբ Աս-
տուածածին. բարեխօսեա Քրիստոսի ան
մերոյ փրկել ըզ մեզ ՚ի փորձութենէ.
և յամենայն վըտանկից մերոց: Դ միու-
սանգամ քոյ գալըստեանըն յերևիլ սուրբ
նըշանիս. արժանի արա ըզ ծառայս քո
վերըստին նորոգման. զի դու:



ՍԵՂՄՈՍ ՕՂՋՄԵՆ և ԵՊԵՇ-
ԻՆՐՈՒԹԵԼՆ:

ԱԼԷԼ՝Է՝ Ե՝ Ե՝ Ե՝ Ե՝ :

- 1 Օ՞յանցուածս իւր ով կարէ առնուլ ՚ի միտ. ՚ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս տէր և յօտարէն պահեա զծառայս քո:
- 2 Եղիցին քեզ հաճոյք բանք բերանոյ իմոյ. խրհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ. տէր օգնական իմ, և փրկիչ իմ:
- 3 Աստուած, Աստուած իմ, նայեաց առիս ընդէր թողեր զիս. հեռի եղէ ՚ի փրկուածեանէ իմմէ վասն բանից յանցնց իմոց:
- 4 Աստուած իմ. ՚ի տուէ կարգացի առ քեզ և ինձ ոչ լուար. ՚ի գիշերի և ինձ ոչ անսացեր:
- 5 Այլ ես որդն եմ. և ոչ եմ մարդ. նախափինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց:
- 6 Ի՞նչ ես որ հաներ զիս յարգանտէ. յոյս իմ ՚ի ստեանց մօր իմոյ:
- 7 Ի՞նչ քեզ անկոյ ես յարգանտէ. յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ:

- 8 Մի ՚ի բացեայ առներ յինեն զինեղուիք մերձեալ են. և ոչ ոքէ որ օգնէինձ :
- 9 Դու տէր մի հեռի առներ զգթութիւնքո յինէն. և տէր յօգնել ինձ նայեաց :
- 10 Երկիցէ ՚ի քէն տէր ամենայն զավակն խորոյելի. զի ոչ արհամարեցեր, և ոչ անարգեցեր զաղօթս աղքատի. և ոչ դարձուցեր զերեսս քո յինէն. այլ ՚ի կարդալ իմում առ քեզ լուար ինձ :
- 11 Ի քենէ գովութիւն իմ, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ :
- 12 Օղոխոս իմ կատարեցից առաջի ամենայն երկուղաճաց քոց :
- 13 Տէր հովուվեայ զիս. և ինձ ինչ ոչ սկահասեցի :
- 14 Ի վայրի դալարւս ջ անդ բնակեցոյ զիս և առ ջուրս հանգստեան սնոյ զիս :
- 15 Դարձոյ զանձն իմ առ իս. և առաջնորդեայ ինձ ՚ի ձանապարհս արդարութեան վասն անուան քո :
- 16 Թեպետ և գնացից ես ՚ի միջ ստուերայ մահու. ոչ երկիրայց ՚ի չարէ. զի դու տէր ընդ իս ես :
- 17 Յուպ քո և գավս՛ղան. նոքա մխիթարերեսցեն զիս :

- 17 Ողորութիւն քո տէր զհետ իմ եկեսցէ
 զամենայն աւուրս կենաց իմոց բնակիլ
 ինձ 'ի տան տն ընդ երկայն աւուրս:
- 18 Առ քեզ տէր համբարձի զանձն իմ.
 Աստուած իմ 'ի քեզ յուսացայ մի ամա-
 չեցից և մի ծիծաղեսցին զին և թշնամիք իմ:
- 19 Օ՛ ճանապարհս քո տէր ցոյց ինձ և զա-
 ւիղս քո ուսո ինձ:
- 20 Առջնորդեա ինձ 'ի ճշմարտութեան
 քում. և ուսո զիս զի դու ես Աստուած
 փրկիչ իմ. և ես քեզ համբերեմ զոր
 հանապազ:
- 21 Յիշեա տէր զթութիւնս քո և զողորմու-
 թիւնս քո որք են յաւիտենից:
- 22 Օ՛ մեղս մանկութեան իմոյ և զանգիտու-
 թեան իմոյ մի յիշեր. այլ յիշեա զիս տէր
 ըստ ողորմութեան քում. վասն քաղցրուե-
 քոյ տէր. զի քաղցր և ուղիղ ես:
- 23 Վասն անուան քոյ տէր քաւիա զմեղս
 իմ. զի բաղումք եղեն:
- 24 Աչք իմ յամենայն ժամ առ քեզ են
 և դու հանցես յորոգայթէ զոտս իմ:
- 25 Նայեաց առիս և ողորմեաց ինձ զի միա-
 մօր և աղքատ եմ ես:

- 26 Կեղուծիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ. և ՚ի վշտաց իմոց հան զիս :
- 27 Տես զխոնարհութի իմ և զվաստակ իմ. և թող ինձ զամենայն զմեղս իմ :
- 28 Տես զթշնամիս իմ. զի բազում եղեն ատելութեան զոր ինանիր ատեցին զիս :
- 29 Պահեա զանձն իմ. և փրկեա զիս և մի յամօթ եղեց՝ զի յուսացայ ՚ի քեզ :
- 30 Տէր լոյս իմ. և կեանք իմ. ես յումմէ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց :
- 31 Ի մերձենալ առիս չարաց յուտել զմարմին իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան :
- 32 Թէ պատրաստիցի ՚ի վերայ իմ պատերազմ. ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ սակայն և յայսմիկ ՚ի քեզ տէր յուսացայ :
- 33 Լուր տէր ձայնի իմում. զի կարդացի առ քեզ. ողորմեաց ինձ և լուր ինձ. զի քեզ անսաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո Տէր խնդրեցի :
- 34 Մի դարձուցաներ զերեսս քո յինին. և մի խոտորիւր բարկութիւն ՚ի ծառայէ քումմէ :
- 35 Օգնական իմ լեր Տէր մի՛ անարգեր զիս. և մի թողուր զիս՝ ա՛յ փրկիչ իմ :

- 36 Հայր իմ և մայր իմ թողին զիս. և զուտէր ընկալար զիս:
- 37 Օրենսգէտ առա զիս տէր 'ի ճանապարհի քում. առաջնորդեալ ինձ 'ի շաւիղս քո ուղիղս:
- 38 Վասն թշնամեաց իմոց. մի մատներ զիս 'ի ձերս նեղչաց իմոց:
- 39 Հաւատացի տեսանել զբարութի՛ն յերկրին կենդանեաց. համբեր Տեառն և քաջաւերեաց զօրացի սիրտ քո և համբեր Տն:
- 40 Առ քեզ Տէր կարգացի ան իմ մի լուր յինին. մի երբեք լուսցիս յինէն. նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջան են 'ի գուբ:
- 41 Առ Տէր ձայնի խնդրուածաց իմոց յաղաչել ինձ առ քեզ. 'ի համբառնալ ձեռաց իմոց 'ի տաճար սուրբ քո:
- 42 Մի համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. և մի ընդ այնոսիկ՝ ոյք գործեն զանօրենութի՛ն կորուսաներ զիս:
- 43 Օրհնեալ ես ան զի լուար ձայնի աղօթից իմոց. տէր օգնականիմ և պաշտպանիմ:
- 44 'ի քեզ յուսացաւ սիրտ իմ. օգտեցաւ և զուարճացաւ մարմին իմ. և ես կամօք իմովք խոստովան եղից քեզ:
- 45 Բարձր առնիմ զքեզ տէր՝ զի ընկալար

- զիս. և ոչ ուրախ արարեր զԹշնամիս իմ
 յիս:
- 46 Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և
 բժշկեցեր զիս. Տէր հաներ 'ի դժոխոց
 զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ. ոյք
 իջանեն 'ի գուբ:
- 47 Աս ասացի 'ի բարեկենդանութե՛ն իմում,
 թէ ոչ սասանեցայց յաւիտեան:
- 48 Առ քեզ տէր կարդացի՝ առ Աստուած
 իմ աղաղակեցի. զինչ օգուտէ քեզ յա-
 րենէ իմմէ թէ իջանիմ ես յապականուի:
- 49 Մի թէ հող խոստովան առնիցի առ քեզ
 կամ պատմեսցէ զճշմարտութիս քո:
- 50 Ի ուր ինձ տէր և ողորմեաց. և տէր լեր
 իմ՝ օգնական:
- 51 Դարձոյ զսուգ իմ յուրախութի. զերձ
 յինէն զբուրձ. և ինձ զգեցոյ զուրախուին:
- 52 Որպէս սաղմոս ասացին քեզ փարբ իմ.
 և մի զղջացայց. Տէր Աստուած իմ յա-
 լիտեան խոստովան եղեց քեզ:
- 53 'Ի քեզ տէր յուսացայ՝ մի ամաչեցից
 յաւիտեան. յարդարութե՛ն քում փրկեա՛
 զիս. և ապրեցո՛ զիս:
- 54 Խոնարհեցո՛ առիս զուսնկն քո. վաղվա-
 ղեա՛ 'ի կեցուցանել զիս:

- 55 Եր իմ աստուած սլաշտսլան. և տուն
ապաւինի ապրեցուցանել զիս. զի հզօրիչ
իմ. և ապաւեն իմ դու ես:
- 56 Վասն անուան քոյ առաջնորդեսցես ինձ
և սնուսցես զիս. և հանցես զիս յորոգայ
թէ յայսմանէ՝ զոր թագուցին ինձ:
- 57 Դու ես սլաշտսլան իմ տէր և 'ի ձերս
քո յանձն առնեմ զհոգի իմ:
- 58 Ես 'ի քեզ տէր յուսացայց. ցնծայցայց
և ուրախ եղէց 'ի փրկութե քում:
- 59 Օ՛ր հայեցար 'ի խոնարհութիւն իմ. և
փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ. և ոչ մատ-
նեցեր զիս 'ի ձերս նեղչաց իմոց և կացու-
ցեր յանդորրուզոտս իմ:
- 60 Ողորմեաց ինձ տէր. զինեղեալ եմ ես.
խռովեցաւ 'ի սրամտութէ՛ ալն իմ անձն
իմ և փոր իմ:
- 61 Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ. և ամբ
իմ յոգոց ելանելոյ:
- 62 Աղքատացաւ 'ի տկարութէ՛ զօրուի իմ.
և ոսկերք իմ խռովեցան:
- 63 Քան զամ թշնամիս իմ եղէ ես նախատ
դրացիաց իմոց. յոյժ ահ՝ և երկիւղ ծանօ-
թից իմոց:

- 64 Ամենեքեան ոյք տեսանեն զիս. արտաքս
փախչին յինեն:
- 65 Մորացեալ եմ ես որպէս մեռեալ 'ի
սրտէ և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ
այլ ես 'ի քեզ տէր յուսացայ:
- 66 Ասացի դու ես ան իմ և 'ի ձեռս քո է
Ժառանգութի իմ:
- 67 Փրկեա զիս 'ի ձերաց թշնամեաց իմոց.
և 'ի հալածչաց իմոց:
- 68 Արևեցո զերեսս քո 'ի ծառայս քո. ապ-
րեցո՞ զիս տէր ըստ ողորմուէ քում. Տէր
մի յուսօթ եղեց. զի կարդացի առ քեզ:
- 69 Աս ասացի 'ի զարմանալ իմում. թէ ըն-
կեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:
- 70 Ասան այսորիկ լուար ձայնի աղօթից
իմոց. յաղաղակել ինձ առ քեզ:
- 71 Օհանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ. դար-
ձայ 'ի թշվարութի իմ. զի հարան յիս
փուշք:
- 72 Օմեղս իմ ցուցի քեզ. և զանօրէնուիս
իմ ոչ ծածկեցի 'ի քէն:
- 73 Ասացի թէ սրտամեցից յինէն զմեղս իմ.
և դու թողցես զամ ամբարշտութիս մե-
ղաց իմոց:

74 Գու ես ապավէն իմ 'ի նեղութէ յայս-
մանէ. որ շուրջ եղև զինև:

75 Ազիցի ողորմութիւն քո տէր 'ի վերայ
մեր. որպէս յուսացաք 'ի քեզ:

76 Խնդրեցի 'ի քէն տէր և լուար ինձ յաւ
նեղութէ իմմէ փրկեցեր զիս:

Փարք հօր և որդոյ:

Մ = շ Է = Ի Կ:

Տուք փառս Աստուծոյ տուք օրհնութիւն
մարդասիրին՝ Թագաւորին յաւիտենից. որ
փրկե զժառայս իւր և կեցուցանէ:

Մարդասէր տէր. վասն սրբուհոյ անարատ
մօր քոյ և կուսի. և վասն խաչի քո պատու-
ականի տէր ընկալ զաղաչանս մեր. և կեցո
ղմեզ:

Ք = Ը Դ Զ:

Վասն 'ի գիշերի և խոունջան. և յաւ
ժամու խօսիլ մեզ զբան տեառն. զտէր ա-
ղաչեսցուք:

Վասն ջանկանելոյ մեզ 'ի փորձութի ո-

րում ոչ կարեմք հանդուրժել. զտէր աղա-
 չեցուք:

Վասն ամբիծ և անդատապարտ կալ մեզ
 առաջի ահեղ ատենին Քրիստոսի: զՏէր ա-
 ղաչեցուք:

Վասն առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահան-
 գիսոն կենաց անլախճանից: զՏէր աղաչե-
 ցուք:

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչ-
 ման և երկնից արքայութե. զտէր աղաչեցո՛ց:

Վասն հոգևոցն: Եւ ևս միաբան: Օ, ան-
 ձինս: Ողորմեաց: Տէր ողորմեա. տէր:

Ե. 2. Ե. 4:

՚ի գիշերի և ՚ի տունջեան և յամ ժամու
 զքեզ աղաչեմք. և իբէն խնդրեմք մարդա-
 սէր տէր: Եւ ուր մեզ Մատուած փրկիչ մեր.
 խոնարհեցի ունկն քո ՚ի խնդրուածս մեր.
 զի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց:
 Եւ համարեա զաշխատութիս մեր ՚ի գործ
 արդարութե, և ՚ի պտուղ Մատուածապաշ-
 տութե: Եւ կալ տէր զաղօթս և զերկրպա-
 գութիս մեր. և հատո մեզ զողորմութի քո

առատապէս: Օճկեա զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյ քո: Օ՛որացո զմեզ տէր զօ-
րութի սուրբ հոգւոյդ. պահեա զմեզ որպէս
բիրական:

Աւ արա առ մեզ զնշան բարի. ՚ի գովեստ
և ՚ի փառաբանութի անուանդ քում սրբոյ:
Օ՛ի ՚ի քո փառս կատարի՝ ամ արարածոց
մշտնջենաւոր փառաբանութի ՚ի բարձունս՝
հօր և ողորոյ և հոգւոյն սրբոյ՝ այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն մեծոց:


Հովիւ քաջ հովիւ բարի՝ և յաւիտենա-
կան: Այցեաց և այց արա բանաւոր հօտի քո
զոր ժողովեցեր առ քեզ գթութի քով: Օ՛ի
քո առաջի կամք տէր. և առ ՚ի քէն ողոր-
մութենցդ և գթութեցդ ակն ունիմք: Օ՛ա-
մենեսեան օրհնեա. զամենեսեան խմաստ-
նացս զամենեսեան լուսաւորեա. և ամենե-
ցուն պարգևեա զերկնից առբայութիւնդ:
Վասն զի դու ես տէր կենաց. և Աստուած
ողորմութեց. և քեզ վայելէ փառք ի շխանու-

Թի և պատիւ. այժմ և միշտ. և յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Պի Գիշերի և ՚ի տունջան՝ և յսր ժամու
անդադար փառաւորեմք զհայր. և զորդի՝ և
զսուրբ զհոգիդ. այժմ, և միշտ, և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր որ յերկինս:







Հայր սբ զքեզ ունիմ յիջնորդ և բարեխօս:



ԶՈՐԵՔՆԵՆԹԻ:

Ուճեւդո-էէ-ն անձն խոստովանութեամբ:

Նախ: ԳԼԽ 27:

Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեց վերընձայելոց զգրութիւն թուոցս յարմարեցի կական և հեծութի, հառաչանք կողկողազինք, դառնութե լալումն և արտասուաց երգ, դարձեալ սկսայց զճառ սլաղատանացս՝ խոստովանօրէն զղջականաբար, ըզգաղտնաձածուկն յայտնաբարբառ, զի անդրադարձութի սկզբամբն՝ և վերջաւորօքն բառիւք, զնոյն համաձեռութի՝ ՚ի մի թախանձ նմին մաղթանաց՝ հոգ եկեցոյցն խոնարհուե՛ստատանօր եղից:

Մեղայ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ:

Մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ:

Մեղայ շնորհացդ անբաւերախտեաց արդար և մեղայ:

Մեզայ սիրոյդ վերնում գթութե՛ն, յայտնապէս մեզայ:

Մեզայ ստացողիդ յոչ էութե՛ն, ստուգապէս մեզայ:

Մեզայ ծաշակման անձառդ կենաց, բազումս մեզայ:

Մեզայ անհաս պարգևացդ ձրից, հանապաղ մեզայ:

Մեզայ գովեալ մարմնոյդ Աստուծոյ մահու չափ մեզայ:

Մեզայ պաշտելի արեան արարչիդ, իսկապէս մեզայ:

Ահա՛ արդարև օրհնեալ է հատուած բանի՛ յուսադրական սրաի՛ սյսր մեզայի. սոյն սա՛ սրտուէլի աւանդ. անմոռաց պատուէր. հայրենեացն տուր նախահարցն օրէն. համայնից թոշակ. անհերքելի բան. զօրաւոր սրտասխանի. կենդանութե՛ն կամուրջ. ախորժելի վերնոյն. սիրելի սրբոց. անխղելի կապ. հրաշալի բարբառ. անշրջելի սլատձառ. բաղձալի աղերս. փափաքելի սեղան. սրտաբեկ հնչումն. անհնարից ձարակ. կարծրութե՛ն վանիչ. աստուածապաշտից սահման. հեթանոսաց գիրք. վաղնջուց կանոն. քրիստոնէից հարագստ. արարչութենն յալթող. անջրպետ

հզար. խորոց ահաւոր. արուեստ բարձրուէ. խորութի անչափ. հիացման տեսիլ. խորհուրդ կընքեալ, ընդ որ չի՛ք ումեք անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման՝ զսա ծանիցէ: Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ ըզմկրտութե հարադատս:

Մեզայ երախտեացդ մոռացութե, վերստին մեզայ:

Մեզայ մարմնոյ ձեռն՝ յողի հարեալ, յիմարս մեզայ:

Մեզայ առ կեանսդ դժբողութի, իսկ և իսկ մեզայ:

Մեզայ բանիդ ապախտ առնելոյ չարաչար մեզայ:

Մեզայ ՚ի յօր սատակման՝ ինձէն ըստիպեալ, վատթարս մեզայ:

Մեզայ պարտականս անկենդան մահուն, ձաղելիս մեզայ:

Մեզայ անպատկառս քո բարձրութեան, տաղտկալիս մեզայ:

Վերջին ինձ կրկին աշխարհ հոգևոր, զի ՚ի կորուստ և ՚ի կործանումն ինձ երևեցայ. զի անդարձս վարատեցայ զի որդիս՝ թշնամի գրեցայ. զի ՚ի բարձանցն երկնից ընկե-

ցայ. զի փուշս վարուց դիզի: Աւ ևս առ սմին
 ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անար-
 գեցի. զի բագին կորուսչին գտայ: Այլ իմն
 կոկիծ դժընդակ սրտի, զի զիս ունին՝ առ որ
 չեմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր
 զբռեալ որմս գարշունակ, զսին պարծանօք
 պաճուճեալս, զլոյսս՝ ՚ի մոռայլ շրջեալ, ըզ-
 գերանակիր ակնս՝ թշուառացեալ, զջահս
 փառաց՝ շիջեալ, զամիւս՝ յամի ամ իրօք
 մնասակարս, առ տնօրինականսն տէրունա-
 կանս, առ յայտնութիսն ամայինս, առ երև-
 մունսն արարչագիրս, առ խոնարհութիսն
 սարսափելիս, առ այն՝ զոր տեսի աչօք իսկ
 իմովք: Արդ՝ այսօքիկ են մեղաւորիս իմ
 կշտամբութիւնք, և ինքնահարուած տան-
 ջանաւորութի: Աւ քանզի կարօղ ես զայս
 ամ զպարտս թողուլ, և զխայթուածս մա-
 հու բժշկել՝ տէրողորմութեանց, ամ բոլո-
 ըից, քրիստոս թագաւոր՝ բարձրեալ հօր որ-
 դի, ստեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհնեալ՝
 առատ՝ հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած,
 տեսուչ՝ ձեռնկալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝
 դարմանիչ՝ կեցուցիչ, երկայնամիտ՝ անոխա-
 կալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր,
 անճառ՝ լոյս՝ կեանք, յարութի՝ նորոգութի՝

քաւութիւն, եթէ հայեսցես մարդասիրութիւն,
 ըստ որում քոյրեն սովորութիւնք, նայեցեալ
 ՚ի քեզ՝ կողկողիմ և ես: Այն լուսիցէս, հա-
 ռաչեմ. եթէ ունկն մատուցանիցէս, սլաղա-
 տիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներես-
 ցես, աղաչեմ. եթէ առիս դառնայցես, գո-
 չեմ: Այլ եթէ անտես առնիցես, կործանիմ.
 իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ
 զոգեսպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա
 եթէ ահարկու դէմս ցուցանիցես սատակիմ.
 իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ
 տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս,
 սարսաիեմ. եթէ հալածես հեծեմ. իսկ ե-
 թէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ. եթէ
 զբոց վհատութես ոչ առցէս. տագնապիմ.
 եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառ-
 նաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ.
 ապա եթէ ուժգինս ա՛նարկես, սուղսնիմ.
 եթէ ոչ անխայցեսցես, մերժիմ. եթէ կոչես-
 ցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ա-
 մաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ, զբա-
 րեացն սարգև մատնեալ. զէրանութիւն թո-
 ղեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ. զա-
 ւանդն կենաց՝ մոռացեալ. զհամարձակուեն
 վստահութի՛ կորուսեալ. զստեղծիչդ էիցս՝

բարկացուցեալ. զանճառուի շնորհին՝ ընդոտնեալ. զպատուոյն պատկեր՝ այլայլեալ: Իսկ եթէ առայս խեղդ մահու հեծուէ ցուոյ մարդասիրեալ՝ առիս ժամանեցուսցես՝ տէր Յիսուս Քրիստոս՝ զազդեալն գիր լընանիլ ՚ի յիս, եթէ բժշկութի՛ դադարեցուցանէ զմեզս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութիւն պատուաստեալ ՚ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նրկարեալ յոգի՛ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին ՚ի փրկութի՛ անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգևովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:



Աղօթք առ ամենաբարեւոյն Աստուծոյն Սարգիս:

Յետ այսքան վշտագնեալ անճամբ՝ բազխելոյ զդուռն ողորմութեան Աստուծոյ մերոյ և միածնի որդւոյ քոյ Յիսուսի Քրիստոսի, այժմ՝ լալագին դիմօք առ քեզ դիմեմ՝ զմաքուր ոտիւք քովք փարիմ և բազխեմ զդուռն մարդ ողորմութեան՝ ով ամենօրհնեալ սուրբ Աստուածածին Սարգիս: Աւ զոր ինչ ՚ի յորդւոյ քումմէ խնդրեցի,

խնդրեմք և ՚ի քէն. և զորս յուսանցայ գտանել ՚ի նմանէ, յուսամք և ՚ի քէն գտանել:

Քանզի՛ դու հարսն եղեր Աստուծոյ Հօրն ամենակալի՛ որ յամենայնի կարողէ և բաւական:

Սայր եղեր Որդւոյն Աստուծոյ, որ յամենայնի ողորմած է և մարդասէր:

Բնակարան եղեր Հոգւոյն Աստուծոյ՝ որ յամենայնի հարուստ է և առատ:

Միանգամայն շտեմարան և գանձարան եղեր ամենասրբոյ Արրորդութեանն՝ որ աղբիւր է ամենայն բարութեանց և լցուցիչ երկնաւորաց և երկրաւորաց:

Արդ՝ ով սուրբ Աստուածածին Սարիամ: Հայրն Աստուած որ այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՛ զմիակ միածին որդին իւր՝ որով արար զամենայն արարածս, քեզ շնորհեաց և որդի քո արար. այլ զի՛նչ իցէ խնայելոց ՚ի քէն: Որդին Աստուած՝ որ այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՛ բնակեցաւ յարդանտի քում, բազմեցաւ ՚ի գիրկս քոյ. և որ կերակրիչն էր ամենայնի, կերակրեցաւ ՚ի յստեանց քոյ. և որ Աստուած և տէր էր քո, եղև որդի քո՛ և կոչեաց զքեզ մայր. այլ զի՛նչ խնդրիցես ՚ի նմանէ զոր խնայիցէ

՚ի. քէն: Եւ Հոգին Աստուած՝ որ այնքան սիրեաց զբեզ, մինչ զի՛ զէակիցն իւր քեզ հաւատաց. և ինքն որ զարդարիչն է ամենայնի՛ հանգեալ ՚ի քեզ և արոր զբեզ օթարան անսպառելի շնորհացն իւրոց. այլ զի՛նչ մնայցէ սպակաս զոր ոչ ունիցիս դու:

Քանզի հաւատամ ճշմարտիւ. զի ըստ բանի հրեշտակին, տէրն և ամենայն շնորհաց տուողն ընդ քեզ է՝ և որդի քո. և ՚ի զիրկդ քո ունիս: Եւ զոր որդիդ քո ունի, քո է. և զոր ինչ խնդրիցես ՚ի դմանէ, ոչ խնայէ. և դու ում կամիցիս, կարող ես տալ: Արայէս և որդիդ քո ասէ բերանով սողումօնի թէ՛ խնդրեա՛ մայր իմ. զի զոր ինչ և խնդրիցես, ոչ դարձուցից զերեսս իմ:

Աւրեմն՝ ով սուրբ Աստուածածին Սարիամ. զկնի Աստուծոյ՝ դու ես ակնկալութիւն արարածոց նորին: Իու ես ուրախութիւն տրտմեցելոց. փրկիչ փորձանաւորաց, օգնական և մխիթարութիւն հաւատացելոց. և յոյս և սպաւէն մեղաւորաց:

Այսու մտօք՝ և սիրելի որդին քո ՚ի խաչին՝ իբրև զկտակ աւանդեաց քեզ զհաւատացեալս իւր ՚ի ձեռն յօհաննու. ասելով թէ՛ կին դու՝ ահա որդի քո: Իբր թէ՛ հա-

ւառոցեալքս իմ, քո են, և քեզ են յանձին այսուհետև: 'Նյնպէս' և անուպմիւն յօհաննու՝ մեղ հաւատացելոցս ասաց թէ՛ ահա մայր ձեր, զոր ինչ և կամիցիք, 'ի դմանէ խնդրեցէք այսուհետև:

Արդ՝ ով մայր ողորմութեան սուրբ Աստուածածին Մարիամ, և ես մի եմ 'ի հաւատացելոցն սիրեցելոյ որդւոյ քոյ: Որ գործով ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ողորմելի՛ և յամենայնի սրահասաւոր, կարօտիմ քումդ մայրականի գթութեան: 'Նեղեալ և վշտացեալ 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր թշնամեաց, կարօտ քումդ օգնականութեան: Մեղաւոր և յամենայնի յանցաւոր, կարօտ քումդ ձեռնտուութեան և յուսադրութեան:

Վասն որոյ՝ անկանիմ առաջի քո ով սուրբ Աստուածածին և աղաչեմ զքեզ: Ուրախացո զտառապեալ ծառայս քո և մխիթարեա: Եւ ից զկահասութիւնս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ քոյով աննուազելի շնորհօքդ: Փրկեա զիս 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր թշնամեաց և յամենից փորձութեց՝ քոյով անտկարանալի զօրութեամբդ:

Սրբեա և մաքրեա զիս յամենից մեղաց իմոց՝ քոյով սուրբ և անարատ կուսութեամբդ:

Եւ լեր միջնորդ և բարեխօս առ միա-
 ծին. որդին քո վասն իմ մեղաւոր ծառայիս.
 զի ընկալցի զաղաչանս իմ, զոր մատուցի
 նմա. և կատարեսցէ զինդրուածս իմ: Աե-
 րեսցէ սխալանացս՝ և թողութիւն շնորհեսցէ
 ամենայն մեղաց իմոց. ընկալցի զիս վերստին
 ՚ի սէր և ՚ի խնամս իւր. և պահեսցէ զիս ըստ
 հաճոյից կամաց իւրոց, որ քան ՚ի մարմնի
 եմ: Եւ յետ աստեացս՝ արժանացուսցէ իւրոյ
 օրհնեալ տեսութեանն:

Քանզի՝ հաւատաւ անկարծիք՝ ով Մայր
 ողորմութեան զի եթէ անգամ մի ակն
 ածիցես վասն իմ առ որդիդ քո սիրելի
 ուրախութիւն է ինձ լիովին՝ և յամենայնի
 ապահովութիւն: Եթէ անգամ մի՝ զմա-
 քուր ստինսդ ցուցցես նմա, բաւական փրկ-
 կութիւն է ինձ՝ և յամենայնի ազատութիւն:
 Եւ եթէ զշիթ մի ՚ի սուրբ արտասուացդ՝
 (զոր հեղեր ՚ի ժամ խսցելութեան նորա),
 ՚ի յիշումն ածիցես նմա, թողութիւն է
 ամենայն մեղաց իմոց՝ և բոլորովին կեանք
 յաւիտենական: Որք քեզ առատագիծոյ
 մօրդ ողորմութեան՝ ամենայնիւ դիւրինք և
 կարելիք են և ինձ ողորմելոյ ծառայիս
 քոյ՝ ամենայնիւ պիտանիք և հարկաւորք:

Եւ իմ գտեալ զողորմութիւն ՚ի քէն, փառաւորեցից զՈրդիդ քո միածին՝ ընդ Հօր և ընդ սրբոյ Հօգւոյն. և զՍայրդ ողորմութեան զոհութեամբ բարեբանեցից. յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Թագաւոր : Աշխարհաբան :

Տէր իմ բազում են անօրէնութիւնք անձին իմոյ. ոչ յիշեցի զահեղ զգատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութիւն Տէր, և ողորմեա : Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. և որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ : Նեխեցան և փտեցան վերք իմ. յերեսաց անզգամութեան իմոյ. ոչ յիշեցի զահեղ զգատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութիւն տէր և ողորմ :

Պաղառանս մատուցանեմք քեզ հայր երկնաւոր. մի անտես առներ զաղաչանս մեր. այլ անցս զցասումն քո ՚ի մէնջ. և յիշեա զի պատկեր եմք բարերարութեաննդ :

Տէր իմ գթութիւնք քո բազում են

յուժ. առիս արա զբարերարութիւնս քո. որպէս և մաքսաւորին. և ինձ ողորմեա: Գթութիւնք քո բազում են տէր և ըստ իրաւանց քոց կեցո զիս: Տազում են որք հալածեն և նեղեն զիս. ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ. առիս արա զբարերարութիւնս քո, որպէս և մաք:

Անոխակալ և անյիշաչար տէր, որ գթալով ՚ի մեղաւորս շնորհեցեր ապաշխարութիւն. արդ գթա և յիս տէր ՚ի մեղուցեալ և յանօրինեալ քո ծառայս. և փոխարկեա զգործօղս չարեաց ՚ի զղջումն ապաշխարութեան, և կեցո: Խտածարի քում սրբութեան փառաւորելով ըզ քեզ. դուռնիս իշխանութիւն, ողորմեա մեզ:

Այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից ՚ի տուն քո. և երկիրսպագից ՚ի տածար սուրբ քո երկիւղիւ քո:

Տէր առաջնորդեա ինձ յարդարութեան քում վասն թշնամեաց խնոց. և ուղիղ արա առաջի իմ զձանապարհս քո. դուռնիս իշխա: Խտածարի քում սրբութեն հանապազ զքեզ գովեմք թագաւոր փառաց. որ ունիս իշխանութիւն կենաց և փրկութե ողորմեա մեզ:

Շաբաթի և Կաշիստեան:

Դարձո զցասումն քո 'ի մէջ յաղաղակել հողեղինացս. բազմագութ տէր խնայեա և մի կորուսաներ: Կանգնեա զանկեալս 'ի գլորմանե զվիրաւորեալս 'ի թըշնամոյն. որ բժիշկդ ես հիւանդաց բըժըշկեա զիմ զհիւանդութիւնս: 'Ի յանցանաց իմոց թախժեալ անձն իմ գոչեմ որպէս ըզ մաքսաւորն. Աստուած քաւեա զիս ըզ մեղաւորս:

Աներևութից քրննօղ գաղտնեաց բըժըշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս. և կեցո միայն մարդասէր: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան ողորմեաց անձին իմոյ բազմամեղի և կեցո: Ամենաբաւական ողորմութեան շընորհ պարգևեա ինձ յահագին աւուրն ըզ թողութիւն. և կեցս:

Բազումեն քո գըթութիւնբըդ բազմամեղ անձին իմոյ. ողորմեա Աստուած քաւիչ իմ: Օ՛ր քեզ անյիշաչար տէր մեղայ չարին խաբամաբ. ողոր: 'Ի քո 'ի միւս անգամ գալըստեանն յորժամ գաս դատել զերկիր ող:

Սեղաք մինչև յերկինս և զարդար ըզ

ցասումն քո շարժեցաք 'ի մեզ տէր ըստ
մեծի քում ողորմութեանդ ողորմեա մեզ:
Իջաք մինչ 'ի դժոխս ընկըղմեալք յանօր
էնութեան մերում. տէր յիշեա ըզ գինս
արեան որդւոյ քո և ողորմեա: Հալածեա
'ի մէնջ տէր նըշանաւ խաչի քո զընդիմա-
մարտ և զաներևոյթ գազանն. և մի տար
յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Յամենայն ժամ ազաջանք իմ այս
են 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր:
Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ ազա-
ջեմ ըզ քեզ թող ինձ տէր: Արտասուաց
իմոց մի լըռեր տէր զի պանդուխտ եմ ես
յանցաւոր երկրի:

Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա ինձ,
զի անպատասխանի եմ յամի թող ինձ տէր:
Ղանապարհըք քո ուղիղ են ես միայն մո-
լորեցայ դարձո զիս. և ողորմեա ինձ Աս-
տուած: Բատաստանըք քո արդար են ես
միայն եմ մեղուցեալ քաւեա զիս. և ողոր:

Յուխս իմ ես դու տէր քաւիչ յանյա-
նաց իմոց. մի անտես առներ զբըղխումն
արտասուաց իմոց. ողորմեաց ինձ Աստուած:

Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ
որդին հայր մեղայ յերկինս և առաջի քո.

ող: Փրկեա զիս Աստուած 'ի բազում մեղաց իմոց. արա արժանի քոյին սուրբ արքայութեանդ. ող:

Սեղք իմ բողոմ են յոյժ ծանր են քսն զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Բաց տէր ըզ գուռն ողորմութեան որ ողբալով կարգամ առքեզ. քանզի Հեղ յիս ըզ գթութիւնըդ քո բազում ողորմ և մարդասէր. քան զի:

Սեղայ քեզ տէր. մեղայ ողորմեա: Սեղայ անօրինեցայ. և մատնեցայ 'ի ձեռս անօրէն թըշնամոյն. արդ անկեալ աղաչեմ թող ինձ տէր: Քան զամենեսեան առաւել մեղայ տէր իմ գըթած քան զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ իձեռս անօրէն թըշնամոյն. արդա նկեալ:

Տէր ըզ լուր միւսանգամ քո գալըստեանդ լըւայ և երկեայ. զի ուսայ 'ի սըրբոց պատուիրանացն եթէ գաս դու 'ի դատել զերկիր: Տէր յիշեցի ըզ չար ըզ գործս իմ և զարհուրեցայ. զի ծանեայ ճըշմարտութեամբ զահաւոր և զանաչար ըզ քո դատաստան: Տէր յիշեցի և ըզ գութ արարչական սիրոյ քոյ առ քո արածս. և 'ի քո գըթութիւնդ ասպաւինեալ աղաչեմ. ողոր-

մեաց ինձ յաւուր յայնմիկ Քրիստոս արդար
 դատաւոր: Արդ խընդրեմք իբեն թագաւոր
 փառաց Քրիստոս. աղաչանօք սըրբուհայ
 անարատըմօր քոյ և կուսի. ապրեցո ըզ
 մեզ յաւի: Յորժամ յարևելից փայլիս
 անձառ լուսով լուսաւորես զհաւատացեւն.
 և դատապարտես զազգըն հրեից անհաւա
 տից ո՞վ սուրբ քառաթև եւ զիս լուսաւո
 րեա ըզ խաւարեալըս մեղօք. և դասակար
 գեա՞ի դասս մատենագրի յանձառ երկնից
 արքայուէդ. զի անդադար օրհնաբանիս և
 քո են փառք յաւիտեանս ամէն:



ՍԱԳՄՈՒԹԻ ՕՂՋՄԱՆ ԵՒ
ԼՊԱՇԽՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՆԷՆՆԵՐ՝ ՍԷՆՆԵՐ:

- 1 Տէր մի սրտամտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս:
- 2 Օ, ի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո:
- 3 Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերեսաց բարկութեան քոյ:
- 4 Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց:
- 5 Ենօրենութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս զբեռն ծանր ծանրացան ՚ի վերա իմ:
- 6 Նեխեցան և փրտեցան վերք իմ, յերեսաց անդգամութեան իմոյ:
- 7 Տարապեցայ և խոնորհ եղէ մինչև յոյժ, զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չտրջարանօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

- 8 Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ մոնչէի առ հեծութեան սրտի իմոյ:
- 9 Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ. և հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ:
- 10 Սիրա իմ խռովեցաւ յիս. և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոյ՝ և այս ոչ եղև ընդիս:
- 11 Բարեկամք իմ և մերձաւորք իմ. առաջի իմ մերձեցան և կացին. և մերձաւորք իմ հեռի եղէն յինեն:
- 12 Ես 'ի քեզ տէր յուսացայ. և դու լուիցես ինձ տէր Աստուած իմ:
- 13 Օ՛հանօրենութիւնս իմ պատմեցից. և հոգայցայ վասն մեղաց:
- 14 Մի թողուր զիս տէր Աստուած իմ. և մի 'ի բացէ առներ յինեն. հայեաց յօդնել ինձ տէր փրկութեան իմոյ:
- 15 Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով:
- 16 'Ի բաց արա յինեն զտանջանս իմ. զի 'ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ:
- 17 Լուր տէր աղօթից իմոց. ունկնդիր խնդրուածաց իմոց. արտասուաց իմոց մի լուեր:

- 18 Պանդուխտ եմ ես առաջի քո. նժդեհ
և անցաւոր որպէս ամենայն հարբն իմ:
- 19 Ի ու տէր մի հեռի առներ զգթութիւնս
քո յինէն. զի ողորմութիւն քո և ճշմա-
րտութիւն քո յամենայն ժամ ըն-
կալցին զիս:
- 20 Կամեաց տէր փրկել զիս. և տէր յօգ-
նել ինձ նայեաց:
- 21 Ամաչեսցին և յամօթ լիցին ոյք խնդրեն
զանձն իմ բառնալ զսա. դարձցին յետս՝
և ամաչեսցեն՝ ոյք խորհեն ինձ չար:
- 22 Ես աղքատ և տնանկ եմ. Աստուած խոր-
հեա զիս. օգնական և պաշտպան իմ ես
դու Աստուած իմ մի յապաղեր:
- 23 Ես ասացի տէր ողորմեայ ինձ. և բըժշկեա
զանձն իմ ես մեղայ քեզ:
- 24 Որպէս փախազի եղջերու յողբերս
ջուրց. այնպէս փախազի անձն իմ առ
քեզ Աստուած:
- 25 Ծառաւի է անձն իմ առ քեզ Աս-
տուած. հզօր և կենդանի. երբ եկից եր
և եցայց երեսացդ Աստուծոյ:
- 26 Իստ արա ինձ Աստուած և իրաւ արա
ինձ ՚ի դատաստանի իմում:

- 27 Պու Աստուած հզօրիչ իմ ես. ընդեր մոռացար զիս. ընդէր տրտում գնամ ես ինեղեւ թշնամոյ իմոյ :
- 28 Առաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւնս քո. զի նոքա առաջնորդեսցեն ինձ ածցեն զիս իլեառն սուրբ և ՚ի յարկս քո :
- 29 Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուածդ. որ ուրախ առնես զմանկութիւն իմ :
- 30 Խոստովան եղեց քեզ օրհնութեամբ. Աստուած Աստուած իմ :
- 31 Արդ ընդէր տրտում ես անձն իմ. կամ ընդէր խռովէս զիս յուսա առ Աստուած խոստովանեա նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է :
- 32 Օջարթիր ընդեր ննջես տէր արի և մի մերժեր զմեզ իսպառ :
- 33 Օմէ դարձուցանես զերեսս քո ՚ի մէնջ մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւն մեր :
- 34 Արի տէր օգնեա մեզ. և փրկեա զմեզ վասն անուան քո :
- 35 Աստուած մեր ապաւեն և զօրութիւն. օգնական ՚ի վերայ նեղութեանց՝ որք գտին զմեզ յոյժ :

- 56 Բնդեր բնաւ երկնչիմ ես յառուր չարի. անօրենութիւնք զնացից իմոց շուրջ եղեն զինն :
- 37 Ողորմեաց ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրենութիս իմ :
- 38 Առաւել լուաւ զիս յանօրենութենէ իմմէ. և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս :
- 39 Օ, անօրենութիւնս իմ ես ինձեն զիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ :
- 40 Իբեզ միայն մեղայ տէր. և զչարիս իմ առաջի քո արարի :
- 41 Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. և յաղթեսցես ՚ի դատել քում :
- 42 Անօրէնութեամբ յղացաւ. և ՚ի մեղածնաւ զիս մայր իմ :
- 43 Կու տէր զձշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զժածկեալս իմաստութեամբ քով ցուցեր ինձ :
- 44 Յողեա յիս մշտկաւ. և սուրբ եղեց. լուա և քսն զձիւն սպիտակ եղեց :
- 45 Եսելի արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն. և ցնծացեն ոսկերք իմ տարապեալք :

- 46 Իարձս զերեսս. քո ՚ի մեղաց իմոց և
զամ անօրենութիւնս իմ ջնջեա յինեն:
- 47 Օսիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած
և զհոգի ուղիղ նորոգեա ՚ի փորի իմում:
- 48 Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց.
և զհոգի քո սուրբ մի հաներ յինեն:
- 49 Այլ տուր ինձ զցնծութիւն փրկութե
հոգւով պետութեան քոյ հաստատեա
զիս:
- 50 Ուսոյ ինձ անօրինիս զճանապարս քո.
և անբարիշտս առ քեզ դարձո:
- 51 Փրկեա զիս յարենե Աստուած Աստու-
ած իմ. փրկութեան իմոյ. ցնծացէ լե-
զու իմ յարդարութեան քում:
- 52 Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան
իմ պատմեսցէ զօրհնութիւնս քո:
- 53 Աստուած յանուան քում կեցո զիս. և
ի զօրութեան քում իրաւ արա ինձ:
- 54 Աստուած լուր աղօթից իմոց. ունկնդիր
բանից բերանոյ իմոյ:
- 55 Օտարք յարեան ՚ի վերայ իմ. և հզօրք
խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան
զքեզ Աստուած առաջի իւրեանց:
- 56 Ահա Աստուած օգնական իմ. և տէր
ընդունող հոգւոյ իմոյ:

- 57 Աս կամօք խմովք պատարագս մատուցից
քեզ. և խո ոտլան եղեց անուան քում
տէր՝ զի բարիէ:
- 58 Յա՛նեայն նեզութէ խմէ՛ փրկեցեր զիս
և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ:
- 59 Աւնկն զիր ան աղօթից խոց. և միան-
տես առներ զննդրուածս իմ:
- 60 Այլ գու տէր տէր. արա ընդիս ըստ
անուան քում. զի քսղցրէ ողորմուի քո.
և փրկեա զիս. զի աղքատ և տնանկեմ ես:
- 61 Օգնեա ինձ տէր ան իմ. և փրկեա զիս
ըստ ողորմութե քում:
- 62 Այլ ես խոստովան եղեց առ տէր յուժ.
բերանով խմով. իմէջ բարձաց օրհնեցից
զքեզ:
- 63 Մի մեզ տէր մի մեզ. այլ անուան քում
տուր զփառս. վասն ողորմութե՛ և ճշմար-
տութե քոյ:
- 64 Աջ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ տէր.
և ոչ ամենեքեան ոյք իջանեն ՚ի դժոխս:
- 65 Այլ կենդանիքս օրհնեսցուք զտէր. յայտմ
հետէ մինչև յաւիտեան:
- 66 Ինեզութե՛ կարդացի առ քեզ տէր. և
լուր ինձ յանդորր. տէր դու ես օգնական

իմ, և ես ոչ երկեացց. զի արասցէ ինձ մարդ:

67 Բարի է յուսալ 'ի քեզ տէր՝ քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի քեզ տէր՝ քան յուսալ յիշխանս:

68 Օրուածի՛ իմ, և օգնուածի՛ իմ տէր և եղեր ինձ 'ի փրկուածի:

69 Խրատելով խրատեցեր զիս տէր. և 'ի մահու ոչ մատնեցեր:

70 Բաց տէր զգուրն արդարութե՛ն. զի մաից ընդ այն՝ և խոստովան եղեց քեզ:

71 Ո տէր փրկեա ոտէր առաջնորդեա. օրհնեալ որ գալոցէս յանուն անուն:

72 Ա՛ծ իմ ես դու՛ խոստովան եղեց քեզ անծ իմ ես դու՛ և բարձր արարից զքեզ:

73 Խոստովան եղեց քեզ տէր՝ զի լուար ինձ. և եղեր ինձ 'ի փրկուածի:

74 Աս առ անծ կարդացի՛ և տէր լուաւ ինձ. յերեկոյս՝ 'ի վաղորդեան՝ և 'ի հասարակ սւուր:

75 Սպասէի Աստուծոյ իմոյ. և ակն ունէի կենարարին. որ փրկէ զճառայս իւր և կեցուցանէ:

Փարբ հօր և որդոյ:

Մ * Ղ Է * Կ Կ :

Դու ես տէր մեր՝ դու ես քս՝ փրկիչ մեր.
 զքեզ օրհնեն անձինք մեր: Մարդասեր տէր
 վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի.
 և վասն խաչի քոյ պատուականի. ընկալ
 զաղաքանս մեր և կեցո զմեզ:

Ք * Ը * Ռ * Ղ :

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհ
 չրս խաղաղութե. զտէր աղաչեսցուք:

Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամ խորհուրդս
 չարին. զտէր աղաչեսցուք:

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս
 և առաքինի վարս. զտէր աղաչեսցուք:

Վասն պահելոյ զմեզ՝ ընդ հովանեաւ ա-
 մենազօր անյոյն իւրոյ, զտէր աղաչեսցուք:

Վասն խորտակելոյ զհակարակորդն վաղ-
 վաղակի ընդ ոտիւք մերովք. զտէր աղաչ՝:

Վասն հոգւոցն հանգուցելոց: Աւ ևս միա-
 բանութե: Օ, անձինս մեր: Ողորմեաց մեզ:

Տէր ողորմեայ, տէր ողորմեայ:

Ե. 2. Ե. 4:

Տէր երկնի և երկրի՝ արարիչ անարարածոց. երևելեաց. և աներևութից: Անքեզ կարդամք յանձամ. զի ընդ անտեղիս է տերութի քո. և արքայութի քո ամենեցուն տիրէ: Շնորհեա մեզ երկուզիւ՝ ի պաշտօն քո կանխել հանապազ. սիրել զքեզ ի բոլոր սրտէ՝ ի բովանդակ մտաց. և յանձամ զօրութի մերմէ: Պահել զպատուիրանս քո. համբառնալ առ քեզ զձեռս մեր սրբութի առանց բարկութե և երկմտութե: Եւ գտանել ի քեզ զշնորհս և զողորմութի. և զառաքինասէր գործոց յաջողութի: Այսն զի դու աէր կենաց՝ և անողորմութե. և քեզ վայելէն փարբ իշխանութի և պատու այսմ:

Խաղաղ-ե-ն Ե. 2. Ե. 4:

Քում ամենեզօր և յաղթող տերութեզ կրկնի անձուեր յերկրպագութի. և փարաւորի յամենեցունց թաղաորութի ք: Սոյեաց յերկրպագութիս մե. և ուն մեզ առնել զսրգարութի ճշմարտութե: Այսն զի դու ես անխաղաղութե. որ բարձեր զժշնա-

մութի՛ն ՚ի միջոյ. և արարեր զխաղաղութի՛ն
 յերկինս և յերկրի: Եւ հեռաւորաց. և մեր-
 ձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս քո-
 ին բարեացոյ: Որում և զՆեզ մեծի շնոր-
 հացոյ արժանի արասցես. դասելով ընդ ճըշ-
 մարիտ երկրպագուս քո. ան մեր և տէր և
 փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ
 ընդ հօր և ընդ սբ հոգւոյդ. այժմ և միշտ.
 և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր որ յերկինս:





Մաքրեա ըղ միտս և զխորհուրդըս. զի և
 ես հաղորդեցայց սըրբութեանք. ընդ սըր-
 բոց քոյ ասագեցից :



ՅԻՆԳՆԱԲԵԹԻ:

Ուրբերգո-Էէ-ն աշնէն. Եօոյ ընդ Աստուծոյ
Նարեհ. ԳԼԽԵ 47 :

Եւ արդ՝ զինչ գոյ ասել ամաչեցելոյս
յերեսաց մեծիդ ահաւորութէ, բայց եթէ
համրանալ, և հող ՚ի բերան եղեալ ՚ի սրտի,
ըստ մարգարէութեն խրատու, ահա ՚ի բար-
ւոյն կարկառեալ ՚ի յոյս: Իսկ եթէ զփա-
կանս շարժողութե շրթանցս բացից բռնա-
դատեցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ ըզ-
նոյն ձայն կրկնակական եղերերգուե. լալեաց
բազմութե՝ խէթ մտացս յառաջադրէ: Եւ
արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ ՚ի մահ՝ զնորին գոչումն երկրոր-
դեցից և ես ընդ նմին. մեղայ տէր՝ մեղայ,
և անօրէնութեց իմոց ինձէն վկայեմ: Հիւ-
սեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմո-
սին, անթիւս գրեմ զպարտուցս սակ՝ ան-
ձինս մեղանաց՝ քան զհիւշ երկրի հողմա-
հոս փոշոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ:
Մեղայ յերկինս և առաջի քոյ, ընդ անա-
ռակ որդւոյն սրտկառեցելոյ՝ հայրենի գթոյդ

վերըստին դարձեալ՝ թախանձ արկանեմ.
 զողորմե լին: ձայն աղերսանաց՝ արտօսրածին
 ողբավք գոչման՝ ՚ի տըխուր դէմս մատուցեալ
 առաջի քոյ տարածանեմ՝ հայր գթութեց
 ան բոլորից, չեմ արժանի կոչիլ, և ոչ
 բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի,
 այլ և անպիտան ազաբան վաճկան: Բնկալ
 զսովեալս տարագրական, սրտատական վեա-
 սուց. և զցաւ քաղցոյս՝ լիկանաց ինդոյս
 նուազեցելոյս՝ կենաց քո հ. ցիւղ բժշկեսցես ս:
 Եւ՛ր ընդ առաջ քո ողորմութիւն՝ ՚ի սիւրբ
 բնաւորս ասաւինութե. զչեցո՞ գը՛թած և
 անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի՝ զնա-
 խակապուտ հանդերձին ծածկելթ. աւանդա-
 կորոյս ձեռացս աղոթեղեալ մեղք՝ զկնիբմա-
 տանւոյն համարձակութե՝ ամենատառ կամօք
 մատուցես ս. զգարչապարացս թշուարութի
 մերկութե ոտիցս՝ սրտսպարութիւն աւետա-
 րանական ամբալեբարկու օղիցս կօշկաց՝ ՚ի
 յօձին թիւնից միշտ ամրացուցես ս: Օղուա-
 րակդ սլարարակի եզինդ երկնայնոյ, որ է միա-
 ծին որդիք քո օրհնեալ, իսկապէս մարդա-
 սիրութիւն կարօտելոյս բարեաց՝ նուիրեա. որ
 մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ ՚ի լրուե,
 յարակաց զենեալ ՚ի սպանդարանի անթիւ

սեղանոց անսպառութիւն, բոլոր յամենեւին՝
 և բնառ անուամբ, էս թիւ յերկինս՝ և իսկու-
 թե՛ ժբ՝ ի ասորիւս, աննուազ մարդկութիւն՝
 և անթերի աստուածութիւն, փշրեալ՝ և բաշ-
 խի ՚ի մասունս անհաս, զի զհամայնն հա-
 ւարեացէ առ ՚ի նոյն մարմին ի ըրումն զլիայ,
 քեզ փոստք ընդ նին՝ հայր ողորմութե յա-
 ռիտեանս, ամէն:



Առէ՛ք Օգոստոսի յիշման Երեմիայի Երուսաղեմի
 ասորիւս խոսք ընդ Ասորիւս:

1 Տես անձ զտառազանս իմ և զցուս հող-
 ւոյ իմոյ բազմամեղիւ. դարձ ներեալ և ՚ի
 քեզ առաջնորդեալ: Ար ասացեր՝ դարձարուբ
 առիս, և ես դառնամ առ ձեզ:

2 Ինձ լբելոյս ողորմեալ, ինձ եղկելոյս օգ-
 նեալ, ինձ խաւարելոյս ճառագայթեալ, ինձ
 մարտիելոյս առաջնորդեալ, որ լի եմ մեղօք
 և անթիւ յանցանօք, և ՚ի յորձանս անօ-
 բէնութե ասրաբերեալ ծիփի:

3 Պատկերացո՛ւ տէր՝ զանհրաժեշտ գա-
 լուստ քո առաջի աչաց իմոց, և դողանո՛ւ ըզ-
 մարմնսս իմ սգալ և լալ անդալար յեր-

կիւղէ ահեղ դատաստանաց քոց. և մի վա-
կեր ըզգութ արարչական սիրոյ 'ի ըստեղ-
ծուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեալ:

4 Արեգակնդ արդարութե՛ք՝ փրկիչ իմ և
ազատիչդ Յիսուս Քրիստոս. 'ի լոյս քո ա-
պաւինիմ. լուսաւորեան և ջերմացո՛ զսիրտս
իմ: Հրակիզեա զչար խորհուրդս իմ. և հա-
լեա զսառնամանիք մեղաց իմոց: Շնորհեան
տէր՝ գարուն հոգւոյ իմոյ՝ ծաղկիլ և պտղա-
բերել զարդարութե պտուղն:

5 Բաց տէր զփակեալ դուռն սրտի իմոյ.
և ծագեա 'ի ներքս զլուսաւորութի՛ ճառա-
գայթից քոց: Սրբեան և զաղտ մեղաց իմոց.
և զվերս հոգւոյ իմոյ բժշկեա: Ամրացո եր-
կիւղիւ քո և զորացո՛ առնել զարդարութի՛
յամենայն ժամ:

6 Նայեաց տէր 'ի նեխեալ և 'ի թարա-
խեալ հոգիս իմ. և լուա Աստուածային
ջրով. հոգևոր աղիւղ համեմեան. և անուշա-
հոտ իւղովդ սրբով օծեա. և զկատարեալ
առողջութի՛ ընձեռեա:

7 Հալածեան տէր զամ չար մտածմունս
երկրաբարշս 'ի խորհրդոց մտաց իմոց. ար-
մատ բարեաց տն՛լեան հաստատութի՛ սրտի

իմում. և սրտուղ շնորհաց 'ի հոգիս իմ
նկարեա:

8 Առաքեան մեր զբաժակ ուրախարար հոգ-
ւոյդ սրբոյ 'ի յեղկելիս՝ որ ծարաւիմս առ
քեզ. արբո՛ և զուարթացո՛ զեռանդն սիրոյ
քոյ. լուծ և 'ի բաց ջնջեա զմըուր դառ-
նութե՛ յանցանաց իմոց:

9 Նայեանց տէր 'ի մերկութի՛ անձին իմոյ՝
զոր կողոսկտեաց թշնամին. և այժմ՝ խայտա-
րակ և ամօթալից կամ առաջի քո: Մար-
դասիրեան և զգեցո՛ ինձ հանդերձ. մոյծ և ու-
րախացո՛ 'ի կոչումն բազմելոց քոց:

10 Պայծառացո՛ տէր զլապտեր հոգւոյ իմոյ
որպէս կուսանացն իմաստնոց. և շնորհեա
սլա:որաստիլ արթնութի՛ ընդ առաջ ելա-
նել երկնաւոր փեսայիդ. զի մի մնայցից ար-
տաքս որպէս յիմար կուսանան:

11 Օրացո՛ զիս տէր 'ի պատուիրանաց
քոց՝ անսալ երկիւղիւ. դողալ և սարսիլ 'ի
դատաստանաց քոց. խնդրել զարդարութի՛
և զիրաւունս երեսաց քոց. առնուլ զպար-
գես շնորհաց քոց:

12 Իժ շկեան տէր զանբժշկելի հիւանդութի՛
իմ. որ կարկամեալ դնիմ՝ 'ի մահի՛ծս մեղաց
իմոց. և զեզերեալ կամ 'ի դուռն երկրորդ

սե լուխոց, սարսեւ և ակն ունիւ մեծի գալստեան քո

15 Հրամայեա՛ տէր ինձ որովչս զանդամալուծին առողջանալ. խորասկիւ զանկողինս ցաւոյ իմոց. շրջիւ ընդ կամարարս քո՛ ՚ի տան տեառն. և ՚ի գա իծս Մատուծոյ ծաղկիւ և ոչ մեղանչել: Խորտակեա՛ սէր ըզբռնութի՛ սապանայի. հաս և ՚ի բոց ընկեա՛ զգորութի՛ն նորս. արդե՛ւ զյարձակո՛ մն նր ՚ի վերայ իմ. զի տարապարհակ վարեալ ըզմտրմինս իմ, տանի յընդարձակո՛մն ձանապարհի՛ որ տանի ՚ի կորուստ և յապախանութիւնս:

14 Հաստատեա՛ սէր զխաղաղութի՛ և ըզպայծառութի՛ լուսոյ կենաց անձին իմոց. զի մի խոտորիցիմ՛ յաջ կամ յահեակ. և դատապարտիմ՛ յաւուր գալստեան քո՛ սպահանջելով զյետին նաքարակիտն մինչ իսպառ:

15 Ուսո՛ զիս սէր առնել զարդարութի՛, խոսել զՇմարտութի՛. սիրել զսրբութի՛, և ատել զաղտեղութիւն. խոտորիւ ՚ի չարեաց, և զիալ ՚ի ձանապարհս բարեաց:

16 Ա՛կ տէր ՚ի տեսութիւն հիւանդացեալ հոգւոյ իմոց. զիր զձեռն քո՛ ՚ի վերայ իմ,

բժշկեան ասելով, զօրացիր առ զմահիճս քո.
և երթ 'ի տուն քո արդարութե:

17 Տուր ինձ տէր տեղի ապաշխարութե,
աշխատութե հանգիստ, խաղաղութե հոգի,
և արդարութե ճանապարհ, ամբողջութե զէն,
հաստատութե յոյս, և պնտութե երկիւղ:

18 Շնորհեան ինձ տէր լալ աջացս. ար-
տասուաց հոսումն, մեղաց լուացումն, մտաց
սուգ սրտի երկիւղ, ոսկերաց իմոց սարսա-
փումն և դողումն վասն տանջանայ, կենաց
ճանապարհ, և անդադար սրաղառանս:

19 Գթնս 'ի մեղուցեալ և յեղկելի անձն
իմ տէր խախտեան զանառակ ցանկութիս
իմ. սրբեան զաղտեղութի մեղաց, և քաւեա
զանօրենութիս իմ. բժշկեան զլիրսւորեալ
հոգիս, և առողջացո՛ր զհիւանդացեալ մար-
մինս իմ. ցրուեան զչարն յինէն, և ժողովեան
զբարիս և լից զպակասութիս իմ:

20 Այն ինձ տէր՝ վայ ինձ. զի մեղօք կոր-
ճանեցայ. և մըտօք իմութբ աղտեղեցայ, 'ի
բարեաց ունայնացայ և 'ի սիրոյ ցամաքեցայ.
'ի լալոյ խաւարեցայ. և 'ի գնալոյ դադարե-
ցայ: Ա՛ջ ունիմ աչս լալոյ և արտասուաց,
ծիփիմ տարակուսեալ. զի յոյս և ակն բա-
րեաց ոչ ունիմ:

21 Կանգնեան տէր զտարաբերեալ անձն իմ՝ որ լի՛ եմ մեղօք և անթիւ յանցանօք. և խարշեալ և տրոհեալ եմ ամ անդամօքս. յոտից մինչև ցգլուխս ապականեալ. և չի՛ք հնար բժշկութե՛. եթէ ոչ ՚ի քէն, տէր իմ Յիսուս. խոնարհեան առ վերաւորեալս դեղատուութի՛ք, և մի՛ գարշիր ՚ի չարահոտ ակտացելոյս :

22 Մեղայ քեզ տէր մեղայ. զի յանցեայ զպատուիրանաւ քով, ՚ի լուսոյ կենաց ելայ և մտայ ՚ի խաւար մեղաց՝ ցանկանալով աղտեղութեց : Իսիրոյ քո հեռացայ՝ ըմբռնեցայ ՚ի չարէն, և եղէ որդի կորստեան. ողորմեան ինձ բազմամեղիս՝ բարերար, զի դու միայն ես մարգասէր :

23 Ո՛չ իշխեմ տէր անյոյս լինիլ. զի ողորմած ես՝ դը՛թած, և փառս անճառ խոտացար դարձելոց մեղաւորաց. այլ ես զարհուրիմ. և դողամ, և երկնչիմ ՚ի բազում. և յանթիւ մեղաց իմոց. զի պատրեալ խաբեցայ յորսողէն, և արդ զի՛նչ լինիմ եղկելիս՝ որ տարակուսեալ եմ ՚ի կենաց :

24 Վայ ինձ տէր՝ զի ծփանք տարակուսանաց պատեն զիս, և զսիրտ իմ խռովեն. զոր աղօթեմ ոչ դիտեմ : Սաղմոսեմ և ոչ

իմանամ. շրթունք իմ բարբառի, և միտք
 իմ ճողոպորեալ յածի այսր և անդր և ըզ-
 կայուն ոչ ունի: Աւ կամիմ՝ զի իցէ անդ,
 բայց ոչ դադարի. ոչ ատեսանի արդեօք և ոչ
 ըմբռնի. զուր աշխատիմ և ոչ ինչ օգտիմ.
 որպէս ձայն հնչեալ պղնձի և ծնծղայի՝ թա-
 փուր և ունայն դատիմ. և անպտուղ գտա-
 նիմ յամ բարեաց:

25 Անկալ տէր զգոյզն շաղփաղփ աղօթս
 իմ. որ կամ առաջի քո դատապարտեալ.
 այլ և ծոյլ ՚ի զգաստութէ, մոլորեալ եմ ՚ի
 մտաց և յերկիւղէ ունայնացեալ: Մերան
 իմ այլ ընդ այլոց բարբանջէ, աչք իմ սլըշ-
 նու, և միտք իմ զբաղնու. ոչ անզբօս աղօ-
 թեմ, և ոչ սրտի մտօք խնդրեմ. ոչ հաւա-
 տով առ քեզ գոչեմ, և ոչ երկիւղիւ կար-
 դամ. ոչ դողամ և սարսիմ վասն աւուրն
 պատասխանատուութեց: Աւ արդ տէր՝ մի
 անսար. այլ փութապէս արկ յապաշխարուի
 և ՚ի բովս մաքրութե հրոյ սրբեալ և ազա-
 տեալ ՚ի մեղաց: Մեծաւ ջերմամբ եռացո
 ՚ի յորդոր արտասուս և ՚ի պազատանս և ՚ի
 խնդրուածս. և տպաւորեայիս զառաջին լու-
 սաւորութե կերպարան: Մարեխօսութեամբ
 սրբուհւոյ աստղաւածածնիդ և անարատ միշտ

կուսիդ. և յովհաննու կարասպետին. սանփան-
 նասի առաջին մարտիրոսին, և սրբոյն գրի-
 գորի լուսաւորչին. և ամ սքց վկայիցն քոց՝
 լոր ինձ եղկելոյս: Եւ դւորելոյս ձեռնտու-
 լեր. և մուրելոյս առաջնորդեան, և ՚ի խա-
 ւարէ հանցէս զիս ՚ի լոյս, և հոգւոյ իմոյ ա-
 զատութի շնորհեան: Հաստատեա ՚ի սէր քո,
 և բւեռեան յերկիւղ քո. գոածար հոգւոյ
 իմոյ մաքրեան, և առիս օթեանեան: Փակեան
 զգուռն մեղաց իմոց, և պարսպեան շուրջա-
 նակի յոտխէ իմէ: Եւ ՚ի մարդոյ չարէ և
 յանիրաւէ փրրկեան և ազատեան զիս, և պար-
 գեւեան ինձ զանձառ երանութի քո: Կենդա-
 նեաց մերոց ողորմեան, և զհոգիս ննջեցելոց
 մերոց պայծարացուցեալ լուսաւորեա. ամէն:

Թագաւոր Վստուածաբան:

Վստաշխարութեն արտասուս աւազան լի-
 նի և լուանոց զբազմութիւն մեղաց. սովաւ
 շնորհեա յառաջ քան զվախճան ըզ քա-
 ւութի և զվեճ քո զողորմութի: Օարաւի
 է անձն իմ առ քեզ Վստուած հզօր և
 կենդանի. երբ եկից երևեցայց երեսացդ Վս-
 տուծոյ: Եղեն ինձ արտասուք իմ կերակուր

ի տուէ և ՚ի դիշերի. և այն զի ասէին ցիս զօրհնապազ, թէ ուր է Մատուած քո. սովաւ շնորհեա յարաջ քան զլախճան:

Յորժամ գաս փառօք հօր յասագին աւուրն ՚ի դատել զերկիր. և դողան սարսափմամբ երկրածինքս ան ՚ի յահէ քումն. ՚ի նստիլ քո յա ենի դադաւոր ասեղ, և յակնարկել քո յարարածս, յիշեան և զիս ըզբազմամեղս. որ ընկղմեալս եմ յանցանօք բանասրկուին խարամբ. և հայցեմ զաւազակին տէր և զիս յիշեա. որ միայնդ ես փրկիչ և կեցո:

Օխ որ ՚ի նաւի աշխարհի ալէկոծէն մեղք իմ. նաւահանգիստ ապաշխարութեն շնորհեան ինձ բազում ողորմ. և կե:

Կեցո զիս ան, զի հասին ջուրք յանձնիմ. ընկլա ես ՚ի խորս անդնդոց՝ ուր ոչ գոյ ինձ հանգիստ. նաւահանգիստ ապաշխարութե շնորհեա ինձ բա: Նաւասկետ բարեգութ առ քեղ ապաւինիմ. տուր ինձ ձեռն որսկէս երբեմն սկտրոսի ՚ի վերայ ալեացն. որ ծփիմս ալէկոծեալ յանցանօք մեղաց. և կեցո: Վու ես քս՝ աղբիւր կենաց. բղխումն ողորմութե. շնորհեան փրկիչ անձանց մերոց ըթողութի մեղաց մերոց: ՚ի քէն է տէր

աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Մագենա զողորմութիս քո, որք ճանաչեն զքեզ. զարդարութիս քո. ոյք ուղիղ են սրտիւք. շնորհեա փրկիչ:

Ար աղբիւրդ ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց ճանապարհ մոլորելոց և հովիւ հողևոր բանաւոր հօտի. փախագողացս առ քեզ քս լե՛ր նաւահանգիստ և արբո՛ մեզ ծարաւեացս զբաժակ քո քաղցրուէ յանսպառ աղբերեդ:

Շարահանք Աղաշխարհեան:

Օտրձո զիս յորոգայթէ որսողին և ամ վըտանգից ասլրեցո և սղորմեա: Յաներևութ թշնամայն և ՚ի գազտնի՛ նետից բանսարկուին պահեա և ողորմեա: Քրկեայ զիս ՚ի յանցանաց մեղաց ի՛մոց և նսրոգեա զիս հողևով գիտութք և ողորմեա:

Մով մե՛ղաց իմոց զիս անլիոճէ. սր ես նաւանդէտ բարի. շնորհեամ ինձ նաւահանգիստ հայր ամենակալ: Խո՛րք սրաորաննց զիս կորուսանեն. անլ դո՛ւ նաւանդէտ բարի. շնորհեամ: Ար միայն իշխանդ ես թողուլ

ըզ մեղս. և՛ ե՞ս աղն՛ջեմ՝ ըզ քեզ տէր թո՛ղ
ինձ ըզ մե՛ղս ի՛մ հայր ամենակալ:

Մե՛րձեալ է օր դմլոյ քո տէ՛ր. լուր ձայ-
նի՛ աղօթից իմոց որ կարդամս առ քեզ. և
ողորմեա՛ն: Մանից իմոց ունկընդի՛ր տէ՛ր և
'ի իմիտառ զաղաչանս իմ. զառաւոտուս որ
կարդամս առ քեզ և ող: Ա՛ր ընկըղմեալս
եմ՝ 'ի խորս չարաց. սք զհոգիդ քո առա-
քեա առիս որ կարդամս առ քեզ և ող:

Ողորմեա ինձ անձ զի քեզ միայնոյ մեղայ:
Մաաւել լուաւ զիս 'ի տղմոյ յանցանաց աղ-
բիւր բժշկութեն. և ողոր: Յարեն է փրկեա
զիս՝ որ հոգւոց և մարմնոց ունիս ի շխանու ի
և ողոր:

Վի՛րաւորեալ յանցանօք անձն իմ առ
քե՛զ տէր համբարձի զաչս իմ. թո՛ղ ինձ
ըզ մե՛ղս ի՛մ միայն բարեգութ. և ողոր-
մեա ինձ անձ ըստ մեծի ողորմութեան
քոմ: Աործանեաց զիս չարագործ թըշնա-
մին և կամի իսպառ զիս որսալ. հայր բա-
րեգութ բժշկեա զվի՛րաւորեալս և ողոր-
մեաց ինձ անձ: Անդունդք մեղաց սլաշա-
րեցին զիս զի բազում են քան զաւաղ ծո-
վու. առ քե՛զ տէր սլաղատի՛մ. փրկեա 'ի
վըտանդէս և ողորմեա ինձ անձ:

Օ՛, անտպական ըզ հոգևոր ըզ գանձըն
 յապականացու կենցաղըս ծախեցի. այլ առ
 քե՛զ միայն սրաղատիմ՝ բարերար փրկիչ
 խնայեա՛ ՚ի մեղուցեալ ծառանս: Օ՛, ցանկ
 հոգւոյ խմոյ քա՛լօտեցի և եղէ անբարունակ
 որթ այլ առ: Աստաբանց եղէ ես որպէս զար-
 մաւենի սրողակորոյս որպէս ձիթենի. այլ ան-
 յի՛ շաջար և անոխակալ փրկիչ. խնայեա
 ՚ի մե:

Քրիստո՛ս աստուած աստուծոց. ողո՛րմեա՛ն:
 Անօրենութի՛ն ՚ի մեղս երկնեաց զիս մայր իմ.
 աղաչեմ՝ փրկիչ. ողո՛ր: Ա իրաւորեալ մեղօ՞ք
 ան՛խանիմ առ քեզ փրկիչ միանտես առ-
 ներ. ողո՛ր:

Սաքսաւորն հառանջանօք ՚ի տաճարին
 է առ ըզ քունութի՛ն. նովին ձանյնիւն և ե՛ս
 գոչեմ. ողորմեա ինձ անձ: Աւաղակն աղա-
 ղակէ՛ր ՚ի խաչին՝ յիշեա զի՛ս տէր. նովին:
 Անառակ որդին աղերսանօ՞ք աղաչեր ըզ
 քեզ. հայր մեղոյ յերկինս և առաջի՛ քո.
 նովին:

Բարե՛խօսեա առ միածինըն յարուցեալ
 ՚ի մե՛ռեւոց. մայր աստուծո՛յ փրկեւ զան-
 ձինըս մեր՝ ՚ի յաւիտենի՛ց ՚ի հըրոյն. աղա-
 չեմք ըզ քեզ:

Սոսկալիդ սերօբէից և ահա որդ քրօբէից խոնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութի մարդկան. 'ի խաչին զմեղըս սպանե՛ր. և զդատակնիք մահու լուծեր. հաշտեաց ընդ մեզ տէր դըթութի. և թող ըզմեզս ողորմութի:

ՍԱՂՄՈՍԻ ԶՂԶՄԱՆ ԵՒ ԵՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ:

ԵԼԷՆԻՄ՝ ՄԵԼՆԻՄ :

- 1 Եստուած ըզ կեանս իմ սատմեցից քեզ եղից զարտասուս ի՛մ առաջի քո. որպէս խոստացար դու ինձ:
- 2 Եհա ծանեաց զի Եստուած իմ ես դու զԵստուած օրհնեցից 'ի բանս իմ. և զտէր գովեցից 'ի խօսս իմ, յԵստուած յուսացայ, և ոչերկեաց զի արասցէ ինձ մարդ:
- 3 Յինէն են ուխօք իմ. զորս տաց քեզ օրհնութեամբ Եստուած Եստուած իմ:
- 4 Փրկեցեր զանձն իմ 'ի մահուանէ՛ զաչօ իմ յարտասուաց. և զոոս իմ 'ի դայ-

- Թագդուծենէ. հաճոյ եղեց առաջի տն
 յերկրին կենդանեաց:
- 5 Ողորմեաց ինձ Աստուած՝ ողորմեաց ինձ
 զի ՚ի քեզ յուսացաւ անձն իմ:
- 6 Ի հովանի թևոց քոց յուսացայց. մինչև
 անցցէ անօրէնութիւն:
- 7 Աղաղակեցի առ Աստուած բարձրեալդ
 առ Աստուած բարերար իմ:
- 8 Բարձրեալ ես դու յերկինս Աստուած
 և յամ երկրի են փարբ քո:
- 9 Օգարթիբ փարբ իմ. զարթիբ սաղմոսիւք
 և օրհնութիւն և ես զարթեայց առաւօտուց:
- 10 Խոստովան եղեց քեզ ՚ի ժողովուրդս
 տէր. և սաղմոս ասացից քեզ յազինս:
- 11 Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն
 քո. մինչև յամպս ճշմարտութիւն քո:
- 12 Օգորութիւն իմ առ քեզ պահեցից.
 զի Աստուած օգնական իմ ես:
- 13 Աստուած իմ. ողորմութիւն քո կան-
 խեսցէ առիս ես օրհնեցից զօրհնութիւս
 քո տէր և ցնծացայց առաւօտուց յողոր-
 մութիւնս քո:
- 14 Օի եղեր իմ պաշտպան և տուն ասպա-
 լինի յաւուր նեղութեան իմոյ:
- 15 Օգնական իմ քեզ սաղմոս ասացից՝ Աս-

- տուած ապաւէն իմ. Աստուած ողորմուէ իմոյ:
- 16 Աստուած մերժեցեր և աւիրեցեր զմեզ. բարկացար և զթասցիս 'ի մեզ:
- 17 Առ ի Աստուած աղօթից իմոց և նայեաց յաղօթս իմ:
- 18 Այսպէս սաղմոս ասացից անուան քում յաւիտեանս յաւիտենից. և տաց քեզ զաղօթս իմ օրստօրէ:
- 19 Տայց միայն Աստուածոյ հնազանդ լեր անձն իմ. զի 'ի նմանէ է ինձ փրկուի:
- 20 Նաէ Աստուած իմ, և փրկիչ իմ, ապաւէն իմ, զի մի սասանեցայց առաւել:
- 21 Աստուածոյ է զօրութիւն իմ, և փարբ իմ, Աստուած օգնութեան իմոյ՝ յոյս իմ առ Աստուած է:
- 22 Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծառաւեցաւ առ քեզ հոգի իմ. քանիպատիկ ևս և մարմին իմ:
- 23 Որպէս երկիր անապատ և անջուր. ուր ոչ գոյ 'ի նմա ձանապարհ:
- 24 Այսպէս 'ի սուրբս երևեցայց քեզ. տեսանել ինձ զզօրուիս քո՝ և զփառքս քո:
- 25 Սասն զի լաւէ ինձ ողորմութիւն քո

- քան զկեանս իմ. և շքթունք իմ գովես-
ցեն զքեզ:
- 26 Այսպէս օրհնեսցից զքեզ 'ի կեանս իմ.
և յանուն քո համբարձից զձերս իմ:
- 27 Արդէս 'ի ճարպոյ սարարածութեան լցցի
անձնիմ շքթամբք ցնծութեան օրհնեսցէ
զքեզ բերան իմ:
- 28 Օյ թէ յիշէի զքեզ յանկողնի իմում.
ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ:
- 29 Օյ եղեր իմ օգնական. 'ի հովանի
թևոց քոց ցնծացայց:
- 30 Այնզկնի քո անձն իմ և զիս ընկալաւ
աջքո:
- 31 Առ ի Աստուած աղօթից իմոց յաղաչել
ինձ առ քեզ յերկուղէ թշնամւոյն փրկեա
զանձն իմ:
- 32 Առ ի աղօթից իմոց զի առ քեզ ամ
մարմին եկեսցէ:
- 33 Աստուած մեր ողորմեաց մեզ. և օրհ-
նեա մեզ. երևեցո զերեսս քո 'ի մեզ' և
ողորմեաց մեզ:
- 34 Աստուած 'ի բազում ողորմութեան քում
լուր ինձ 'ի ճշմարտութեան քոյ:
- 35 Առ ինձ տէր՝ զի քաղցրէ ողորմութի
քո. ըստ բազում գթութեան քում հայ-

- եաց յիս և մի դարձուցաներ զերեսս քո
 'ի ծառայէս՝ քումմէ. զի նեղեալ եմ ես
 վաղվաղակի լուր ինձ:
- 36 Օ՛ի դու գիտես զնախատինս իմ. զա-
 մօթ իմ. և զպատկարանս իմ:
- 37 Աղքատ և ցաւած եմ ես փրկութիւն
 քո՝ Աստուած ընկալցի զես:
- 38 Օրհնեցից զանունքո տէր օրհնութիւն
 և բարձրարարից գոհութեամբ:
- 39 Հաճոյ եղեցի անշտ քան զորթ մատաղ
 օր բերէ զեզջիւրս և զկճղակս:
- 40 Տեսցեն աղքատք՝ և ուրախ եղիցին. խն-
 դրեսցուք զքեզ տէր և կեցցեն անձինք
 մեր:
- 41 Օ՛ի լսես տէր տնանկաց և զկապեալս
 քո ոչ արհամարես:
- 42 Աստուած յօգնել ինձ նայեաց և տէր
 յնկերել ինձ փութա:
- 43 Աս աղքատ և տնանկ եմ. Աստուած
 օգնեա ինձ. օգնական և փրկիչ ես դու
 Տէր մի յամենար:
- 44 'Ի նիղութեան իմում ես առ քեզ տէր
 կարողացի և լուր ինձ. տէր փրկեա զանձն
 իմ 'ի շրթանց նենգաւորաց և 'ի լիզուէ
 չարէ:

- 45 Վայ ինձ՝ զի ընդ երկար եղև պանդխտուի
իմ. բնակեցայ ես 'ի վրանս կեդարու :
- 46 Համբարձի զաչս իմ 'ի լերինս ուստի
եկեսցէ ինձ օգնութիւն :
- 47 Օգնութեան ինձ տէր 'ի քեն եկեսցէ,
որ արարէր զերկինս և զերկիր :
- 48 Տէր պահեա զմեզ, և տէր ընկալ աջոյ
ձեռամբ քով :
- 49 Տէր պահեա զիս յամ չարէ պահեա
տէր զանձն իմ :
- 50 Տէր պահեա զմուտ և զել իմ. յայսմ
հետէ մինչև յաւիտեան :
- 51 Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ
բնակեալդ ես 'ի յերկինս :
- 52 Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տն իւրոց
և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ
իւրոյ :
- 53 Այնպէս է աչք իմ առ քեզ տէր Աս-
տուած իմ. մինչև ողորմեսցիս 'ի վերայ իմ :
- 54 Ողորմեաց ինձ տէր ողորմեաց ինձ զի
բազումլցայ արհամարանօք :
- 55 Աւս առաւել լցաւ անձն իմ նախատա-
նօք ոյք նախատէին զիս արհամարանօք
ամբարտաւանից :
- 56 'Ի քեզ տէր յուսացայ մի ամաչեցից

- յաւիտեան արդարութեամբ քով փրկեա
զիս և ապրեցո զիս :
- 57 Խոնարհեցո առիս զունկն քո և կեցո
զիս :
- 58 Եր իմ Աստուած ապաւէն և տեղի
ամուր կեցուցանել զիս զի հաստատու
թիւն իմ և ապաւէն իմ դու ես :
- 59 Աստուած իմ փրկեա զիս 'ի ձերաց մե
ղաւորի 'ի ձերաց անօրինի և անիրաւի :
- 60 Դու ես համբերութիւն իմ տէր տէր
յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ :
- 61 'ի քեղ հաստատեցայ ես յարգանտէ .
յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ
և առ 'ի քէն է օգնուի իմ յամ ժամ :
- 62 Որպէս զի նշաւակ եղէ ես բաղմաց .
այլ դու օգնական իմ և հզօրիչ իմ :
- 63 Ացցի բերան իմ գովութեամբ . որպէս
օրհնեցից զփառս քո . զօրհանապազ զմեծ
վայելչութիւնս քո :
- 64 Մի ընկենուր զիս տէր 'ի ժամանակս
ծերութեան 'ի սրկասիլ զօրութեան իմոյ
մի թողուր զիս :
- 65 Ասացին թշնամիք եմ ինձ և որք սա
շարեցին զանձն իմ . խորհեցան 'ի միասին
և ասացին . Աստուած եթողչնա հալածես .

- ցուք. և հասցուք նմա զի ոչ որէ՝ որ
փրկէ զնս :
- 66 Աստուած իմ մի հեռի տուներ յինէն.
և Աստուած յողնել ինձ նայեալ :
- 67 Ամաչեացեն և պակասեացին. ոյք շարախօս
կային զանձնէ իմմէ. զգեցցին զամօթ և
զպակասանս. ոյք խնդրէին ինձ զչար :
- 68 Ես յամենայն ժամ յուսացայց և յա-
ւելից յօրհնութիւնս քո :
- 69 Բերան իմ պատմեացէ զարդարութիս
քո զոր հանապազ զգովութիւնս քո :
- 70 Արպէս ոչ թէ խարդախութեամբ ինչ
գետէի զշարութիւն այլ մօից ՚ի զօրու-
թիւնս տէր. տէր յիշեցի զարդարութիս
քո միայն :
- 71 Աստուած իմ ուսուցեր զիս ՚ի մանկու-
թենէ իմմէ և ցարդ ևս պատմեցից զար-
դարութիւնս քո :
- 72 Արջաի ցուցեր ինձ զնեղութիւն բա-
զում և չարչարանս դարձար մխիթորե-
ցեր զիս և ՚ի խորոց անդհոոց երկրիհա-
նէր զիս :
- 73 Յաճախեցեր զզօրութիւնս քո դարձար՝
մխիթարեցեր զիս և ՚ի խորոց երկրի մի-
ւսանդամ հաներ զիս :

74 Արդ և ես խոստովան եղեց քեզ 'ի սպարաատութիւն սաղմոսաց ճշմարիտդ Աստուած՝ սաղմոս ասացից քեզօրհնութ. սուրբդ խորանլի:

75 Յնծասցեն շրթունք իմ. յորժամ սաղմոս ասիցեն քեզ և անձն իմ զոր փրկեցեր:

76 Եւս և լեզու իմ զօր հանապաղ խօսեսցի զարդարութիւնս քո: 'Ի ժամանակի իբրև յամօթլիցին. ամաչեսցեն, ոյք խնդրեն ինձ զչար:

Փարբ հօր և որդոյ:

Մ աս լի աս ն ք:

Բարձրացաւ եղջիւր իմ Աստուած փրկկից իմ. հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր սերամբ և հաւատով:

Մարդասէր տէր վասն սրբուհւոյ անարան մօր քոյ և կուսի, և վասն խաչի քո պատուականի բնկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ:

Ք ր ո ղ :

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն ՚ի բարերար անկ մերմէ. զտէր աղաչ:

Վասն փրկելոյ զմեզ ՚ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի. զտէր աղաչ:

Վասն ամենայն անձանց քրիստոնեից և տանց հաւատացելոց զտէր աղաչ:

Վասն որք ՚ի լերինս յայրս և ՚ի փապարս բնակեալք են սուրբ հարքն մեր. զտէր աղաչ:

Վասն որք սաղմոսիւք և օրհնութեանք կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց. զտէր աղաչ:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք: Եւ ևս միաբան: Չանձինս մեր: Ողորմեաց: Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր:

Ե շ Ե Կ :

Գոհանամք զքէն տէր Աստուած մեր. որ զարթուցեր զմեզ ՚ի հագստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ: Օարթո զմիտս

մեր արդարութեամբ առ քեզ տէր Աստու-
ած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկուի քո:
Եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածու-
թիւն քո. և ողորմութիւն քո հովանի և
պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց:
Եւ զմեզ զծառայս քո արժանի արա 'ի
տուէ և 'ի գիշերի' և յամենայն ժամու
միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց:
Եւ գոհանալով փառաւորել զհայր և զոր-
դի և զսբ Հոգիդ:


Խաղաղութիւն միեւնոս:

Կենդանարար զօրութիւն և աղբիւր ան-
մահութեան դու ես. Քրիստոս Աստուած
փրկիչ մեր: Ար շնորհեցեր մեզ 'ի մէջ
գիշերի յառնել և խոստովան լինիլ առ
քեզ՝ վասն իրաւանց և արդարութեան քո:
Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր Աստուած
մեր արա զմեզ արթունս և պատրաստս 'ի
ժամ առաւօտու ընդ սուրբս քո: Եւ ընդ
նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ
ընդ հօր և ընդ հոգւոյդ սուրբոյ այժմ և
միշտ. և յաւիտ:

Պահաւթեամբ, և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմբ զհայր և զորդի և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յա խտենից ամէն:

Հայր մեր որ յերկինս:







Աղաչեմ զքեզ Տէր՝ պահպանեա զիս ընդ
հովանեաւ խաչի քոյ սուրբ :

ՈՒՐՐԱԹ :

Դ ԽՈՒՐՐԱՆԻ ԳՐԵԳՈՐԻ ԿԱՐԵԿԱՅՊՈՆԻ. ԽՈՒՐ ԸՆԿ

ՄԱՐՈՒԹՈՅ ԳԼՈՒԽ 50 ԿԱՏԱՐ 4 :

Ն ա ռ զ ի արդ զի արդ ոչ ողորմեսցիս բարե-
գութ, այսքանեացս ձայնարիութեանց՝ կողկո-
ղագինս հեծեծանայցո որ անուամբս այսու
մեծացար, թէ ողորմած եմ ես տէր : Մ, հա
առ չարութիւն գերւոյս, բարութիւն քո
առ մահապարտիս դառնութիւն քաղցրութի
քո. առ կորուսելոյս յայտնութիւն, ճառա-
գայթ քո. առ յանդգնելոյս մուլութիւն, ողոր-
մութիւն քո. առ խակութիւն վնասա-
կարիս, հեղութիւն քո. առ կործանելոյս
սյցելութիւն, աջ քո. առ ընկղմելոյս վե-
րաբարութիւն, ձեռն քո. առ բժշկութիւն
անողջանալի խոցուածոյս, մատն քո. առ
սրալուցելոյս սրաշուսանութիւն, ոգի քո.
առ աստախոտարիս իմ վատահութիւն, եր-
կայնմտութիւն քո. առ օծումն ամենադժ-
նէիս. զօրութիւն քո. առ մեղայորիս քա-

ւուծիւն, հրաման քո. առ փախուցելոյս
 ապաւինութիւն, ոտք քո. առ սրացելոյս
 սլատսսարութիւն, բազուկ քո. առ վրիպե-
 լոյս առաջնորդութիւն, լոյս քո. առ տարա-
 կուսելոյս հնարաւորութիւն, հանձար քո.
 առ անիծելոյս կրկին ստացումն, օրհնութի
 քո. առ վհատելոյս քաջալերութիւն, խրա-
 խոյս քո. առ վշտազնելոյս մխիթարութիւն,
 բաժակ քո. առ նեղելոյս ընդարձակութիւն
 կամք քո. առ ատեցելոյս կոչումն սէր քո.
 առ հաստումն սասանեցելոյս. բան քո. առ
 հոգւով վիրաւորելոյս, կաթուած արեան
 քո. առ աներևոյթ մթերս ցաւոցս, ակնար-
 կութիւն քո. առ յուսայատելոյս անդրէն
 ընտրութիւն, իշխանութիւն քո. առ պա-
 տուաստումն կտրեցելոյս, կցորդութիւն քո.
 առ խաւարաւ մահու ծածկելոյս, նշոյլ կե-
 նաց քոց. առ խռովեցելոյս իմ հանդար-
 տութիւն, խաղաղութիւն քո. առ վայրա-
 գութիւն օտարացելոյս, ողջոյն քո. առ մո-
 լորելոյս դարձաւորութիւն, ձայն քո: Օ-ի
 դու տիրես անի գթութեամբ, և չիք 'ի
 քեզ մասն ինչ խաւարի. և ոչ է բարութի
 առանց քո. և քեզ վայելէ փառք յաւիտե-
 անս ամէն:

ԼՆԵՒ ԽՈՒՐԷ ԽՈՒՆԻ ՓՐԷԿՆԻՆ:

Մեծաւ երկիրդիւ, սոսկացեալ անձամբ
 և ճշմարիտ հաւատով. այժմ խոնարհեալ,
 երկիրպագանեմ սրբոյ և ամենազօրի Խա-
 չիդ, և անպարտելի Նշանիդ Քրիստոսի
 Լստուծոյ մերոյ. և 'ի քէն հայցեմ զօգ-
 նութիւն տառապելոյ ծառայիս քոյ՝ որ ես
 ամենայն բարութեանց ունօղ. ամենաբաւա-
 կան, և յամենայնի կարօղ:

Քանզի դու՝ ո՛վ երկրպագելի և ամենա-
 սուրբ Խաչ: Լթող ես այնմ ամենահա-
 րուստ և ամէնողորմ թագաւորին, որ 'ի
 յերկինս յաթոռս լուսեղէնս բազմեալ՝
 թէպէտ միշտ բաշխէր և բաշխէ առատա-
 պէս ամենայն արարածոց իւրոց զբարիս՝ և
 լցուցանէ զամենեսեան ըստ իւրաքանչիւր
 պիտոյից. սակայն՝ յորժամ 'ի քեզ բազմե-
 ցաւ յաւուր ինեսայութեան, և յաւուր
 ուրախութեան սրտի իւրոյ, այնքան հաճե-
 ցաւ և հաւանեցաւ 'ի քեզ և զուարճացաւ,
 մինչ զի ասաց թէ՛ այս է հանգիստ իմ.
 յաւիտեանս յաւիտենից 'ի սմա բնակեցայց.
 զի հաճեցայ ընդ սա:

Եւ յառաւել յուրախութենէն, ո՛չ շա-
 տացաւ այնոքիւք հասարակական բարեօքն

զորս միշտ հեղոյր յարարածս իւր, այլ բացեալ զգրուես աստուածային դանձարանի մարմնոյ իւրոյ, այսինքն՝ ձեռացն, ոտիցն և կողիցն, բղխեցոյց յիւրաքանչիւրց ականցն զառատահոս աղբիւրս ամենատեսակ բարեաց և շնորհաց. և տարածեալ զամենառատ ձեռս իւր՝ էհեղ և բաշխեաց անչափապէս առ ամենեսեան: Մինչ զի և զկենդանարար մարմին և զարիւն իւր ոչ խնայելով՝ ետ յուտել և յբմպել: Չայնելով առ ամենեսեան թէ՛ եկայք կերոյք ՚ի հացէ իմմէ և արբէք զգինի իմ, զորս տամ անխընայօրէն՝ որքան բազմեալ եմ յաթոռս յայս ողորմութեան և ուրախութեան:

Արդ՝ ով տեղի հանգստեան և սիրելի աթոռ ողորմութեանն Աստուծոյ: Աւ ես մի եմ ՚ի հաւատացելոց և յերկրպագուացն քոց՝ և ՚ի քեզ բազմեալ թագաւորին. որ եմ աղքատ, քաղցեալ, ծարաւի և կարօտ յամենայնի: Ասան որոյ՝ աղաչեմ զքեզ՝ զի ինձ ողորմեսցիս. և յայդքան անպառնելի բարեացդ՝ (որով լիացան երկնաւորք և երկրաւորք). մասն մի՛ և յիս ողորմելոյս կարկառեացես, որ բաւական է ՚ի լցուցումն ամենայնի պիտոյից հոգւոյ և մարմնոյ իմոյ:

Դու ես անօթ, տուփ և բժշկարան այնմ
բժշկապետին . որ իւրով աստուածահրաշ
զօրութեամբն բժշկեաց և առողջացոյց զբո-
լոր բնութիւնս մեր 'ի մահաբեր հիւան-
դութեանց և 'ի զանազան ցաւոց, զորս ըն-
կալեալ էաք 'ի թունից անմարմին օձին .
և շնորհեաց զյաւիտենականն կենդանուի :

Այն ամենայն հոգեկեցոյցք և ամենազօ-
րեղք դեղորայքն 'ի քեզ են ամփոփեալք և
'ի քեզ են գանձեցեալք :

Ահա՛ և ես որ մի եմ 'ի ծառայից և 'ի
բժշկեցելոցն 'ի քէն՝ և 'ի քեզ բազմեալ
բժշկապետէն . վերստին վիրաւորեալ եմ 'ի
նոյն հնոյ թշնամւոյն, և ախտացեալ եմ 'ի
պէսպէս ցաւս և 'ի հիւանդութիւնս 'ի զա-
նազան թունից նոյնոյ չարին . և կարօտիմ
քումդ շնորհաց :

Վասն որոյ՝ աղաչեմ զքեզ ո՛վ ամենա-
բաւական բժիշկ . զի զշիթ մի յայդբան
ամենատեսակ բժշկարար շնորհացդ, ցօղես-
ցես 'ի յիս . որ բաւական է ինձ 'ի բժշկու-
թիւն հոգւոյ և մարմնոյ իմոյ, և տալ ինձ
զյաւիտենականն կենդանութիւն :

Դու ես գաւազան յաղթութեան և զէն
անպարտելի՝ ամենազօր փրկչին մերոյ Յի-

սուռի Քրիստոսի : Որ քեւ պատառեաց զձով մեղաց աշխարհիս. կործանեաց զփարաւօնացեալ թշնամին յանդունդս դժոխոց. ազատեաց զպատկերն իւր 'ի չար ծառայութենէ նորին. և էջան 'ի վերինն երուսաղէմ : Քե ջախջախեաց զգլուխ աներևոյթ վիշապին և անմարմին գողիադայ, և ազատեաց զժողովուրդն իւր 'ի խրոխտանաց և 'ի բռնութենէ նորա :

Արդ՝ և ես, որ մի եմ 'ի ծառայից և 'ի փրկելոցն ամենազօր փրկչին իմոյ 'ի ձեռն քոյ, վերըստին գերեաց նոյն թշնամին իւրով ամենաչար հնարիւքն. և արար ծառայ՝ իւրական չար գործոցն : Աւ միշտ խրոխտաւով 'ի վերայ իմ, կամի զիս յաւիտենականն ոչս ծառայեցուցանել և դժոխային առնել :

Այսան որոյ՝ աղաչեմ զքեզ, ո՛վ ամենազօր սուրբ խաչ : Խորտակեա՛ զբռնութիւն թշնամւոյն իմոյ. և ազատեա՛ զիս 'ի ծառայութենէ նորին : Աւ սլահելով զիս ընդ հովանեաւ քով, հանցես զիս 'ի յերկինս ընդ ամենայն փրկեցելոցն՝ 'ի յաւիտենական ազատութիւնն և յանտրտում ուրախութիւնն :

Ո՛վ ամենացանկալի և յամենեցունց
 երկրպագելի սուրբ Խաչ: Միանգամայն
 դու ես կնիք, նշան, և դրոշմ Լստուծոյն
 աստուծոց, թագաւորին թագաւորաց, արար-
 չին և նախախնամողին ամենայն արարածոց:
 Քանզի՛ քե կնքէ և նշանէ Լստուած
 զիւրսն՝ և բաժանէ յօտարաց: Քե ճանա-
 չէ զիւրսն՝ և ճանաչի ՚ի նոցանէ: Քե
 գրեաց զգիր ազստութեանն աղամայ և նո-
 րայնոցն: Քե նկարագրեաց զնոր ուխտս և
 զօրէնս իւր ՚ի սիրտս նորոյս խորայելի: Քե
 արձանագրեաց քակիլ դժոխոցն և ազատիլ
 հոգւոցն: Քե դառաւ ձռեաց զկործանումն
 սատանայի և բռնութեան նորա: Քե հրա-
 մանագրեաց զխաղաղութիւն երկնաւորաց և
 երկրաւորաց: Քե դրոշմեալ ազատէ և
 պահպանէ զիւրսն ՚ի յանկարծամահ սատակ-
 մանէ, և յաւիտենական մահուանէ, հանէ
 յերկինս և գրէ ՚ի գիրն կենաց: Եւ ՚ի
 հանդերձեալն՝ զքեզ ունեւոյլ առաջի իւր
 նախնիքաց՝ գայ ՚ի դատաստան փառօք հօր
 ՚ի դատել զամենեսեան: Եւ քե կնքէ զա-
 մենահաստատ և զանսխալելի վճիռն զայն
 թէ՛ արդարքն երթիցեն ՚ի կեանսն յաւի-

տենականս և մեղաւորք 'ի տանջանսն յաւիտենականս :

Արդ՝ ո՛վ ամենաբարեւի սեղան՝ և աթոռողորմութեան : Ո՛վ ամենատեսակ շնորհաց օթարան, և ամենայն ցաւոց բժշկարան : Ո՛վ ահարկու զէն, և ամենազօր գաւազան : Ո՛վ ամենասպաշտելի նշան, և անլուծանելի կնիք ամենաթագաւորին Ա.Յ և իրիչին մերոյ Յիսուսի Քրիստոսի սուրբ Խաչ :

Այս ամենայն՝ և ևս առաւել քան զայսոսիկ՝ բիւրասպատիկ պարզեք և բարութիւնք. բժշկութիւնք և կենագործութիւնք. ազատութիւնք և փրկագործութիւնք. աստուածական տնօրէնութիւնք և ներգործութիւնք. քե՛ և 'ի ձեռն քոյ բաշխեցան և բաշխին. գործեցան՝ և գործին. կատարեցան և կատարին : Որոց գործիքն՝ միջնորդն և շտեմարանն՝ դու ես ո՛վ ամենասիրելի Խաչ Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

Արդ՝ և ես ամենաթշուառս և ամենողորմելիս. որ մի եմ՝ 'ի քե փրկեցելոցն և բարերարեցելոցն. քե կնքեցելոց և երկրպագուաց ծառայիցն քոց :

Քանզի՛ քե վերածնեալ կենդանացայ և նորոգեցայ ՚ի հնութենէ մեղաց և ՚ի մեռելութենէ մահաբեր ծառոյն :

Քե կնքեցայ և նշանեցայ՝ լինիլ Քրիստոսի և ժառանգորդ յաւիտենական կենաց :

Քե դրոշմեցեալ բաժանեցայ յօտարաց՝ և գրեցայ ոչխար և հաւատացեալ Քրիստոսի ճշմարիտ հովուին :

Քե կնքեմ և նշանեմ զղէմս իմ և ամբափակեմ միշտ զամենայն զգայարանս հոգւոյ և մարմնոյ իմոյ. և Քե պարծիմ հանապազ, և զքեզ ունիմ ինձ յոյս և օգնական յամենայնում ժամու :

Եւ այժմ՝ անկանիմ առաջի ամենազօրի սրբոյ նշանիդ. և խոնարհեալ երկիրպագանեմ. և համբուրեմ շրթամբք հոգւոյս զհող պատուանդանիդ. և խնդրեմ աղաչանօք. զի զքո սուրբ և զահեղ անունդ և զսոսկալի կնիքդ անջնջելի և անմենկելի պահեսցես ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ ծառայիս քոյ. և ընդ հովանեաւ քով պահպանեսցես զիս ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր վտանգից :

Երկրպագեմ ընդ քեզ և սրբոց և հրաշագործ գործակցացն քոց. աստուածակիր և կողամուխ սրբոյ Գեղարդեանն. սոսկա-

լեաց սրբոց Տևեռացն. աստուածաշօշափ սրբոյ փշեայ Պասկին: և այլոց պատուական արեամբ ներկեալ Նշանաց և Պործեացդ չարչարանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Արբ ամենեքեանքդ՝ էք շտեմարանք շնորհաց. աղբիւրք բարեաց. գործիք փրկութեան. նշանք ամենազօրք. և անտկարանալի սուրք ընդդէմ թշնամւոյն:

Արոց ամենեցունցդ խոնարհեալ երկիրպագանեմ՝ մեծաւ երկիւղիւ և պատկառանօք. և աղաչեմ զձեզ. ով շնորհատուք և փրկագործք սուրք Նշանք:

Երուք ծառայիս ձերոյ միշտ օգնականք պահապանք՝ հովանիք և վերակացուք. ՚ի տուէ և ՚ի գիշերի. ՚ի ննջել և ՚ի յառնել. ՚ի նստիլ և ՚ի դնալ. ՚ի գործել և ՚ի հանդէլ. և յամենայնում. ժամու:

Արպէս զի՝ ընդ ձերով հովանաւորութեամբն ամբափակեալ և պարսպեալ՝ կեցից պահպանեալ և փրկեցեալ յամենից մեղաց. ՚ի փորձութեանց դիւաց. ՚ի մարդոց անիրաւաց. ՚ի չարախոհ և ՚ի զրախօս լեզուաց. ՚ի մարդադէմ գազանաց. ՚ի թունաւոր և վնասատու կենդանեաց. ՚ի յերևելի

և յաներևոյթ թշնամեաց. 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր վտանգից. և յամենից յորոգայթից և 'ի չարահնար պատահմանց:

Եւ 'ի յիշեւն իմ զսոսկալի անունս ձեր, և 'ի կնքեւն զդէմս իմ, հալածեսցին և չքասցին. կորիցեն և անյայտք եղիցին ամենայն հնարք՝ երեւոյթք. ազդմունք. ծողակք և որոգայթք չարին:

Եւ որչափ՝ և յորժամ՝ յարիցեն 'ի վերայ իմ 'ի պատրել և 'ի նենգել զիս ըստ հոգւոյս և ըստ մարմնոյս, տեսանիցեն պարսպեալ և կնքեալ ամենասոսկալի անուամբ ձերով՝ դարձցին յետս ամօթալից և գլխակորք:

Եւ որքան եմ 'ի կեանս յայս, կեցից պահպանեալ և ապրեցեալ յամենայն որոգայթից թշնամեաց՝ և յամենից մեղսառիթ ընթացից՝ սուրբ և հրաշալի անուամբ ձերով:

Եւ յետ աստեացս ձեօք կնքեցեալ՝ ներկայացայց առաջի Քրիստոսի Աստուծոյն իմոյ, և դասեցայց ընդ աջակողմեանսն, և լուայց զօրհնաբանելի ձայնն զայն թէ՛ եկայք օրհնեալք հօր իմոյ. և ժառանգեցէք զյաւիտենական կեանսն: Յայնժամ և ես

փառաւորեցից զՔրիստոս Աստուածն իմ
 ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյն. և զձեզ
 զսուրբ և զփրկագործ նշանսդ՝ գոհու-
 թեամբ բարեբանեցից յաւիտեանս յաւի-
 տենից. ամէն :



Թագաւոր Արշակունի :

Խտաճարի սրբութեան քում լուր տէր
 ձայնի իմում. և աղաչանք իմ ժամանեսցեն
 'ի յականջս քո տէր : Առաւ ինձ 'ի տա-
 ճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և
 աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս
 նորա. և աղաչանք իմ ժամ :

Որ լուսատու ես տիեզերաց Քրիստոս
 Աստուած, լուսաւորեա զիմ զխաւարային
 խորհուրդս, և կեցո :

Օրհնեալ ես տէր, և փառաւորեալ է քո
 անբաւ մարդասիրութիւնդ. զաղաչանս մեր
 քեզ մատուցանեմք. որ թագաւորդ ես յա-
 վիտենից. զննջեցեալսն մեր արժանի արա
 տէր ընդունիլ 'ի կեանսդ յաւիտենից :
 Արտասուս ինձ շնորհեա 'ի յապաշխարու-

Թիւն տէր. զի լուացից զմեզս անձին իմոյ
որպէս պորնիկն աղաչեմ և կեցո : Աստակեցայ
ես 'ի հեծութեան իմում. լուացի զամենայն
գիշեր զմահիծս իմ. և արտասուք իմովք
զպնկողինս իմ թացի. զի լուացից զմեզս :

Որ աղբիւրդ ես անապական Քիստոս
Մատուած, զվիրաւորեալ անձն իմ 'ի մեղաց՝
բժշկեա տէր բղխմամբ արտասուաց. և կեցո :
Օմոլորեալ ծառայս խնդրեա տէր. և մի
դատապարտեր զիս 'ի յաւուրն այցելութեանն
քոյ մարդասեր : Կեցցէ անձն իմ. օրհնեսցե
զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ :
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ.
խնդրեա զծառայս քո. զի ըզ զպատու իրանս
քո ես ոչ մոռացայ. և մի դատապարտեր
զիս 'ի յաւուրն այցելութեան քոյ մարդասէր :

Որ մոլորեցայ 'ի հօտէ քումմէ հովիւ բարի.
խնդրեայ զիս զմոլորեալս. և սրժանաւորեա
խառնիլ 'ի հօտ քո Քրիստոս. և կեցո :

Շաբաթի Երեսուցի :

Համբառնամ առ քե՛զ տէ՛ր զաչս իմ. նայենաց յի՛ս գըթութըրդ քուլ և ողորմեայ: Դու ես յոյս և ապակէն իմ. զի՛րձո՞ զիս յորոգայթէ մեղաց. և ո՞ղ: Ապրեցուցիչ իմ և փրկիչ իմ ապրեցո՞ զիս յորոգայթէ մեղաց. և ող:

Բազմութիւն յանցանօք ծանրաբեռնեալէ անձն իմ. միայնո՞յ քեզ մարդասիրի աղանձեմ ողորմեա ի՛նձ անձն: Բըղխամք արտասուաց և հառաչանօք սրբօր իմոյ, անգաղանք հայցեմ բազմամեղութեամք քաւեան զի՛ս անձն: Բազմագութ մարդասէր շնորհեա զթողուի իմոյ՝ յանցանաց. զի առ քե՛զ միայն պաղատիմ. քաւե:

Աստուած մարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր. քաւեան զիս ըզ մեղաւորս: Ո՛ր քղանցիւ հանդերձի քո՞ զմերձեցեալն ՚ի քեզ բժշկեցեր. քա: Ո՛ր բանիւ հրամանի՞ քո՞ զանդամալուծն առողջացուցեր. քա:

Ո՛ր զազաղանկ կընծն այլազգւոյ. առ ընկալար փրկիչ մարդասիրապէս. և զի՛մս ապաշխարութե. արա արժանի ըզ ձայն մեղուցելոյս ընդունող: Ո՛ր զսուաջնապարզևի քո՞

նը շխար. ոչ խնայեցեր ընձեռել շանըն հովուասիրի. և զի: Ո՛ր հառաչմամբ ձայնի ազախնոյն. ոչ լըռեցեր փըրկիչ ընդունակ մեղաւորաց. և զի:

Անկանիմ առաջի քո և խընդրեմ զթողութի յանցանաց իմոց. մի անտես առներ հայր զաղաչանս իմ: Աղաղակեմ որպէս մաքսաւորն. և հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս սրունիկն. մի անտես: Յաներևութ թըշնամուն սարտեցայ. և ՚ի գաղտնի՛ նետից բանսարկուին վիրաւորեցայ. մի անտես:

Անկանիմ առաջի՛ քո տէր. բազմամեղիս ողորմեա: Աղաղակե՛մ առ քեզ փըրկիչ. քանանացւոյն ըզ ձայն. բա: Մաքսաւորին հառաչմամբ. կարդամ առ քեզ փըրկիչ և բարերար բա:

Ողորմեաց ինձ Քրիստոս ողորմութի՛ք քով մեծաւ. զի կարօտ եմ ես շնորհի քոյ և ողորմութե՛դ. ողորմեաց և լուր ինձ բազմամեղի՛ս: Ալ ուր տէր ձայնի ողբալոյս և ցաւագին սրաղատանացս. որ ամօթով կամ առաջի քոյ իմ չարաչար վարուքս. ողորմե: Անկալ տէր զաղաչանս իմ և զհառաչանքս սըրտի իմոյ. որ աղաղակեմ որպէս կինըն քանանացի. ողորմե:

Քե՛զ միայնո՛յ մօ՛ր և կուօի մաղթեմք
 հայցելով ՚ի քէն. բարեխօսեա անդադար
 առ որդիդ .քո և անձ մեր. փրկելէ ըզ մե՛զ
 ՚ի փորձութիւն և յամենայն վըտանդից մերոց :

Օտրուի՛ն սուրբ խաչի քոյ Քրիստոս որ
 կանգնեցեր ՚ի փրկելութիւն աշխարհի. սա-
 պահեացէ ըզ մե՛զ յամ փորցութենէ՛ :

ՍԱԳՄՈՍՔ ՕՂԳՄԱՆ ԵՒ ԼՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ :

ԼԵԼՆԷ՝ ԼԵԼՆԷ :

- 1 Կուաղեցաւ սիրտ իմ. և մարմին իմ. անձ սրտի իմոյ. բաժին իմ. անձ յաւիտեան :
- 2 Յերեւաց բարկուե՛ սրտմտուե՛ քոյ զի դու բարձրացուցեր, և խոնարհեցուցեր զիս :
- 3 Լուրբ իմ ինչ հովանի անցին. և ես ինչ խոտ ցամաքեցայ :
- 4 Ինչ ան յաւիտեան կաս. և յիշատակ քո յազգէ մինչև յազգ :
- 5 Ինչ յարուցեալ գթասցիս ՚ի վերայ մեր. ժամանակ գթալոյ քոյ հասեալէ ժամ :

- 6 Ինձ մերձեցալ առ անձ բարիէ. և դնել
առ անձ զյոյս իմ :
- 7 Տէր լուր աղօթից իմոց. և աղաղակիմ առ
քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո
յինէն :
- 8 Յաւուր նեղութե՛ք իմոյ խոնարհեցոյ առիս
զունկն քո. յորում աւուր կարդամ առ
քեզ՝ վաղվաղակի լուր ինձ :
- 9 Խոստովան եղիցուք առ քեզ անձ. խոստո-
վան եղիցուք՝ և կարդասցուք զանուն քո :
- 10 Չայնիւ իմով ես առ քեզ տէր կարդացի-
ձայնիւ իմով առ անձդ. և նայեաց առիս :
- 11 Յաւուր նեղութե՛ք իմոյ զանձ խնդրեցի
ձերօք իմովք. և ՚ի դիշերի առաջի քո ոչ
խաբեցայ :
- 12 Ոչ կամէր մխիթարիլ անձն իմ. յիշեցի
զանձ և ուրախ եղէ հոգայի, և նուղիւր յիս
հոգի իմ :
- 13 Պամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ,
և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զա-
ռաջինս. և զամսն յաւիտենից յիշեցի :
- 14 Խօսեցայ ՚ի դիշերի ընդ սրտի իմում.
հոգայի՝ և տարապիւր յիս հոգի իմ :
- 15 Ս՚ի թէ յաւիտենից մերժեսցես զիս անձ.
և ոչ ևս յաւելցիս հաճիլ և ևս :

- 16 Կամ իսպառ արգելցէս զողորմութի՛ք քո յինէն. կամ կատարեաց զբան քո յազգէ մինչև յազգ:
- 17 Կամ մոռացիս գթալ ան իմ և ևս, կամ արգելցես զգթութի՛ն քո բարկութի՛ք քով:
- 18 Եւսացի այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյ բարձրելոյդ:
- 19 Յիշեցի զգործս քո տէր. 'ի սկզբանէ յիշեցի զըսբանչելիս քո:
- 20 Մի յիշեր զմեղս իմ զառաջինս վաղ վաղ եկեսցէ առ մեզ ողորմութի՛ք քո անդի աղքատացայ յուժ:
- 21 Օգնեա ինձ ան փրկիչ իմ. վասն փառաց անուան քո:
- 22 Տէր փրկեա զիս՝ և քաւեա զմեղս իմ, վասն անուան քո:
- 23 Օջարթո զզօրութի՛ս քո՝ և եկ 'ի կեցուցանել զիս:
- 24 Եւստուած զօրութե՛ց դարձո զիս. երևեցո զերեսս՝ քո 'ի մեզ՝ և կեցցուք:
- 25 Տէր ան զօրութե՛ց. մինչև յերբ բարկանաս յաղօթս ծառայիս քո:
- 26 Ոչ ևս 'ի բաց եղեցես 'ի քէն. կեցուցես դու զիս. և զանուն քո անկարգացից:

- 27 Տէր անձ զօրութեց՝ լուր աղօթից իմոց.
ունկնդիր անձ յակորայ:
- 28 Դարձ առ մեզ անձ փրկիչ մեր. և դարձ
նո զսրտմտութիս քո ՚ի մէնջ:
- 29 Մի յուխտեան բարկանար մեզ. և մի-
ձգեր զբարկութի քո յազգէ մինչև յազգէ:
- 30 Լստուած դու դարձեալ կեցուսցես ըզ-
մեզ. ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ:
- 31 Յոյց ինձ տէր զողորմութիս քո. և զփրկու-
թիս քո տուր մեզ:
- 32 Խոնարհեցո տէր զունկն քո. և լուր ինձ.
զի աղքատ և տընանկ եմ ես:
- 33 Պահեա զանձն իմ. սք տէր՝ և փրկեա
զձառայս քո անձ իմ. որ ՚ի քեզ յուսացայ:
- 34 Ողորմեաց ինձ տէր՝ զի առ քեզ աղա-
ղակեցի զօրհանապաղ. ուրախ արա զանձն
ձառայի քոյ՝ զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ:
- 35 Օ, ի դու տէր՝ քաղցր՝ և ուղիղես. բա-
զում ողորմ առ ամենեսեան՝ որք կարդան
առ քեզ:
- 36 Ունկն դիր տէր աղօթից իմոց. և նայեաց
՚ի ձայն խնդրուածաց իմոց:
- 37 Յաւուր նեղուէ իմոյ կարդացի առ քեզ՝
և լուար ինձ:

- 38 Ոչ ոք է նման քեզ յաստուածս տէր. և ոչ ոք է որպէս զգործս քո:
- 39 Օ՛ւմմ ազգս՝ զորս արարեր՝ եկեսցէն՝ և երկիրսպագցէն առաջի քո տէր փարաւոր արասցեն զանուն քո յաւիտեան:
- 40 Մեծես դու տէր՝ և առնես սքանչելիս և դու միայն ես ամ:
- 41 Առաջնորդեա ինձ՝ ի ճանապարհի քում և գնացից ՚ի ճշմարտութե քում և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչիլ յանուանէ քումէ:
- 42 Խոստովան եղեց առ քեզ տէր ամ իմ. բոլորով սրտիւ իմով փաւաւոր արարից զանուն քո յաւիտեան:
- 43 Մեծ եղև ՚ի վերայ իմ ողորմութիւն քո. փրկեցեր զանձն իմ ՚ի դժոխոց ներքնոց:
- 44 Աստուած՝ անօրէնք յարեան ՚ի վերայ իմ. և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան ըզ քեզ ամ առաջի իւրանց:
- 45 Այլ դու տէր ամ իմ. գթած ես և ողորմած՝ երկայնամիտ՝ բազում ողորմ. և ճշմարիտ. նայեաց առիս և ողորմեաց ինձ:
- 46 Տուր զօրութի՛ ծառայի քոյ կեցոյ զորդի աղախնոյ քոյ. և արա առիս նշան բարութ:

- 47 Տեսցեն ատելիք իմ. և ամաչեսցեն. զի
դու ար օգնեցեր ինձ. և մխիթարեցեր զիս:
- 48 Լցաք առաւօտուց ողորմութիւնքով. ցնծա-
ցաք. և ուրախ եղաք զամ աւուրս կենաց
մերոց:
- 49 Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս
խոնարհ արարեր զմեզ. և ամացն, յորս
տեսաք զչարհարանս:
- 50 Հայեաց տէր ՚ի ծառայս քո՝ և ՚ի գործս
ձեռաց քոց. և առաջնորդեան որդւոց մե-
րոց. եղիցի լոյս տէր ամօր ՚ի վերայ մեր:
- 51 Օգործս ձերաց իմոց ուղիղ արա ինձ
տէր. և զգործս ձերաց իմոց յաջողեա ինձ:
- 52 Պատրաստէ սիրտ իմ ամ. պատրաստէ
սիրտ իմ օրհնել՝ և սաղմոս ասել քեզ
փարօք իմովք:
- 53 Օգարթիք փառք իմ. զարթիք սաղմոսիւք
և օրհնութիւնք. և ես զարթեաց առաւօտուց:
- 54 Խոստովան եղեց քեզ ՚ի ժողովուրդս
տէր. և սաղմոս ասացից քեզ յազիսս:
- 55 Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւնք.
մինչև յամպս է ճշմարտութիւնք:
- 56 Բարձրեալ ես դու յերկինս ամ. յամ
երկրի են փարք քո:

- 57 Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո
աջուլ քո. և լուր մեզ:
- 58 Տուր մեզ զօգնութի ինեղութե. զի սու-
տէ փրկութի մարդոյ:
- 59 Եթէ տէր ոչ օգնեալ էիր ինձ, փոքր մի
ևս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս:
- 60 Թէ ասէի՝ ահա սասանեցան ոտք իմ.
ողորմութի քո տէր օգներ ինձ:
- 61 Բայտ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթա-
րութի քո ուրախ առներ զանձն իմ:
- 62 'Ի խորոց կարդացի առ քեզ տէր. տէր
լուր ձայնի իմում:
- 63 Եղիցին ականջք քո. լսել ձայնի աղօ-
թից իմոց:
- 64 Եթէ զանօրենութիս իմ քննես տէր.
տէր ո կարէ կալ առաջի քո. զի 'ի քէնէ
բաւութիւն:
- 65 Սասն անուան քոյ համբերի տէր. համ-
բեր բանի քում. յուսացաւ անձն իմ 'ի տօր:
- 66 'Ի քէն է տէր ողորմութի և փրկութի
բազում. և դու փրկես զմեզ՝ յամ նե-
ղութեց մերոց:
- 67 Ողորմութի իմ՝ և ապաւէն իմ. օգնա-
կան իմ՝ և փրկիչ իմ. և ես յուսամ 'ի քեզ:

68 Առաքեա զձեռն քո 'ի բարձանց. և փրկեա զիս 'ի ջուրց բազմաց. և 'ի ձեռաց որդւոց օտարաց:

69 Տարձր առնեմ զքեզ ան իմ. և թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո յաւիտեան. և յաւիտեանս յաւիտենից:

70 Օրհնեա անձնիմ զտէր. օրհնեցից զտէր 'ի կեանս իմ. սաղմոս ասացից աստուծոյ իմոյ մինչև եմ ես:

Փառք հօր և որդ:

Ս = շ Է = Է Կ :

Լուր մեզ տէր՝ լուր մեզ անսպին ողորմութ և գթութ քով խնայեա յարարածս քո:

Մարդասէր տէր:

Ք = ը Ը = շ :

Եւ ևս խաղաղութե՛ն զտէր աղաչեսցուք: Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խընդրեսցուք 'ի տեառնէդ ան' և 'ի փրկչէդ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. 'ի ժամոյս պաշտաման և աղօթից: Օ, ի արժանի ընդունե-

լուծե՛ արասցէս. լուիցես տէր ձայնի աղա-
 չանաց մերոց: Մնկալցիս զխնդրուածս սըր-
 տից մերոց. թող ըզ յանցանս մեր ողորմեաց
 'ի վերայ մեր: Աղօթք մեր և խնդրուածք
 յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տե-
 րուծե՛ն քո: Տուր մեզ միաբան միով հա-
 ւատով արդարութե՛ն վաստակիլ 'ի գործս
 բարեաց: Օ, ի զողորմութե՛ զշնորհն քո ա-
 րասցէս 'ի վերայ մեր՝ տէր ամենակալ կեցո
 և ողորմեայ: Օ, ժամս և զառաջիկայ օրս խա-
 ղաղու: Օ, հրեշտակ խաղաղութե՛: Օ, քա-
 ւութի՛ն: Օ, սրբոյ խաչին: Աւ և ս միա: Օ, ան-
 ձինս: Ողորմեաց: Տէր ողորմեա. տէր:

Ա. Է. Ե. :

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս. որ
 մեծդ ես ողորմութի և առատ պարգևօք
 բարերարութե՛ քո: Ար դու քոյին կամաւդ
 'ի ժամոյս յասմիկ համբերեցեր չարչարա-
 նաց՝ խաչի և մահու յաղագս մեղաց մերոց:
 Աւ պարգևեցեր առատապէս զպարգևս հոգ-
 ւոյդ սրբոյ՝ երանելի առաքելոցն: Հաղորդս
 արա և զմեզ տէր՝ աղաչեմք զքեզ՝ անային
 պարգևացդ, թողութե՛ մեղաց, և ընդունե-
 լուծե՛ հոգւոյդ սրբոյ: Արպէս զի արժանա-

Լորք եղիցուք գոհութիւն փառաւորել զքեզ
ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ այժմ և :

Խաղաղութիւն աստուծոյ :

Խաղաղութիւն քով Քրիստոս փրկիչ մեր
որ ՚ի վեր է քան զամ միտս և զբանս. ամ-
րացո՞ զմեզ և աներկիւղ. պահեա յամ չա-
րէ : Հաւասարեա՞ զմեզ ընդ ճշմարիտ երկր-
պագուս քո. որք հոգւով և ճշմարտութիւն
քեզ երկիրպագանեն : Վասն զի ամենա-
սուրբ երրորդութե՞զ վայելեն փարթ՝ իշխա-
նութիւն և պատիւ :

Հայր մեր որ յերկինս :





Ատից խոռն քո պատարագօք, տաց քեզ
զուխտս իմ, զոր խոստացան քեզ շրթունք
իմ, զոր բերան իմ խօսեցաւ ինեզութեան:
Սղ. Գիւ. 65 Հմր. 13:

Շ Ա Ռ Ա Թ :

Առջին Գրքի Երկրորդ Գլխի Երեսներն աստիճանաբար և աստիճանաբար :

Անակիզըն Աստծ և անհասանելի՝ բաց
զաչս սրտի իմոյ բանիւ գիտութե՛ք քո՛ բա-
ւական լինիլ գոհանալ զանուանէ քումմէ.
գովել և փառաւորել զքեզ և արժանապէս
գնալ ՚ի ճանապարհս քո: Բատաւոր արդար՝
երկայնամտեան առիս բազմամե՛ղս քոյով մար-
դասիրութե՛ք. զի եղկելի եմ մեղօք՝ զեղխ-
եալ անօրէնութե՛ք. և զազիր գիճութե՛ք զմար-
մինս իմ ասպականեցի: Որ էիր յառաջ էա-
կանութե՛ք ան ընդ հօր՝ ընդ մեզ հաճեցար
բնակիլ ընդ հողեղինացս, և ընդ մարդկան
շրջեցար ընդ մեղաւորոցս թող զմեղս իմ
և թեթեացօ զճանրաբեռնեալս, ժտելով հայ-
ցեմ ՚ի քէն, զի ժամանակէ ասպաշխարուեի
՚ի քէն հայցեմ բնազումողորմ տէր աղբիւր
կենաց՝ լուսաւորեան զաչս սրտի իմոյ լուսով
գիտութե՛ք քո: Յոյս Յիսուս Քրիստոս, ծա-
գումն անձառելոյ լուսոյ, կեանք՝ որոց սի-
րեն զքեզ, կերակուր անսպառելի, կենդա-

նութի յաւիտենից: Հրով հոգւոյդ՝ սրբոյ՝
 հալեան զպաղումն ձմեռնացեալ սրտի իմոյ,
 որ ձուլեալ է եղկելի գործովք անօրէնուէն:
 Ուղղեանք անձային զօրուքդ զանուղղայ խոր-
 հուրդս իմ չարուղեկանին՝ աստի կենացս:
 Ճրագ ճշմարտութե՛ն և ճառագայթատու՝
 մերկեան յինէն զխաւար մթացեալ մեղացս:
 Օւղկելիս մեղօք յիշեանք անձուքդ յա-
 հագին աւուրն յայնմիկ ահեղ մեծի դա-
 տաստանին: Ալէկոծելոց նաւահանգիստ՝ և
 լիութի ունայնացելոցս յարդարութէ և ու-
 նողիս զանօրէնութի չար գործովք: Դ չա-
 րիս չարչարեալ է անձն իմ. զինչ արարից
 մեղուցեալ անձամբս. պէսպէս ախտիւք պղղ-
 ծեցայ յանառակութե՛ն, զրկեցայ ՚ի հայրենա-
 կան լուսոյն. ջնջեցի զձեռագիր օրդէգրուէ
 կենաց ջեռուցի զհուր յաւիտենական: Աք
 սրտիւ կարդամ առ քեզ՝ ամենասուրբդ անձ.
 վտանգելոյս օգնական. վիրաւորելոյս բժիշկ,
 տեղի տարակուսելոյս. կորուսելոյս խնդրող,
 մոլորելոյս և գերելոյս դարձուցիչ. ապաւէն
 անցուն, որք կարդան առ քեզ: Տուր տա-
 ռապելոյս և տարակուսելոյս. գերելոյս ՚ի սա-
 տանայէ՝ զմեծ քո զողորմութի: Ահա հա-
 սեալ եմ ՚ի դուռն մահու չարաչար գոր-

ծովք խմովք. զաչս իմ 'ի վեր համբառնամ
 առ բարձրեալ անդ և բարերար. հայցեմ
 'ի քէն բաց զդուռն ողորմութե մեղուցեալ
 հոգւոյ իմոյ. որպէս բացեր աւաղակին ըզ-
 դուռն դրախտին քո. և մի ամօթալից դար-
 ձուցաներ զիս 'ի քո առատ ողորմութէ. զի
 գին եմ սք արեան քո. յիշեան զիս և ողոր-
 մեան ինձ անձ: Որ անեղ և անսկիզբն ես՝
 անստեղծ և արարիչ ան արարածոց, որ ոչ
 յաշխարհս տանել զքեզ կարէ, և ոչ եր-
 կինք բովանդակել կարեն. 'ի վեր ես քան
 զերկինս և անբաւ քան զծագս. երևելիք
 և աներևոյթ բովանդակեալ են առաջի քո:
 'Ին տիրես անցուն և հրամանաւ քո կա-
 ոտվարին ան արարածք: 'Ին աղքատացու-
 ցանես և դու մեծացուցանես. դու սպանա-
 նես հարկանես և բժշկես: 'Ին ես ան իմ
 և փրկիչ վտանգելոյս 'ի սատանայէ. առող-
 ջացուցիչ հիւանդիս մեղօք. ընդունող ա-
 ղօթից և կատարիչ խնդրուածաց: 'Ես ան
 տէր 'ի պաղատանս իմ և ընկալ զիս մար-
 դասիրութի քո: Մի բարկութի քո խրա-
 տեր զիս. և մի սրտմտութի քո յանդիմա-
 ներ զիս. զի դու ես տէր և արարիչ. հայր
 և ստեղծիչ. և ես առ ոյլ երթիցեմ, զի օգ-

նութի իմ 'ի քէն է: Հայեանց 'ի պաղատանս
 իմ. և ընկալ զիս մարդասիրութիւն քո. զի
 քեզ մեղայ և զքեզ աղաչեմ և զքեզ խոս-
 տովանիմ: Մեղայ յերկինս և առաջի քո.
 մի ընդ դատեալսն տանջեր զիս. և մի ընդ
 դատապարտեալսն պատուհասեր: Այլ ընդ
 կամարարս կամաց քոց ընկալցիս. և ընդ պա-
 հօլս պատուիրանաց քոց պահեան զիս. զի թէ
 առանց ներելոյ զբազում յանցանս իմ
 քննես, ապա ընդունայն է ինձ խոստումս յա-
 րութե. և հուր գեհենին է ինձ ժառան-
 գութի. և եթէ զդատարկաբանութիս իմ և
 զանդէս զայլ անօրէնութիս իմ խնդրեսցես
 յինէն, ապա երանեմ չեղելոցն յորովայնէ:
 Հայեան տէր 'ի պաղատանս իմ և ընկալ զիս
 մարդասիրութիւն քո: Աղորմեան ինձ որպէս
 քանանացւոյն, իսրայէլիցն, իսր մաբաւո-
 ռին. և գթայիս իսրայէլ յանառակ որդին. և իսր
 աւազակին՝ շնորհեան բազում յանցանաց
 իմոց զթողութի: Այնկալ զիս իսրայէլ զհայհոյիչսն
 և զհալածիչսն. փարատեցո՛ղ զիսաւար մեղաց
 յաջաց իմոց: Բաց զայս իմ զլցեալս երկ-
 րային ցանկութեամբ՝ երկնային լուսովդ և
 բժշկեան զվիրաւորեալ լեզուս իմ 'ի բամ-
 բասանաց: Արբեան զսիրտ իմ 'ի չար և 'ի

պիղծ խորհրդոց, վասն զի քեզ ցանկամ
տնդ իմոյ բարերարի և բազմագութի իմոյ
արարչիդ: Մի յաւիտենական ամօթովն ա-
մաչեցուցաներ զիս. և մի ահեղ դատաստա-
նաւն դողացուցաներ: Մի տիեզերական հրա-
պարակաւն զիս յանդիմաներ. և մի աննե-
րելի տանջանցն մատներ: Մի սոսկալի հրովն
պատուհասեր. այլ փրկեա՛ զիս ՚ի հրացեալ
հնոցէն, ՚ի հրահոսեալ գետոցն և յորդանցն
չարաթուռից. ՚ի հանապազորդ նեղուէն և ՚ի
կրճտել ատամանցն: Եւ բնակեցո՛ զիս ը կա-
մարարս կամաց քոց՝ յննցական կեանսն: Օհ
ընդ նոսին արժանի եղէց զոհանալով փառա-
ւորել զհայր և զՈրդի և զսբ հոգիդ. ամէն:

Շարահանք Այոշխարոսեան :

Քրիստոս անբ յոյս ապաշխարողաց. շնոր-
հեա զթողութի՛ բազում յանցանաց իմոց:
Եւ քեզ բազմագո՛ւթ ապաւինեալ կարդա-
մըք մի մերժեր ըզ մե՛զ յողորմուէ քում-
մէ: Որպէս զաւազակն աղաղակե՛մ առ քեզ,
յիշեա և զի՛ս տէր՝ ՚ի քում յարքայուեդ:
Բզ մե՛ղս ի՛մ խոստովան լինիմ առ քեզ
քո. որ միայնդ ե՛ս բազմագո՛ւթ թողութք

ողորմեա ինձ անձ: Իսկ ահ՛ր որ ճշմարտու
թեանց ես սիրող. և քրննե՛ս ըզ ծածուկըս
գաղտնեանց սըրտի խմյ. ողոր՛: Տո՛ւր ի՛նձ
ցընծուի՛ փըրկութե՛. և հոգևով տէրութե՛րդ
քո հաստատեան զիս. և ողոր: Ալիք յանցա-
նանց զիս ալէկոծեն. և մեղք իմ բազում
զիս յանդիմանե՛ն: Արդ զինչ արարի՛ց մե-
ղուցեալ անձամբս. որ չեմ՝ ապրելոց յա-
հագին հըրոյն: Մեղայ քեզ քս որդի ան-
չնորհեա զթողուի՛ բազում՝ յանցանաց իմոց:

Տէր որ իմէջ լերինն. աղբերացուցե՛ր
ըզ ջուրն՝ ՚ի վիմէն: Տէր ՚ի սըրտէ իմմէ.
հան ինձ արտասո՛ւս ասպաշխարութե: Օ ի
կեցից և ասպաշխարութի՛ք ապրեցայց. ՚ի հան-
դերձեալ քոց դատաստանաց:

Մեղուցեալ անձամբ կարդամ՝ առ քեզ
հայր երկնաւոր. օգնեա ինձ ինեղուես. որ մե-
ղօքս եմ մեռեալ օգնեան ի՛նձ: Ա իրաւորե-
ցայ ես յաներևոյթ թշնամւոյն բըժի՛շկ հի-
ւանդաց. բըժըշկեա զիմ զհիւանդո՛ւիս. որ
մեղօքս եմ մեռեալ օգն: Մոլորեցայ ես նպ
զօջխար կորուսել. խընդրօ՛ղ գերեւոց. խընդ-
րեա զիս ըզ մոլորեալս. որ մեղօքս եմ մե:

Մեղայ քեզ անձ քաւեա զիս. և ողորմե՛ա
ինձ անձ: Աջխար եմ բանաւոր հօտի քո և

առ քեզ ապաւինիմ հովիւ բարի խընդրեա
զիս ըզ մոլորեալս. և ողորմեա: Ի ծովու
մեղաց ալէկոծեալ եմ և առ քեզ աղաղա-
կեմ նաւապետ բարի. փըրկեա զիս ՚ի վը-
տանգէս. և ողոր:

Օջարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն
իմ. յահեղ քոց դատաստանացդ յաններե-
լի տանջանացն: Քանզի կամաւ մերձեցայ ՚ի
մեղըս մեծամեծս. արդ կայ և մնայ ինձ յան-
ներելի պատուհասն: Արդ անկեալ աղաչեմ
փրկիչ և բարերար. խնայեմ յիս ՚ի մեղու-
ցեալս. և ողորմեաց ինձ բազմամեղիս:

Ամենակալ քաւեա զմեղս իմ. զի անբժ ես
ապաշխարողաց: Աւ զհողիդ սք մի հաներ
յինէն. զի անբժ: Աւ փըրկեա զիս յահագի՞ն
հըրուն. զի անբժ:

Յոյս իմ ՚ի մանկուէ իմմէ. մի թողուր զիս
տէ՞ր անբժ իմ: Յոյս իմ ՚ի ժամանակի ծե-
րուէ իմոյ. մի թող: Յոյս իմ ՚ի միւսան-
գամ գալըստեանըն քո. մի անտես առներ-
զիս տէ՞ր անբժ իմ:

Ի վերանալ յինէն աւուրց իմոց տէր օգ-
նեմ ինձ միայն մարդասէ՞ր. Օջարջարանըս
խաչի և մահու յանձն առեր. տէր օգնեմ:

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի
և միշտ կուսի. տէր օգնեա :

Օղորմութեան քոյ զգուռն բանց մե՞զ
տէր. և արժանի արն զմեզ լուսեղեն յար-
կաց քոյ ընդ սքրս քո՞ :

Ի պատրաստեալ քո օթեվանքս սըրբոց
քոյ ընկա՛լ և ըզ մեզ փըրկի՛ց յորդեգ-
րուի՛ ՚ի դըպրուէ կենանց : Ի նըստի՛ղ քո յա-
տենի դատաւոր ահեղ՝ խնայեա՛ յարարծս քո.
բարեխօսութի՛ւք սք ճըգնաւորանցն :

ՍԱՂՄՈՒԹ ԶՂՋՄԱՆ ԵՒ ԵՊԱՇԽՍԵՐՈՒԹԵԱՆ :

ԱԷԼՆԵ՝ ԽԷԼՆԵ՝ :

- 1 Բոլորով սրտիւ իմով խնդրեցից ըզ քեզ .
մի մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոյ :
- 2 Ի սրտի ՚ի մում թագուցի զբանս քո՞նպ
զի մի մեղայց քեզ :
- 3 Օրհնեալ ես դու տէր. և ուստ ինձ զար-
դարութիս քո :
- 4 Շրթամբք իմովք պատմեցից զամ իրա-
ւունս բերանոյ քոյ :
- 5 Օարթս զաչս իմ. և նայեցայց ՚ի սբան-
չելիս օրինաց քոյ :

- 6 'Ի բաց արա յինէն զնախատինս՝ և զսր-
համարանս զի վկայութիս քո խնդրեցի:
- 7 Մերձեցաւ անձն իմ 'ի հող, տէր կեցո
զիս ըստ բանի քում:
- 8 'Ի ճանապարհս արդարուէց քոց իմաստուն
արա զիս, և քննեցից զսքանչելիս քո
- 9 Օ, ճանապարհս մեղաց 'ի բաց արա յի-
նէն, և յօրէնս քո ողորմեաց ինձ:
- 10 Մերձեցայ ես 'ի վկայութիս քո մի մի
յամօթ առներ զիս:
- 11 Օրէնսդէտ արա զիս տէր 'ի ճանապարհս
իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամե-
նայն ժամ:
- 12 Առջնորդեա ինձ, 'ի շաւիղս պատուի-
րանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ:
- 13 Խոնարհեցո զսիրտ իմ 'ի վկայութիս քո
և մի յագահութի:
- 14 'Իարձո զաչս իմ, զի մի տեսից զնան-
րութի. 'ի ճանապարհս քո կեցո զիս:
- 15 Հաստատեա ծառայի քում, զբան քո
յերկիւղ քո:
- 16 Հան յինէն զնախատինս՝ զոր կարծեցի.
զի դատաստանք քո քաղցր են:
- 17 Ահա ցանկացայ պատուիրանաց քոց.
յարդարութե քում կեցո զիս:

- 18 Ակեսցէ 'ի վերայ իմ սղորմուի քո սր.
և փրկութի քո ըստ բանի քում :
- 19 Յիշեցից 'ի գիշերի զանուն քո սր. և
պահեցից զօրէնս քո
- 20 'Ի մէջ գիշերի յարեաց' խոստովան ե-
ղեց առ քեզ՝ վասն իրաւանց և արդա-
րութե քոց :
- 21 Քաղցրես դու տէր. և քաղցրութի քով
ուսս ինձ զարդարութիս քո :
- 22 Տարի է ինձ. զի խոնարհ արարեր զիս
որպէս զի ուսայց զարդարութիս քո :
- 23 Տարիք են ինձ օրէնք բերանոյ քոյ՝
քան զհազարս ոսկոյ և արծաթոյ :
- 24 Ծանեայ սր՝ զի արդարութի են դատա-
տանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս :
- 25 Աղիցի սղորմութի քո՝ ի մխիթարել զիս
ըստ բանի քում զճառայս քո :
- 26 Ակեսցեն յիս զթութիք քո՝ և կեցից.
զի օրենք քո խօսք իմ էին :
- 27 Աղիցի սիրտ իմ ամբիծ յարդարութեն
քում. զի մի ամաչեցից :
- 28 Արօտացաւ անձն իմ 'ի փրկութիս քո.
զի ես 'ի բանս քո յուսացայ :
- 29 Սպասեցին աչք իմ բանի քում. ասա-
ցի՝ երբ մխիթարեսցես զիս :

- 30 Յաւիտեան ես ոչ մոռացայց զարդարուիս
քո. զի նոքոք կեցուցեր զիս :
- 31 Քո եմ ես՝ և կեցո զիս. զի զարդարուիս
քո խնդրեցի :
- 32 Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես
ի բանս քո յուսացայ :
- 33 Ի բաց եղերուք յինչն չարք. և քննե-
ցից զպատուիրանս անոյ իմոյ :
- 34 Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս
և մի յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ :
- 35 Օգնեա ինձ՝ և ապրեցո զիս. և խորհե-
ցայց յիրաւունս քո յամ ժամ :
- 36 Բևերեա ընդ երկիւղ քո զմարմին իմ.
զի ի դատաստանաց քոց երկեաց յուժ :
- 37 Սպասեցին աչք իմ փրկուէ քում ան.
և բանից արդարութե քոյ :
- 38 Արա ընդ ծառայի քում ըստ ողորմուէ
քում. զարդարութիս քո ուսոյ ինձ :
- 39 Ծառայ քո եմ ես իմաստուն արա զիս.
և ծանեայց զվկայութիս քո :
- 40 Նայեաց առիս և ողորմեայ ինձ ըստ՝ ի-
րաւունս սիրողաց անուան քոյ :
- 41 Օ՛ ճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ
բանի քում. և մի տիրեսցեն ինձ ան մեղք :
- 42 Արդտր ես դու տէր. և ուղիղ են դա-
տաստանք քո :

- 43 Նեղութիք և վիշտք գտին զիս. և պատուիրանք քո խոսք իմ էին:
- 44 Արդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լուր ինձ տէր՝ զի զարդարութիւնս քո խնդրեցի:
- 45 Չայնի իմում լուր տէր՝ ըստ ողորմուէքում. յիրաւունս քո կեցո զիս:
- 46 Մերձ ես գու տէր. և ամ ճանապարհք քո ճշմարտութիւնս են:
- 47 Եւ տես զդատաստան իմ, և փրկեա զիս. և ըստ բանի քում կեցո զիս:
- 48 Վթութիք քո բազումք են տէր. ըստ իրաւանց քոց կեցո զիս:
- 49 Օմեղս ատեցից և անարգեցից. և զօրենս քո տէր սիրեցից:
- 50 Եօթնանգամ յաւուր օրհնեցից զքեզ. վասն իրաւանց և արդարութե քում:
- 51 Սպասեցի փրկութե քում տէր. և զպատուիրանս քո սիրեցի:
- 52 Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս:
- 53 Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քով փրկեա զիս:
- 54 Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութի քո յորժամ ուսուսցես ինձ զարդարուիս քո:

- 55 Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ան
պատուիրանք քո արդարութիւնն էն:
- 56 Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի
զպատուիրանս քո ընտրեցի:
- 57 Կանկացայ փրկուե քում տէր. և օրէնք
քո խօսք իմ էին:
- 58 Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզ քեզ. և
իրաւունք քո օգնեսցէն ինձ:
- 59 Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ
խնդրեան զճառայս քո զի զպատուիրանս
քո ես ոչ մոռացայ:
- 60 Օրհնեան անձն իմ զտէր. և ան սակերբ
իմ զանուն սք նորա:
- 61 Օրհնեան անձն իմ զտէր. և մի մոռանար
զան տուրս նորա:
- 62 Որ քաւէ զմեզս քո. բժշկէ զան հիւան-
դութիս քո:
- 63 Որ փրկէ յապականուէ զկեանս քո. պա-
կէ զքեզ ողորմութիւն, և գրթութիւն:
- 64 Որ լնու ՚ի բարութէ զցանկութի քո. նո-
րօգեսցե որպէս արծուոյ մանկութի քո:
- 65 Եռնէ ողորմութիս տէր. և իրաւունս ան
զրկելոց:
- 66 Եցոյց զճանապարհս իւր մօսէսի. և որդո-
ւոցն խօսցէ լի զկամս իւր:

- 97 Պիթած՝ ողորմած է տէր. երկնայնամիտ՝
և բազում ողորմ :
- 68 Ոչ խապառ բարկանայ մեզ տէր. և ոչ
յաւիտեան պահէ ոխս :
- 69 Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ. և ոչ
ըստ անօրենութե մերում հատոյց մեզ :
- 70 Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ.
այնպէս զօրացւոյց տէր զողորմութի իւր
ի վերայ երկիւղածաց իւրոց :
- 71 Որչափ հեռի են արևելք յարևմտից.
այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնու-
թիւնս մեր :
- 72 Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց.
այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր :
- 73 Օ, ի նա գիտաց զստեղծուածս մեր. և
յիշեաց թէ հող եմք :
- 74 Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր.
որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի :
- 75 Շնչէ ՚ի նմա հողմ. և ոչ է. և ոչ ևս
երևի տեղի նորա :
- 76 Իայց ողորմուի ան մնա յաւիտեանս յա-
ւիտենից ՚ի վերայ երկիւղածաց իւրոց. և
արդարութի նորա. յորդոց մինչև յորդիս :
- 77 Ոյք պահեն զուխտս նորա. յիշեն զպատ-
ուիրանս նորա՝ և առնեն զնա :

- 78 Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր.
արքայութի նորա ամենեցուն տիրէ:
- 79 Օրհնեցէք զտէր ամ հրեշտակք նորա
հզօրք զօրութք. ոյք առնեք զքան նորա
'ի լսել ձայնի պատգամաց նորա:
- 80 Օրհնեցէք զտէր ամ զօրութիք նորա՝
պաշտօնեայք և արարողք կամաց նորա:
- 81 Օրհնեցէք զտէր ամ գործք նորա. յամ
տեղիս է տերութի նորա. օրհնեա անձն
իմ զտէր:

Փարբ հօր և որդոյ:

Առն Յովհաննէս Մարգարէի:

Ինեղութե իմում ես առ տէր կարդացի և
լուաւ ինձ ամ. յանդնդոց դժոխոց աղաղա-
կի իմում:

Լուր տէր ձայնի իմում զի ընկեցեր զիս
'ի խորս ծովու. և շրջանք գետոց պաշարե-
ցին զիս:

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին
'ի վերայ իմ. և ասացի թէ մերժեցայ ու-
րեմն յերեսաց աչաց քոց:

Արդ իցէ թէ յաւելից՝ հայիլ 'ի տաճար

սք քո. զի յեղան ջուրք մինչև յանձն իմ.
և անդունդք անյնարինք պաշարեցին զիս:

Եւմուտ գլուխ իմ ընդ փապարս. իջի ես
'ի խորս երկրի. և տեսի ըզ նիգս նոցա զի
էին նոպ աղխք յաւիտենից՝ և ելցեն յապա-
կանութէ կեանք իմ:

Ա. քեզ տէր անձ իմ, ինըուաղիլ անձին
իմոյ կարդացի. և զքեզ տէր յիշեցի. և
մտցեն աղօթք իմ 'ի տաճար սք քո:

Օ. ի ույք պահեն զունայնութի և զստու-
թիւն զողորմութենէ իւրեանց մերժեցան:
Այլ ես 'ի ձայն օրհնութե խոստովան եղեց
քեզ. մատուցից պատարագս տն. և կատա-
րեցից զուխտ իմ 'ի փրկութե:

Այլն: Տոնացի թագաւորէն Իսրայէլացոց:

Տէր ամենակալ անձ՝ աբրահամու՝ իսահա-
կոյ յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց.
ամենակալ տէր թող զմեզս իմ:

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն
զարդ նոցա. ամենակալ տէր:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ.
փակեցեր զխորս. կնքեցեր ահաւոր և փա-
րաւորեալ անուամբ քով. սքով ամենակալ:

Որ ամ ինչ սարսի՛ և դողայ յերեսաց ահի
զօրութե՛ քոյ. ամենակալ :

Անբաւ է մեծ վայելչութի՛ն փառաց սքուե՛
քոյ. և սաստիկ է բարկութի՛ն սպառնալեաց
քոց ՚ի վերայ մեղաւորաց. անչափ և ան-
քննին են ողորմուի՛ն աւետեաց քոց ամենա :

Դու տէր բարձրեալ՝ գթած, երկայնամիտ,
բազում ողորմ. և զղջանաս ՚ի վերայ չա-
րեաց մարդական. ամենա :

Դու ամ՝ ո՛չ եղեր ապաշխարութի՛ն վասն
արդարոցն աբրահամու՝ իսահակայ՝ և յա-
կօբայ, որք ո՛չ մեղան քեզ. ամենակալ :

Այլ եղեր՝ ապաշխարութի՛ն վասն իմ մե-
ղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ
ծովու. և բազմացան անօրենութի՛ն իմ. ա-
մենակալ տէր :

Չեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձ-
րութի՛ս երկնից ՚ի բազմութե՛ն անօրենուե՛
իմոյ. ամենա :

Կորացեալ եմ ես ՚ի բռնութե՛ն կապանաց
երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենա :

Բարկացուցի զսրտմտութի՛ն, և զչար առաջի
քո արարի. կայնդնեցի պատկեր՝ և բազ-
մացուցի զցասումնս. ամենակալ տէր :

Աւարդ՝ տէր խոնարհեցուցանեմ զծունկս

սրտի խնայ, և հայցեմ 'ի քաղցրութենէ
քումմէ. ամենակալ :

Մեղայ տէր մեղայ, և զանօրենուիս իմ ես
ինձեն գիտեմ. ամենա :

Եղաչեմ և խնդրեմ 'ի քէն, թող ինձ ար.
թող ինձ. և մի կորուսաներ զիս ըստ ա-
նօրենութե խնայ. ամենա :

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տէր. և մի
յիշեր զչարիսն իմ, և մի պարտաւորեր
զիս ընդ իջեալս 'ի ներքոյ երկրի չարեօք.
ամենակալ :

Օ՛ ի դու անձ՝ ապաշխարողաց ես՝ և յիս
ցոյց զբարերարութիդ քո զի անարժա-
նեմ ամենա :

Կեցուսցես զի ըստ բազում ողորմութեան
քում. և ես օրհնեցից զքեզ զամ աւուրս
կենաց իմոց. ամենա :

Օ՛ քեզ տէր օրհնեն ամ զուարթունք երկ-
նից. և քո են փարք յաւիտեանս. ամէն :
Փարք հօր և որդւոյ :

Եղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր՝ թող ինձ
ըզ մեղս իմ :

Բազում ողորմ տէր, ողորմեաց ինձ :

Ատուած, քաւեան զիս զմեղաւորս :

Արարիչ իմ և յոյս անձ, գթան յիս 'ի մեղուցեալ ծառայս, և ողորմեան ինձ բազմամեղիս :

Ամենօրհնեալ սրբուհի՛ և միշտ կոյս անձին մարիամ, բարեխօսեան առ տէր վասն իմ մեղաւորիս :

Ամենատուրբբ ան, բարեխօսեցէք առ հայր յերկինս վասն մեր մեղաւորացս :

Քրիստոս որդի անոխակալ՝ ընկալ զաղաչանս իմ. զի 'ի քեզ է ապաւինեալ անձն իմ :

Յաղթող զօրութիւն սք և կենդանար, և պատուական խաչիւ քով անոր պահպանեա զիս :

Առաքեան տէր զհրեշտակ խաղաղութե քոյոր եկեալ պահեսցէ զիս անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի :

Աւ մարդասիրութիւն քո յիշեան զի անոր, յիշեան զիս. յորժամ դաս արքութիւն քով, և ողորմեաց ինձ :

Ք ւ ը ւ շ :

Ակեալս 'ի խոստովանուի՛ ապաշխարուէ հաւատով զյոյս միածնի որդւոյդ ան եղեալ 'ի սիրտս իմ, խնդրեալ 'ի քէն զբաւութի

և զթողուի յանցանաց իմոց: Ասան զի դու
 ինքն ես նախախնամող ան յաւիտենական,
 որ եկիր կամաւ հօր ՚ի փրկել զարարածս.
 և ասացեր զինքդ լինիլ քաւիչ մեղաւորաց
 յոյս ասպաշխարողաց, շնորհելով զհանգիստ
 աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալս
 և զտաժանեալս մեղօք յասպաշխարութիւն
 քաւութեն: Արդ՝ եկեալ և ես խոնարհեալ
 անձամբ, բեկեալ օրտիւ անկեալ լալով ա-
 ռաջի Տեառն արարչիդ իմոյ, զի անցուսցես
 յինէն զցասումն պատուհասի յանցանաց
 իմոց բարերարութիւն քով Ամենակալ տէր
 ան մեր կեցո և ողորմեա:

Ա. Է. Ե. Կ.:

Տէր ան փրկութեն մերոյ՝ որ ողորմածդ ես
 և գթած, երկայնամիտ՝ բազում ողորմ, և
 զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ
 կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նո-
 րա ՚ի չար ճանապարհէն և զկեալն: Մտ
 տէր առատ մարդասիրութիւն քով մխիթա-
 րեա զճառայս քո. և տուր ինձ տեղի ասպաշ-
 խարութե. հաշտեա մարդասիրութիւն քով՝
 և արա՛ զիս անդամս՝ եկեղեցոյ քում սրբոյ:
 Արպէս զի առողջացեալ հոգւով՝ խոստո-

վանութիւնք և ապաշխարութիւնք մտից յեկեղեցի քո սբ: Եւ ընդ ժողովուրդեան քում քեզ հանից զօրհնութիւնք և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր որ:

Առեւ յեկեղեցի քո խոստանալ:

Պահանամ զքէն Տէր իմ և անձ իմ. և օրհնեմ և փառաւորեմ զսուրբ անուն քո. որ պահեցեր զանարժան և զմեղաւոր ծառայս քո ՚ի տունջեանս յայսմիկ. և հասուցեր խաղաղութեամբ ՚ի ժամ երեկոյիս: Եւ այժմ աղաչեմ զքեզ տէր իմ և անձ իմ. որ արարարեր զտիւն ՚ի գործել և զգիշերն ՚ի հանգչիլ տկար բնութես մերոյ. արդ՝ տուր ծառայիս քոյ ննջել մարմնով և մնալ արթուն հոգւով և մտօք:

Տէր իմ և անձ. ահա ես ննջեմ. և անկեալ դնիմ ի սպիտակեանդան. և ոչ գիտեմ զերբ և զորպէս յառնելս իմ, վասն որոյ զհոգիս. զմարմին և զանձ պարագայս իմ յանձնեմ ՚ի յանհուն ողորմութիւն քո. և

խնդրեմ. զի գու ամենազօր աջովդ քո կրն-
 քեսցես զտեղի և զյարկ, զեւ և զմուտ ծա-
 ոայիս քոյ. որով ննջեցից ապահով և աներ-
 կիւղ. խաղաղութք և առանց փորձանաց:
 Պահպանեան զիս յամենից թշնամեաց հո-
 գեկանաց և մարմնականաց՝ և յորոգայիթից
 նոցին. փրկեան զիս յիրէն՝ որ շրջի ՚ի խա-
 ւարի. ՚ի գիշերային երկիւղէս ՚ի դիւական
 ցնորմանց, և ՚ի զարհուրեցուցիչ երևմանց:
 Մաքրեան զմիտս իմ յամենից թիւր մտած-
 մանց, յաղտեղի խորհրդոց և յամ մեղսա-
 ծին շարժմանց: Ապցո պահապան և վերա-
 կացու յանցաւոր ծարայիս քոյ՝ զբանակս երկ-
 նայնոցդ զինուորութեց ընդ իմոյ հրեշտա-
 կին և զնշան ամենայաղթ խաչի քրիստոսիդ.
 որովք ննջեցից ապահով և աներկիւղ ՚ի
 գիշերիս յայսմիկ, և ժամանեցից խաղաղութք
 ՚ի ժամ առաւօտուն. զի և յայնմ ժամու
 փառաւորեցից զհայր և զորդի և զսուրբ հո-
 գիդ՝ որում՝ միշտ վայելե փարք և երկրպա-
 գութի յաւիտեանս յաւիտենից. ամէն:



**Դ ՍԵՔՆԻՆ ԿԵՐԻՆԵՆԷ ԶՆՈՐԿՈՒՆՅԱՆ ԽՈՍՏՈՎՈՒՄ ԻՆ ՎԵՐՄԱՅ
ԿՍՈՆ և ԼՈՐԻՍ ԺՈՏՈՒՄ ԽՈՒՆԵՐ**

1 Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, հայր՝ և որդի՝ և սք հոգի. անեղ և անմահ բնութի. արարիչ հրեշտակաց և մարդական և ամ եղելոց. և ողորմեայ քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

2 Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ անբաժանելի լոյս. միասնական սք երրորդութի. և մի անութի. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հողւոյ իմէ՛ զխաւար մեղաց և անգիտութե. և լուսաւորեա՛ զմիտս իմ՝ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս. և ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ. և ողոր:

3 Հայր երկնաւոր անձ ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին. և և զգեցո՛ ինձ զպատմութեանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛:

4 Որդի ան ան ճշմարիտ, որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն մարիամայ վասն մերոյ փրկութե, խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար ՚ի մեռելոց. և համբարձար ի առօք առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեան զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայուք քով. և ողոր:

5 Հոգի ան ան ճշմարիտ, որ իջեր ՚ի յորդանան և ՚ի վերնա ուռնն. և լուսաւորեցեր զիս մկրտութի սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեան զիս վերստին անձային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողոր:

6 Անեղ բնութի, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեզս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և ողոր:

7 Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ, և գործով. ջնջեան զձեռագիր յանցանաց իմոց, և գրեան զանուն իմ ՚ի դպրութե կենաց. և ողոր:

8 Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութի և անգիտութի, թողուի շնորհեան մեղաւորիս. զի ՚ի ծննդենէ

սուրբ աւագանին մինչև ցայսօր մեղուցեալ
եմ առաջի աստուածութեանդ քո՛ զգայա-
րանօք իմովք, և ամենայն անգամք մարմ-
նոյս. և ողոր:

9 Ամենախնամ տէր, դիր պահապան ա-
չաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել
յարատ. և ականջաց իմոց ոչ ախորժեւ լսել
զբանս չարութե՛. և բերանոյ իմոյ ոչ խօսիլ
զստութի՛. և սրտի իմոյ ոչ խորհիլ զչարութի՛.
և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութի՛. և
ոտից իմոց ոչ գնալ ՚ի ճանապարհս անօ-
րէնութե՛. այլ ուղղեա՛ն զչարժումնս սոցա լի-
նիլ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և
ողոր:

10 Հո՛ւր կենդանի քս, զհուր սիրոյ քոյ,
զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ն յանձն իմ.
զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ
զխիղճ մտաց իմոց. և մաքրեսցէ զմեղս մար-
մնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութե՛ քո ՚ի
օրտի իմում. և ողոր:

11 Իմաստութի՛ հօր ցո՛ր ցո՛ր, տուր ինձ զիմաս-
տութի՛ զբարիս խորհիլ և խօսիլ և գործել
առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհր-
դոց ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ն զիս. և
ողորմեա՛ն:

12 Կամեցօ՛ղ բարեաց տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ն ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր:

13 Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո զորխոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ զսիրտ իմ՝ ատել զմեղս և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողոր:

14 Խնամօ՛ղ արարածոց՝ պահեա՛ն նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ՝ 'ի պատրանաց մեղաց, 'ի փորձուեց դիւաց՝ և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողոր:

15 Պահապան ամենայնի քս, աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ՝ 'ի տուէ և 'ի գիշերի՝ 'ի նստիլ 'ի տան՝ 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի երբէք սասանեցայց. և ողոր:

16 Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և ընուս զամենայն արարածս ողորմուի քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ն և պատրաստեա՛ն զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ՛հետէ մինչև յաւիտեան. և ողոր:

17 Իարձուցի՛ց մոլորելոց՝ դարձո՛ զիս 'ի չար սովորութեց իմոց 'ի բարի սովորութի՛ն.

և բևեռեա՛ն հողի իմ՝ զոսկալի օր մահուն, և զերկիր զեհենոյն, և զսէր արքայութեն. զի զղջացայց ՚ի մեղաց, և գործեցից զարդարութի. և ողոր:

18 Աղբիւր անմահունէ՛ աղբերացո՛ ՚ի սրտէ իմմէ՛ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զեւանելն իմ՝ յաշխարհէս. և ողոր:

19 Պարգևի՛ց ողորմունէ՛ պարգևեա՛ն ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սքմարմնոյ և արեան քո հաղորդութի գալ առ քեզ. և ողոր:

20 Բարերար տէր, հրեշտակի բարւոյ յանձրն արասցես զիս քաղցրութի աւանդել զհողի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութի այսոցն, որք են ՚ի ներքոյ երկնից. և՛:

21 Ա՛յոս ճշմարիտ քո, արժանաւորեա՛ն զհողի իմ՝ ուրախութի տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն. և հանգչիլ յուսով բարեաց յօթեանս արդարոց մինչև յօրմեծի գալստեան քո. և ողոր:

22 Բատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա՛ զիս ՚ի յաւիտենական հրոյն. և

Լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդա-
րոց յերկնից արքայութիդ. և ողոր:

23 Ամէնողորմ տէր՝ ողորմեա՛ն ամենայն
հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց, ծա-
նօթից և անծանօթից, կենդանեաց և մեռե-
լոց. շնորհեա՛ն և թշնամեաց իմոց և ատե-
լեաց զթողութիւն, որ առիս յանցանաց. և
դարձո՛ զնոսա ՚ի չարեացն՝ զոր ունին վասն
իմ. զի ողորմուէ քում արժանի եղիցին. և՛:

24 Փառաւորեալ տէր ընկալ զաղաքանս
ծառայիս քո. և կատարեա՛ն ՚ի բարի զխնդ-
րուածս իմ. բարեխօսութիւն սրբուհւոյ Աս-
տուածածնին և Յովհաննու մկրտչին. և սքն
Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրի-
գորի մերոյ լուսաւորչին, և սրբոց Առաքե-
լոց, Սարգսարէից, Վարդապետաց, Մարտի-
րոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կու-
սանաց, Միանձանց. և ամենայն սքն քոց
երկնաւորաց և երկրաւորաց: Աւ քեզ փառք
և երկրպագութիւն անպաժանելի սքն Երրոր-
դութեդ՝ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Մնկանիմ առաջի քո սք անձաժին և աղա-
 քեմ զանարատ զկոյսդ . բարեխօսեա վասն
 անձին իմոյ , և աղաքեան զմիածին որդիդ .
 փրկել զիս ՚ի փորձութէ և յամ վտանգից
 իմոց : Որ արձանիչդ ես կապելոց պարգևա-
 տու ամենեցուն , այսօր հայցմամբ ձերունւոյն
 արձակեան և զիս զբազմամեղս ՚ի կապանաց
 մահու ՚ի կեանս յաւիտենից :

Օ սաղմոսերգութիւնս՝ զաղօթս և զաղա-
 քանս՝ ընկալ մարդասեր անձ՝ ՚ի հաճոյս բա-
 րերար կամաց քոց . մեղաց և յանցանաց
 իմոց՝ թողութի շնորհեա . ՚ի չարեաց և ՚ի
 փորձութէ մարդկան՝ և յորոգայթից սատա-
 նայի փրկեա և ազատեա . կենդանեացն մե-
 րոց՝ առաքինութք և արդարութք պահպա-
 նեա , ննջեցելոց մերոց հանգիստ և երկնից
 զարբաութիւն պարգևեա . և քեզ փարբ և
 երկրպագութի հօր և որդոյ՝ և հօգւոյն սքյ .
 ամէն :

Հայիր մեր որ յեր :

Շնորհօք Աբ շողոյն զգուշաւոր տպագրութիւն յանկելեալ աւարտեցաւ Գիրքս աղօթից յամսեանն յուլիսի 'ի 1842 ամի Փրկչին: Ապաքէն աղաչեմ 'ի վայելողաց պար մատենիս յիշատակել 'ի մաքուր աղօթքս ձեր զհանդուցեալ ծնողսն իմ՝ զհայրն իմ Առաքել, զմայրն իմ Մարիամ և զեղբայրն իմ զՄարգար, զվախճանեալն յերիտասարդական հասակի իւրում: Աւղուք յիշեալ լիջիք 'ի Տեառնէ Այ մերմէ. ամէն:

Վ. Ա. Խ Ճ Ա Ն :

Պ 1761 Գ ՊՊՆԻԿՎԱՏՈ

